

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱԴԵՍԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA

Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА
H. ACHARYAN INSTITUTE OF LANGUAGE

ԼԵԶՈՒ

ԵՎ


ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

•

ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ
LANGUAGE AND LINGUISTICS

2(25)

2021



ԵՐԵՎԱՆ • ЕРЕВАН • YEREVAN

Հանդեսի հիմնադիրն է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտը:
Լույս է տեսնում 2003 թ., տարին երկու անգամ:

Գլխավոր խմբագիր Համբարձումյան Վ. Գ.

Խմբագրական խորհուրդ

Ավետիսյան Յու. Ս., Բարլեզիզյան Ա. Կ., Բրուտյան Լ. Գ., Գալստյան Ա. Ս. (գլխավոր խմբագրի տեղակալ), Թրագուտ Յ. (Ավստրիա), Խաչատրյան Գ. Վ., Կատվալյան Վ. Լ., Կորտլանդտ Ֆ. (Նիդերլանդներ), Հովհաննիսյան Լ. Շ., Սոհամմադի Մ. Մ. (Իրան), Պետրոսյան Վ. Զ., Սարգսյան Ա. Ե., Սարգսյան Մ. Ա. (պատասխանատու քարտուղար), Սաքայան Դ. Գ., (Կանադա), Սիմոնյան Ն. Մ. (գլխավոր խմբագրի տեղակալ), Տեր-Մերկերյան Ռ. (Ֆրանսիա), Տոնապետյան-Դեմոպուլոս Ա. (Ֆրանսիա):

Главный редактор Амбарцумян В. Г.

Редакционная коллегия

Аветисян Ю. С., Барлезизян А. К., Брутян Л. Г., Галстян А. С. (заместитель главного редактора), Катвалян В. Л., Кортландт Ф. (Нидерланды), Мохаммади М. М. (ИРИ), Оганесян Л. Ш., Петросян В. З., Сакаян Д. Г. (Канада), Саргсян А. Е., Саргсян М. А. (ответственный секретарь), Симонян Н. М. (заместитель главного редактора), Тер-Меркерыан Р. (Франция), Тонапетян-Демопулус (Франция), Трагут Я. (Австрия), Хачатрян Г. К.

Chief Editor Hambardzumyan V. G.

Editorial Board

Avetisyan Yu. S., Barlezizyan A. K., Brutyan L. G., Donabédian-Demopoulos A. (France), Galstyan A. S. (deputy chiefeditor), Hovhannisyan L. Sh., Katvalyan V. L., Khachatryan G. K., Kortlandt F. (Netherlands), Mohammadi M. M. (Iran), Petrosyan V. Z., Sakayan D. G. (Canada), Sargsyan A. E., Sargsyan M. A. (editorial secretary), Simonyan N. M. (deputy chief editor), Ter-Merkeryan R. (France), Tragut J. (Austria).

ISSN 1829-0183

© Լեզու և լեզվաբանություն

© ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատարակչություն 2021

ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ
ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Բանասիր. գիտ. թեկնածու Ա. Ս. Գալստյան

Հիմնաբառեր: Նորակազմություն, բառային տարբերակներ, իմաստային խումբ, գունանվանումներ:

Նոր հասկացությունները, իրերը, սարքերը, սարքավորումները, նորաստեղծ ոլորտները անվանելու համար ժամանակի ընթացքում լեզվում կարող են ստեղծվել մեկից ավելի բառեր, մի քանի տարբերակներ՝ թարգմանիչների, բառարանագիրների, լրագրողների, գրողների, բառաստեղծման հակում դրսևորող այլևայլ մասնագետների կողմից: Դրանց գործածության ժամկետը շատ տարբեր կարող է լինել: Ի վերջո, լեզվում հաստատվում, ամրագրվում է առաջարկվող տարբերակներից մեկնումեկը:

Է. Աղայանը որպես նորաբանական բազմազանության օրինակ բերում է *зажигалка* բառի դիմաց հայերենում գործածված հետևյալ բառախումբը. «*Լուցիչ – հրահան- հրահար – հրատուփ – ինքնավառիչ – վառիչ – կրակվառիչ – ինքնալույց – կայծահան կայծավառ*»¹: Աղայանը որպես բազմանունների օրինակ բերում է *փռշեծծիչ – փռշեծուծ – փռշեհավաք* բառերը: Նշենք, որ այժմ գործածվում է նաև *փռշեկուլ*-ը:

Ստեղծված մի քանի համանիշներից ժամանակի ընթացքում ընդհանրանում, ամրակայվում է մեկը: Լեզվաբանության մեջ ուսումնասիրվում են նաև նոր բառի ամրակայման, բազմանուններից որևէ մեկի ընդհանրացման պատճառներն ու յուրահատկությունները, համագործածական բառապաշարի մեջ ընդգրկվելու պայ-

¹ Է. Բ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 153:

մաններն ու հանգամանքները: Նշվում են, օրինակ, այնպիսի հատկանիշներ, ինչպիսին են բառի բարեհնչությունը, շատ երկար չլինելը, հնչյունական կազմի՝ անհարմար, անպատշաճ գուգորդություններից զերծ լինելը, գործածության մեջ մտած նոր բառի բառակազմական հնարավորությունները, բառապաշարի եղած բառային միավորների հետ հարանունության բացառումը (շփոթությունից խուսափելու նպատակով), բաղադրյալ բառի բաղադրամասերի՝ հանրության համար հասկանալի լինելը, լեզվական ավանդույթը և այլն:

Հանրահայտ են, օրինակ, Վ. Տերյանի՝ «Հայ գրականության գալիք օրը» զեկուցման մեջ արտահայտած մտքերը: Նա կարծում էր, որ *վերարկու*, *վառարան*, *հեծանիվ* բառերը երբևէ հայերենում չեն կարող գործածական դառնալ և դուրս մղել *պալտո*, *փեչ*, *վելոսիպեդ* բառերին:

Տերյանը, որ խոսքի մեծ վարպետ էր, խոշոր գեղագետ և արևելահայ բանաստեղծական լեզվի ուղենիշներից մեկը, որի բանաստեղծական խոսքում գտնում ենք հայերենի նախադասության կառուցվածքն արտահայտող (և՛ բարդ, և՛ պարզ նախադասության) դասական դիպուկ օրինակներ, բառընտրության այս դեպքում (*վերարկու* – *պալտո* և այլն) վրիպում է. նրա կանխատեսման հակառակ՝ *վերարկու*, *հեծանիվ*, *վառարան* բառերը դարձել են մեր առօրյա խոսքի ամենօրյա միավորներ²:

Այսպիսով, միշտ չէ, որ բազմանուններից որևէ մեկի ընդհանրանալու, համագործածական բառ դառնալու հեռանկարի կանխատեսումները ստույգ են լինում:

Է. Աղայանը գրում է, որ «...հարկ է լինում այլ լեզուների բառերի ու տերմինների դիմաց կերտել հայակազմ համապատասխանները կամ էլ պարզապես նոր հասկացությունների, գործիքների և այլնի համար նոր բառեր ստեղծել: Բառարաններում այդ-

² Այդ կանխատեսման պատճառներից էր գուցե մանկության տարիներին նրա լսած բարբառային խոսքում *փեչ*, *պալտո*, *վելոսիպեդ* բառերի սովորական գործածությունը:

պիսին դեպքերում գերադասում են հանձնարարել մեկից ավելի բառեր, որպեսզի դրանցից մեկն ու մեկը ընտրեն և գործածեն»³:

Նոր տերմինների ստեղծման ժամանակ մինչև հայերեն հաջող տարբերակ գտնելը և գործածելը հաճախ կիրառվում է օտար բառը: Հետաքրքիր է, թե ինչ ուղի կարող է անցնել նոր բառը, որևէ օտար բառի (առաջ հիմնականում ռուսերեն, այժմ նաև անգլերեն) հայերեն համապատասխան տարբերակը: Ռուս. *кондиционер* բառի համար «Ռուս – հայերեն պոլիտեխնիկական բառարանը» (Ե., 1988) առաջարկում է *կոնդիցիոներ*, *օդի լավորակիչ*. բերվում են օրինակները՝ *ինքնավար կ.*, *կենցաղային կ.*, *օդային կ.*, *հատակի կ.*, *պատի կ.*, *ոչ ինքնավար կ.*, *լուսամուտի կ.* և այլն: Ֆ. Խլղաթյանի բառարան-տեղեկատուում առկա է *օդաորակավորիչ* բառը, որի բացատրությունն է «օդի խոնավությունը կարգավորող սարք». բառագործածության օրինակը բերված է «Սովետական Հայաստան» լրագրի 1980 թ. 164 համարից. «Այդ նուրբ ապարատների հավաքման արտադրամասում *օդաորակավորիչները* օդից ներծծում են գրեթե ամբողջ խոնավությունը»: Այսօր տարածված *օդորակիչը* փնտրվեց, գտնվեց. բառի որոնումը տվեց իր արդյունքը: Ի դեպ, «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» առկա են *օդարկել* [«թարմ օդի ներգործության ենթարկել (սենյակ, հյուսվածքեղեն)»] և *օդարկիչ* («օդարկելու հարմարանք, սարք») բառերը: Այս վերջինը, մեր համոզմամբ, ավելի հարմար կլինի գործածել *օդորակիչ* իմաստով, թեև առայժմ չի անցել գործուն բառապաշարին:

Բազմանունության երևույթը քննենք նաև *մենթալիստես* բառի գործածության օրինակով: Բացատրական բառարաններում արձանագրված են՝ *կենսակերտվածք* (ԱՀԲԲ, ԺՀԼԲԲ), *կենսակառույց* (ԱՀԲԲ)⁴, *կենսակառուցում* (ԱՀԲԲ), *կենսակերպ* (ԱՀԲԲ, ԺՀԼԲԲ), *կենսաձև* (ԱՀԲԲ, ԺՀԼԲԲ), *մտածելակերպ* (ԱՀԲԲ, ԺՀԼԲԲ), *մտածելաձև* (ԺՀԼԲԲ):

³ *Էդ. Բ. Սդայան*, նշվ. աշխ., էջ 153:

⁴ Բառարանում նշվում է որպես ածական. ունի նաև գոյականական կիրառություն:

Ս. Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարանում» (Ե., 2002) վկայված են *հոգեկերտվածք, մտախառնվածք, մտակերտվածք, մտակեցվածք, մտակառույց* նորակազմ բառերը: Հ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարանում» (Ե., 1973) առկա է *կենսակարգ* կազմությունը:

Մենթալիտետի նշանակությամբ ստեղծված բառերից «Նոր բառեր» գրքում (պրակ Ա-Զ, Ե., 2015-2021) բառարանագրված են մի շարք բառեր, որոնք մեջբերում ենք բնագրային օրինակներով՝ ցուցադրելու համար դրանց իմաստային նրբերանգները: Այդ գրքի Ա պրակից նշենք հետևյալ օրինակները: «Ամեն ազգ իր ձևով, ոճով, իր կերպով *հոգեդրսևորում* ունի, մարմնացում իր ապրումների ու մտածումների, իր տեսիլների և իրեն հատուկ աշխարհապատկերման» (Նոր բառեր, Ա պրակ, էջ 123): Այսպես, «Նոր տարի» պատմվածքի տղայի պատանեկան *հոգեկառույցը* բարձրանում է *ես*-ը ընտանիք-գյուղի հանրույթ պարտադրանքների...» (ԳԹ, 21.03.2014): Նույն գրքի Բ պրակում բառարանագրվել են *կենսակառուցվածք, հոգենկարագիր, հոգեմտածողություն, մտահենք* նորակազմ բառերը՝ հետևյալ բնագրային վկայություններով. «Ես ճանաչում եմ միայն մեկին, փոխարենը՝ շատ մոտիկից, ի դեմս իմ քենու, որի ապստամբությունը հայկական *կենսակառուցվածքի* դեմ գիտակցական ու երկարատև էր» (Արտ. գրակ., թ. 3, 2016, էջ 49): «Ընդգրկուն էր նրա գործունեության ծիրը, որը վկայում է հայ և լիտվացի ժողովուրդների դարավոր բարեկամությունը, *հոգենկարագրի* և *մտախառնվածքի* ընդհանրությունը» (ԳԹ, 22. 04. 2016): «Հարատևությունը մե՛նք պետք է ապահովենք՝ մեր ինքնության առանձնահատկությունները ներկայացնող մշակույթով, *հոգեմտածողությամբ*, ավանդներով, ծեսերով, ծիսակարգերով» (ԳԹ, 08. 05.2015): «Ինձ, անկեղծ ասեմ, ուղղակի հիասթափեցրել էր այն գավառական *մտահենքը*, որ իշխող էր դարձել պանդոկների և վաճառատների ինտերիերները ձևավորելիս» (Իր., 17. 06. 2016):

«Ապրելակերպ, նիստուկաց» իմաստով Աղասի Այվազյանը գործածել է *կեցույթ* բառը. «Երկուսով միասին հաճոյանում էին Մարթային, իրենց *կեցույթով*, ամեն ինչով խնդրում գոնե մի պտղունց սեփական կյանքի, ցանկության իրավունք» (ԱԱ, ԸԵ, էջ 83) (տե՛ս «Նոր բառեր», Գ պրակ): Այս գրքի Դ պրակում բառարանագրված են *հոգեխառնվածք, մտահայեցակարգ* նորաստեղծ բառերը. «Ավելի հոգևոր *հոգեխառնվածքի* տեր մարդիկ էլ կասկած չունեն, որ երկրի (ու նրա ժողովրդի) քաղաքական մակարդակը որոշվում է սրբավայրերի գոյակերպով» (Իր., 21. 04. 2017): «Ակնկալիքների մաքսիմալիզմ: Սա հայ հանրույթի *մտահայեցակարգի* հիմնական բնութագրերից է» (Հմց):

Կ. Ռաֆայելյանի հոդվածում նույն իմաստով առկա է *խտատիպ* բառը. «2015-ին Բեյրութի «Հայկազեան հայագիտական հանդես»-ում լույս է տեսել մեր՝ «Հայի *խտատիպի* մի քանի դրսևորումներ Դ. Դեմիրճյանի «Հայը» խոհագրության խոհապատկերին» վերնագրով հոդվածը» (ԳԹ, 02. 07. 2021):

Այսպիսով, *մենթալիտետ* նշանակությամբ երկու տասնյակից ավելի նորակազմ հայերեն բառերը կազմված են *կենս-* (*կեց-*), *մտ-*, *հոգե-*, *գոյ-* արմատներով: Այսօր կարծես թե ընդհանրանալու միտում է դրսևորում *հոգեկերտվածքը*:

Մեկ այլ օրինակ: *Էնդոկրինոլոգ, էնդոկրինոլոգիա* օտար բառերը շատ երկար գործածվում էին: Հայերեն տարբերակի որոնումը նկատվում է տարբեր բառարաններում, հոդվածներում: Հ. Բարսեղյանի հիշյալ բառարանում առկա են *ներքնածորաբան, ներքնածորաբանություն* բառերը: ԱՀԲԲ-ում *էնդոկրինոլոգիա* բացատրվում է որպես «ուսմունք ներզատիչ գեղձերի մասին»: «Հայոց լեզվի ուղեցույց»-ում (Ե., 2017) գրանցված են *ներզատաբան, ներզատաբանություն* բառերը: Կարծում ենք՝ այդ բառերը կընդհանրանան: Հ. Այնթապյանի և Ա. Սարգսյանի «Անհարկի յաճախակի գործածուող օտար բառերու հայերեն համարժեքներու բառարանում» (Ե., 2018) *էնդոկրին, էնդոկրինոլոգ* բառերի դիմաց առաջարկվում են *ներզեղձաբան, ներզեղձաբանություն* բառերը:

Օտար բառի դիմաց հայերեն համարժեքի գործածությունը ժամանակին կանոնարկվել է տերմինաբանական կոմիտեի որոշումներով: Միշտ չէ, որ այդ որոշումները իրագործվել են: Այսպես, մի շարք տերմինների գուգահեռ ձևերի գործածության միասնականացման մասին տերմինաբանական կոմիտեի որոշմամբ *տուրիզմ*, *զբոսաշրջ(իկ)ություն* բառազույգից առաջարկվել է նախապատվությունը տալ *տուրիզմ* բառին⁵: Այնինչ հայերեն *զբոսաշրջություն* ստարբերակը ընդհանրացել է և հաջողությամբ գործածվում է:

Նորաբանությունների կազմը համալրվում է ոչ միայն ոչ գործուն բառաթերքի գործունացմամբ, այլև լեզվի ներունակ (պոտենցիալ) բառապաշարի ակտիվացմամբ: «Լեզվաբանական բառարանի» «*պոտենցիալ բառապաշար*» բառահոդվածում նշվում է. «Հնարավոր, բայց իրական վկայություն չունեցող բառերը որևէ լեզվում: Դրանց շարքին կարելի է դասել այն բառերը, հիմնականում բարդ և ածանցավոր, որոնք հնարավոր է կազմել և շարունակ կազմվում են տվյալ լեզվի բառակազմական օրենքներով»⁶:

Արդի հայերենի բառապաշարում ներունակ կամ պոտենցիալ բառերի ստեղծումը ներկայացնենք գունանունների իմաստային դաշտին վերաբերող բառային նորաստեղծ միավորների դիտարկմամբ:

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում լույս տեսնող «Նոր բառեր» գրքի պրակներում բառարանագրված գունանունների առավել մանրամասն իմաստաբանական քննությունից ակնհայտ է, որ դրանք ստեղծվում են հայերենի բառաստեղծման կանոններով: Հաճախադեպ են – *գույն* ածանցակերպով բաղադրությունները՝ *բորբոսագույն, եղյամագույն, կարագագույն, ցեխագույն, բնեկնագույն, թեյագույն, կարտոֆիլագույն, մամխագույն, մամռագույն, շիճուկագույն, սոճեգույն, կեռասագույն, սովերագույն, սերուցքագույն, սոխագույն, քարագույն, նարդոսագույն*: - *Երանգ* բաղադրիչով

⁵ Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Ե., 1984, էջ 108:

⁶ Հ. Զ. Պետրոսյան, Մ.Ա.Գալստյան. Թ. Ա. Ղարազույրյան, Լեզվաբանական բառարան, Ե., 1975, էջ 262:

կազմված են՝ *կենսասերանգ, երկններանգ, կավձերանգ, -թույր-ով գինեթույր*: Վերը նշված գունանվանումների բառակազմական հիմքերը, նկատենք, կազմված են ծաղկանուններից (*նարդոսագույն*), մրգանուններից, հատապտղանուններից (*կենսասագույն, մամխասագույն*), բանջարեղենի անուններից (*սոխագույն, կարտոֆիլագույն*), ծառանուններից (*սռճեգույն*), բնությանը վերաբերող անվանումներից (*ցեխագույն, բնեկնագույն, բորբոսագույն, շիճուկագույն, եղյամագույն, քարագույն*), ուտելիղենի և ըմպելիքների անվանումներից (*կարագագույն, թեյագույն, սերուցքագույն*)⁷:

Ներկայացնենք ևս մեկ կառույց. *երկաթագորշ, կապարագորշ, ծխագորշ, մարգարտագորշ, կավձասպիտակ, շուշանաձերմակ, փրփրաձերմակ, վարդաձերմակ, կաղնեկարմիր, դարչնակարմիր, ճահճաղեղին, մեղրաղեղին, ժանգաղեղին, ցորնաղեղին*:

Նշված գունանվանումների կազմության ներքին ձևը հետևյալն է. բաղադրության երկրորդ անդամը կազմությամբ պարզ գունանուն է, իսկ առաջին անդամը մասնավորեցնում է նրա արտահայտած իմաստը, կոնկրետացնում, ընդգծում է այն: Այսպես, *ղեղին* գունանուն պարունակող *մեղրաղեղին, ճահճաղեղին, ժանգաղեղին, ցորնաղեղին* օրինակները նշանակում են *մեղրի, ճահճի, ժանգի* կամ *ցորենի* դեղնություն ունեցող: *Երկաթագորշ, կապարագորշ, ծխագորշ, մարգարտագորշ* գունանվանումները նշանակում են համապատասխանաբար *երկաթի, կապարի, ծխի, մարգարտի* գորշություն ունեցող: Գունանվանումների ընկալման այս հայեցակարգը կարևոր է լեզվից լեզու կատարվող թարգմանությունների ժամանակ: Այստեղ ի հայտ են գալիս ժողովրդի աշխարհընկալման մշակութաբանական շերտերը, ավանդույթը, գույների ըմբռնման առանձնահատկությունները: Գունանվանումների գուգադրական վերլուծության արդյունքները հետաքրքիր նյութ են մատակարարում ազգային հոգեբանական, գուգադրական բառագիտական ուսումնասիրության, հոգելեզվաբանական հետազոտություններին:

⁷ Տե՛ս Ա. Ս. Գալստյան, Ժամանակակից հայոց լեզու. բառապաշար. գործնական աշխատանքներ, Ե., 2010, էջ 9-13:

Այսպես, *Ճերմակականաչ, գորշակարմիր, սպիտակականաչ, կապտափիրուզ, կանաչակապույտ, Ճերմակադեղին* բաղադրություններում առկա է երկու պարզ գունանվանում՝ առանց *-գույն* նշանակող որևէ ածանցի կամ ածանցակերպի: Նույն տիպի ավելի հաճախ հանդիպող կառույց են *-գույն* և *-ավուն* բաղադրամասերով կազմությունները.

1) *-(Ա)գույն* մասնիկով նշենք հետևյալ կազմությունները. *կաթնառուկեգույն, կապտառուկեգույն, կաթնավարդագույն, կարմրասրճագույն, մոխրադարչնագույն, մոխրաշագանակագույն, սպիտակամոխրագույն, մոխրաերկնագույն, կանաչամոխրագույն, դեղնաերկնագույն*:

2) *-(Ա)վուն* ածանցով նորակազմ գունանուններից նշենք մի քանիսը. *ռուկեդեղնավուն, կապտաարծաթավուն, վարդաարծաթավուն, գորշամոխրավուն, գորշասևավուն, կարմրագորշավուն, կանաչասպիտակավուն, կանաչաարծաթավուն, նարնջադեղնավուն, ժանգակարմրավուն, գորշամոխրավուն, սպիտակակարմրավուն, վարդականաչավուն, կինամոնականաչավուն, կապտաճերմակավուն, կապտասպիտակավուն, սևականաչավուն*:

Բառաստեղծման օրինաչափությունների, հնչյունափոխական, հոդակապով և այլ բառատարբերակների ուսումնասիրությունը կարող է կատարվել նաև այլ իմաստային (թեմատիկ) խմբերի ընդգրկումով (օրինակ, մասնագիտությունների անվանումներ, մարզաշխարհի տերմիններ, ՏՏ ոլորտի բառապաշար և այլն):

Համառոտագրություններ

Արտ. գրակ. – «Արտասահմանյան գրականություն»:

Իր. – «Իրատես» (լրագիր):

ԳԹ – «Գրական թերթ» (լրագիր):

ԱՀԲԲ - Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., «Հայաստան» հրատ., 1976 :

ԺՀԼԲԲ – Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969- 1980;

ՏՏ – տեղեկատվական տեխնոլոգիաներ:

Ключевые слова: новообразование, лексические варианты, тематическая группа, цветонаименование.

А. С. Галстян - Вопросы семантического исследования новых слов.- В статье рассматриваются особенности внутрисистемного и внеязыкового процесса образования новых слов в современном армянском языке. Для языкового обозначения новых понятий часто предлагаются несколько вариантов слов, из которых с течением времени выбираются и входят в основной словарный фонд языка те, которые соответствуют нужным критериям. Анализируются процесс употребления вариантов слов *օդորակիչ* [odorakičʰ] “кондиционер”, *հոգեկերպիւծք* [hokekervackʰ] “менталитет”, *ներզատան* [nerzataban] “эндокринолог”, а также особенности образования новых слов тематической группы цветонаименований.

Keywords: new formation, lexical variants, thematic group, color-naming.

A. S. Galstyan - Issues of Semasiological Study of New Words.- The article deals with the peculiarities of the intrasystem and extra-linguistic process of formation of new words in the modern Armenian language. For the linguistic denotation of new concepts several variants of words are often proposed, from which over time those that meet the necessary criteria are selected and included in the acquisitive vocabulary of the language. The process of using the variants of the words *օդորակիչ* [odorakičʰ] "conditioner", *հոգեկերպիւծք* [hokekervackʰ] "mentality", *ներզատան* [nerzataban] "endocrinologist", as well as the features of formation of new words of thematic group of color-names are analyzed.

**ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ «ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ» ՎԵՊԻ
ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ
Բանասիր. գիտ. դոկտոր Ա. Վ. Գալստյան**

Հիմնաբառեր: Լեզու և ոճ, հեղինակային խոսք, դիմանկար, տեղանուն, գունանուն, երկարժեք բառեր, կրոնակեղեցական բառային միավորներ, համեմատություններ:

Յուրաքանչյուր գրող ունի իր նվիրական անունը ժողովրդի պատմության մեջ: Ա. Բակունցի համար հայ ժողովրդի պատմության ամենագրավիչ կերպարը Խաչատուր Աբովյանն է, որի մասին նա ասում է. «Հիանալի ֆիգուրա՝ ոչ միայն իր գրական նշանակությամբ, այլև իր կյանքով»: Մեծ խորհուրդ է պարունակում այն փաստը, որ Բակունցի ստեղծագործության կարապի երգը եղավ «Խաչատուր Աբովյան» անավարտ վեպը: Վեպից պահպանված հատվածներն առաջին անգամ մամուլում հրատարակվել են 1934-1935թթ. («Գրական թերթում» և «Խորհրդային գրականություն» հանդեսում):

Ա. Բակունցը լրիվ պահպանել է իր գրվածքի փաստական նախասկիզբը, դեպքերի, տեղանունների, անձնանունների ուսանողական շարժումների վավերականությունը, երևակայությամբ չի հնարել ոչ մի դեպք, ոչ մի դրվագ: Նա հավատարիմ է մնացել սկզբնաղբյուրներին: Պատմական և լեզվական կոլորիտի պահպանման համար Բակունցը պեղում էր ժամանակի գրավոր լեզուն և գտնում հարմար ու արտահայտիչ բառաձևեր, պատրաստի բանաձևումներ:

Վեպի հեղինակային խոսքի բազմազան շերտերից է դիմանկարը: Ա. Բակունցը Խ. Աբովյանի դիմանկարը կերտում է նուրբ դիտողականությամբ և յուրահատուկ մեթոդով. «Արմենիերն Աբովյանն էր: Դորբատում նրան այդպես անվանեցին այն օրից, երբ բնակիչները քաղաքի փողոցներում տեսան նրա օտարոտի դեմքը, հարավի մարդու վառվռուն և մեծ աչքերը և մանավանդ հայ դպիրի կապան և ջիբրուն, որ նա առաջին օրերը հագնում էր Պարբոտի

տուն գնալիս» (էջ 290)¹: Դիմանկարը տեղ-տեղ ամբողջանում է արտաքին նկարագրությամբ. «Արմենիերը գունատ էր: Նրա թավ արտևանունքները շղարշի նման ծածկել էին աչքերը: Կարծես ննջում էր: Ապա նա գլուխը ցնցեց և նայեց պարզ աչքերով» (էջ 317):

Ինչպես նշում է Լ. Եզեկյանը, «հերոսների անհատականացումը... սկսվում է նրանց արտաքինի նկարագրությամբ, երբ հեղինակը, օգտագործելով յուրաքանչյուր հերոսի համար յուրահատուկ մակդիրներ ու համեմատություններ, ստեղծում է նրանց դիմանկարը և ապա դրան համապատասխան բացահայտում նրանց ներքինը, որի հետ և կապվում են այդ հերոսների վարքագիծը, հոգեբանությունը հետագա գործողությունները»²:

Դիմանկարին զուգահեռ ներկայացվում է նաև հայոց լեզվի հմայքը. «Երբ հարցնեին նրա տան կենվորի մասին, նա երգելով ասում էր. «Ի՛նչ կենվոր, աստված իմ ... Իսկական սուրբ: Ծոմ է պահում, գիշեր-ցերեկ կարդում է և իրենց լեզվով աղոթում է... Եվ ինչպե՛ս է աղոթում, այդ ինչ ձայն է, ինչ լեզու է: Թեև չեմ հասկանում, բայց հավատում եմ, որ սրբազան լեզու է... Իմ ամուսինն ասում է, որ նրանց լեզուն աշխարհի առաջին լեզուն է. նրանց լեզվով է խոսել Նոյը, հենց որ սարից իջել է: Ահա թե ինչ լեզվով է խոսում...»» (էջ 291): Վեպում կերպարագծվում է նաև Ֆրիդրիխ Պարրոտի դիմանկարը. «Նիհար և ցամաք երեսով մի կարճահասակ մարդ» (էջ 293):

Գեղարվեստական երկի առաջին էջերից հետաքրքիր դրսևորումներ են արձանագրվել հատուկ անունների գործածության առումով: «Խաչատուր Աբովյան» վեպում առատ գործածված են տեղանուններ՝ քաղաքների, փողոցների, կամուրջների անուններ, եկեղեցիների և վանքերի, համալսարանների անուններ, ինչպես նաև անձնանուններ, ազգանուններ և այլն: Օր.՝ *Սուրբ Իոհաննի տաճար, Դորբասի արքայական համալսարան, Գուստավ Ադոլֆ*

¹ *Ակսել Բակունց*, Երկեր 4 հատորով, հ. 3, Ե., 1982, էջ 290: Մեջբերումների էջերը տրվում են կից փակագծերում:

² Լ. Գ. Եզեկյան, Րաֆֆու ստեղծագործությունների լեզուն և ոճը (ըստ պատմավեպերի նյութերի), Ե., 1975, էջ 106:

թագավոր, Ալեքսանդր Առաջին, աստվածաբանական բաժանմունքի ուսանող Կարլ Ֆոն Զիվերինգ, քաղաքներ՝ Դամասկոս, Դորբատ, Խարկով և այլն:

Տրամաբանները կարևոր են համարում անվան նշանակությունը իմաստից առանձնացնելը: Բ. Ռասելը հատուկ անունները համարում էր որոշակի առարկաներին վերաբերող թերի սիմվոլներ, որոնք վկայակոչում են ստանում նախադասության կազմում և հաղորդակցական գործառույթից դուրս առարկայական նշանակելի բովանդակություն չունեն³: Բակունցի վեպի որոշ հերոսների դիմում են մականուններով, ինչպես՝ Յան Ինդուանիսին ընկերները կոչում էին *Մունջ Արքա*, Խ. Աբովյանին՝ *Արմենիեր* և այլն:

Հետաքրքրական է գույների և գունանունների խաղարկումը վեպում. գործածության ակտիվություն ունի *սև* գույնը. «*սև* եղբայրների» խումբ, *սև* ուլունքների շարան, եղևնիների *սև* երիզ, անտառի *սևի* մեջ, բատիստե *սև* զգեստ, *սև* թիկնոցներ, *սև* ժապավեն և այլն: Այս գույնը գործածվում է որպես տառապած հայի տեսակին բնորոշ հատկանիշ. «Չհասկացար՝ ինչ պատվիրեց նորին բարեձննդությունը՝ որ գլուխը *սև* լինի, աչքերը *սև* լինեն, ամեն ինչ *սև* լինի և քիթը *սև* լինի» (էջ 327): Գունանուններից գործածական են մանիշակագույնը, վարդագույնը, ցորնագույնը, մոխրագույնը, որոնք բնականարի և դիմանկարի կերտման բաղադրատարրեր են: Բնագրային օրինակներ. «Արևն արդեն *մանիշակագույն* էր ներկում վերջալույսի ամպերը» (էջ 305): «Նայում էր երիտասարդի մաքուր սափրած երեսին, որ *վարդագույն* էր երեկոյի սառնից» (էջ 288): «Հյուսիսի սառն օդը փոխել էր նրա դեմքի *ցորնագույնը*» (էջ 292): «Վարդերի նման բացվել էին նրա թների վրա և իրենց կարմրավուն ցուլքով երևացնում էին նրա ականջները՝ *մոխրագույն* գանգուրների մեջ» (էջ 331):

Վեպի նկարագրական հատվածներում առկա են տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստների մեջ: Այդպիսի բառերը երկարժեք բառեր են, որոնց խոսքիմասային պատկանելությունը որո-

³ Б. Рассел, Искусство мыслить, М., 1999, էջ 58:

շելիս ելնում ենք շարահյուսական կիրառությունից: Հայերենի զարգացման տարբեր գոյավիճակներում էլ առկա են գոյականի և ածականի խոսքիմասային իմաստներով զուգահեռաբար հանդես եկող բառեր: «Հոգնությունից ննջում է *ծերունի* սպասավորը» (էջ 268): «*Ծերունու* նվաղած հիշողությամբ երկրորդ անգամ էր պատմել Տուբոյի կուրանալը» (էջ 270): «Կարճ ժամանակից հետո պանդոկը լցվում էր *երիտասարդ* մարդկանցով» (էջ 277): «*Երիտասարդը* ձեռք էր բերում գիտելիքներ» (էջ 276):

Հետաքրքիր իրողություններ են նկատվում բառապաշարային դաշտում: Կենսունակ գործառույթով առանձնանում է *-ուհի* վերջածանցը, որը հայերենը փոխառել է պարսկերենից. այն փոխատու լեզվում եղել է հիմնական ձևությո՝ «դուստր, աղջիկ» նշանակությամբ: Սկսած մեր լեզվի հետմերսոսյան շրջանից՝ այն գործածվել է իբրև իգական իմաստ ունեցող ածանց, թեև ըստ Գ. Ջահուկյանի՝ *-ուհի* վերջածանցի իրանական ծագման վերաբերյալ մեկնությունները համոզիչ չեն⁴. օր.՝ *բարեկամուհի, իշխանուհի, տանտիրուհի, սպասավորուհի, տիրուհի, միանձնուհի, էստուհի, պարսկուհի* և այլն:

Վեպում գործածության լայն տիրույթ են նվաճել հետևյալ բաղադրությունները՝ *մեղրագինի, զինետուն, օղետուն, հացատուն, յուղահաց, ծխամորձ, քթախոտ, սենեկապետ, նահանգապետ, գնդապետ, ծաղրանկար, յուղաներկ, զբոսավայր, նպարավաճառ, վերջալույս, աստղալույս, լիալուսին, մարդաձայն, ոտնաձայն, ձյունափայլ, մոխրակույտ, գետեզր, երկարահասակ, ճշմարտանման, կաքավաքայլ, ասեղնագործ* և այլն:

Հայտնի է, որ Խ. Աբովյանը մեծ սեր է ունեցել կրոնի հանդեպ: Նրա կերպարի ամբողջացման գործում զգալի է կրոնաեկեղեցական բառամիավորների գործածությունը. օր.՝ *Աստված, աստվածաբանություն, աստվածարում, քրիստոնյա, հոգևորական, Ջատիկ, սար-*

⁴ Ըստ Աճառյանի՝ մերսոսյան հայերենում *-ուհի* ածանցով կազմված իգական իմաստ ունեցող բառեր չեն գործածվում: Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Ե., 1951, էջ 86: Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 570:

կավագ, մոնթ, խաչ, մոմ, ծում, աղոթել, աղոթագիրք, սաղմոս, սուրբ Հակոբի վանք և այլն: Գործածական է *կեսարինը կեսարին տալ* թևավոր խոսքը, որը աստվածաշնչյան ծագում ունի. «Իսկ այժմ վառեմ ճրագը, և տանք *կեսարինը կեսարին*» (Էջ 306): Այն Մատթեոսի Ավետարանի 22-րդ գլխի 21 համարից է, որ նշանակում է ըստ արժանվույն փոխհատուցել: «Գնացեք, տվեք *կայսրինը՝ կայսեր* և Աստծունը Աստծուն»:

Այլ թևավոր խոսքեր. «Առաջին դասը եղել էր այն, ինչ որ անհայտ նկարիչը գրել էր պանդոկի ճակատին՝ «Քանի ողջ ենք, պիտի ապրենք»» (Էջ 277): «Գինին և ճշմարիտ գիտությունն իրար թշնամի են» (Էջ 300): Լամաքոս զորավարի խոսքը. *Non licet in bellis bis peccare* - Պատերազմում շփոթվում են մեկ անգամ (Էջ 306): «Երբ խոսում է Հռոմը, լռում է աշխարհը» (Էջ 316): «Կարթագենը պետք է կործանվի» (Էջ 319): «Ամեն սկիզբ դժվար է» (Էջ 316) և այլն:

«Խաչատուր Աբովյան» վեպի լեզուն հարուստ է դարձվածքներով և շրջասույթներով. դարձվածքներ՝ *ավազից պարան հյուսել* («անկարելի գործ ձեռնարկել»). «-Ավազից պարան ես հյուսում, քեռի Մարտին» (Էջ 304), *աղամի զգեստ* («մերկություն»). «Դեռատի աղջիկներին ցույց է տալիս Ադամի զգեստը» (Էջ 265). Շրջասույթներ՝ *Նոյի երկիր* - Հայաստան (Էջ 315), *սրբազան լեզու* - հայերեն, *Բիրլիական լեռ* - Արարատ (Էջ 291), *հռենոսյան վարդաջուր* - գինի (Էջ 297) և այլն:

Ա. Բակունցի գեղարվեստական խոսքին առանձնապես վառ արտահայտչականություն են հաղորդում անհատական հեղինակային համեմատությունները, որոնք աշխարհի ճանաչողության և իմացության հիմնական միջոցն են: Հաճախ անձը համեմատվում է անձի հետ. օր.՝ «Պրոֆեսոր Պարրոտին նրանք դիմավորեցին, ինչպես հաղթանակից վերադարձող զորավարի» (Էջ 292): «Ծերունին փափուկ սապոգներն իրար զարկեց, ինչպես հին ասպետ» (Էջ 293): «Տիկին Էլրիզը նախասենյակում բարձրացրել էր նրա օձիքը, ինչպես մայր, որ տաք փաթաթում է երեխային» (Էջ 303): «Բայց ես մի

օր պիտի վերադառնամ իմ հին հայրենիքը, որ սպասում է ինձ, ինչպես մայրը որդու վերադարձին» (էջ 317):

Երբեմն համեմատության երկրորդ եզրը կենդանի է, բնության երևույթ կամ որևէ հատկանիշ. «...Իսկ շրջում էր մենակ, ինչպես անտառի բու» (էջ 328): «Ինչ-որ մութ բան դառնում էր նրա հոգու մեջ, խլրտում էր, ինչպես աճում է բողբոջը գարնան գիշերին» (էջ 303): «Նա պատմում էր իր կյանքը գունեղ և զարմանալի հետաքրքիր, ինչպես արևելյան հեքիաթ» (էջ 318):

Հեղինակը չակերտների մեջ է տալիս այս համեմատությունը. «Արևը մայր է մտել, ինչպես մեռնում է դյուցազնը» (էջ 309):

Գեղարվեստական համեմատություններ կազմելիս բնապաշտ Բակունցը առավելաբար օգտագործում է *ինչպես* կապը:

Հայտնի է, որ անորոշ դերանունների վերաբերյալ տարակարծություններ կան, ընդհուպ մինչև դրանք առանձին տեսակ չհամարելը: Դրանք արտահայտում են ընդհանուր, չտարբերակված իմաստ: *Ուն* անորոշ դերանունը սովորաբար հատկանշային իմաստ է արտահայտում (*ուն* Գրիգորյան): Սակայն ինչպես նշում է Ֆ. Խլղաթյանը *ուն* դերանունը կարող է արտահայտել նաև անորոշ անձ⁵: Դերանվան այդպիսի կիրառության հանդիպել ենք առաջադիր վեպում. «Սև դոմինոյի մեջ փաթաթված անհայտ *ուն* մոտենում է մի խումբ կանանց»⁶: Նկատելի է *ոչ ոք* ժխտական դերանվան յուրահատուկ գործածություն. Օր.՝ «Իսկ թե քանի տարի պիտի ուսաներ՝ հայտնի չէր ոչ իրեն, ոչ ռեկտորին և *ոչ այլ ոքի*» (էջ 267):

Վերջում հավելենք, որ Ա. Բակունցի վեպի հերոսը՝ Խաչատուր Աբովյանը, և հեղինակը՝ Ակսել Բակունցը, զոհ դարձան իրենց ողջունած ու փայփայած իշխանությունների բռնությանը: Ճիշտ է Աբովյանը չձերբակալվեց, բայց ի վերջո այդ բիրտ իրականության զոհը դարձավ, ինչպես և Ա. Բակունցը: Երկուսն էլ նույն տարիքում՝ երեսունինը տարեկան հասակում:

⁵ Ֆ.Չ. Խլղաթյան, Ժամանակակից հայոց լեզու, Բ մաս, Ե., 2010, էջ 118:

⁶ Ակսել Բակունց, Երկեր 4 հատորով, հ. 3, Ե., 1982, էջ 264-265:

Ключевые слова: язык и стиль, авторское слово, портрет, топоним, название цвета, двусмысленные слова, религиозно-церковные словесные единицы, сравнения.

А. В. Галстян - Некоторые лингвистические и стилистические вопросы романа А. Бакунца “Хачатур Абовян”. - Портрет - один из разнообразных пластов авторской речи, который автор создает с тонкой наблюдательностью и уникальной методикой. С первых же страниц были отмечены некоторые интересные явления в сфере использования собственных имен. Суффикс *-նիհ* [uhi] имеет существенную функцию в словарном составе. Язык романа богат названиями красок, выражениями и перифразами. Художественному слову А. Бакунца особенно яркую выразительность придают религиозно-церковные словесные единицы и персональные авторские сравнения.

Keywords: language and style, author's word, portrait, toponym, color name, ambiguous words, religious and ecclesiastical verbal units, comparisons.

A. V. Galstyan - Some Linguistic and Stylistic Issues of A. Bakunts' Novel “*Khachatur Abovian*”. - The portrait is one of the various layers of the author's speech, which the author creates with subtle observation and a unique method. From the very first pages, some interesting developments in the use of proper names were noted. The suffix *-նիհ* [uhi] has an essential vocabulary function. The language of the novel is rich in the names of colors, expressions and periphrases. The literary word of A. Bakunts is especially vividly expressed by religious-church verbal units and author's personal comparisons.

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՐԿՆԱԳՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԱՆԿԻ
ԼԻԱԿԱՂԱՊԱՐՆԵՐՈՒՄ

Բանասիր. գիտ. թեկնածու Ա. Մ. Մանթոյան

Հիմնաբառեր: Չայնավոր հնչյուններ, կիսաձայն յ, հնչյունակապակցություն, վանկակաղապար:

Հայտնի է, որ երկհնչյունը որևէ ձայնավորի և կիսաձայն յ-ի կապակցություն է: Ըստ որում յ կիսաձայնը կարող է լինել թե՛ ձայնակապ (որն արտասանվում է երկու ձայնավորների միջև), ինչպես՝ *տղայի, մնայուն*, թե՛ արմատական հնչյուն, ինչպես՝ *հայեցի, Մերգեյի*: Երկհնչյունները որոշելու համար հիմք են ծառայում ոչ միայն հայերեն բառերը (*հայ*) և բառույթները (*հայր*), այլև բառաձևերը (*հայի*) և օտար բառերը (*Մերգեյի*): Հարցը քննող հեղինակները¹ նշում են *այ, յա, էյ, յե ոյ, յո, ույ, յու, յի* կապակցությունները (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Ա	այ (հայ)	յա (կյանք)
Ե	էյ (թեյ)	յե (նայել)
Ո	ոյ (հո-բոյ)	յո (ա-յո)
Ու	ույ (հույս)	յու (հյուս)
Ի	–	յի (հա-յի)
Ը	–	–

Աղյուսակից երևում է, որ չեն հիշատակվում *իյ, ըյ, յը* երկհնչյունները և դրանց նմուշները: Մինչդեռ, ինչպես ցույց կտրվի

¹ Տե՛ս Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Ե., 1955, էջ 90: Տե՛ս նաև Յու. Ավետիսյան, Հ. Ջաքարյան, Հայոց լեզու: Հնչյունաբանություն, ուղղախոսություն, ուղղագրություն, Ե., 2007, էջ 45: Գ. Սևակը սխալ է համարում երկհնչյունները երկբարբառներ անվանելը և դրանք կոչում է նաև երկձայններ: Երկհնչյունների Գ. Սևակի առաջադրած ցանկը գրեթե նույնությամբ կրկնվում է հարցին վերաբերող աշխատություններում:

ստորև, հայերենի բոլոր ձայնավորներն էլ կարող են երկհնչյուն կազմել:

1. *Իյ* երկհնչյունը չի նշվում և ոչ մի աշխատության մեջ: Մինչդեռ աղյուսակը կարելի է լրացնել համեմատաբար հայտնի կամ քիչ հանդիպող օրինակներով, ինչպես՝ *վիյ², Բիյսկ* (քաղաք ՌԴ Ալթայի երկրամասում), *Իյ* (քաղաք Ֆինլանդիայում և համանուն գյուղ ՌԴ-ի Տիվայի Հանրապետությունում):

Իյ երկհնչյուն հանդիպում է նաև հայերենի բարբառներում, մասնավորապես Համշենի բարբառում. հմմտ. *վիյնալ* (վերևանալ, փխբ. լավանալ, դեպի լավը գնալ, ապաքինվել), *վիյնինվիր* (ծովից հեռու լեռնային բնակատեղ):

2. *Յը* երկհնչյունն առանձնացնելը հայերենի երկհնչյունների շարքում առաջին անգամ հիշատակում է Գ. Խաչատրյանը՝ բերելով *խոյը, Նոյը, հարայը* և այլ օրինակներ³: Երկհնչյունիս առանձնացումը միանգամայն ճիշտ է, քանի որ երկու ձայնավորների միջև առկա ձայնակապը երկհնչյուն է կազմում հաջորդ ձայնավորի հետ:

Եվ բոլորովին էլ էական չէ, որ երկհնչյունի *ը* ձայնավորը հոդ է. ինչպես սավեց, երկհնչյունները որոշելու համար ընդունելի են թե՛ բառույթները, թե՛ բառաձևերը:

² Հնում Մալոռուսիայի ժողովուրդը *վիյ* էր կոչում ստորերկրյա գանձերը և լեռնային հարստությունները պահպանող ոգիների ղեկավարին, որի կոպերը հասնում էին մինչև գետին: Տե՛ս *Ն.Վ. Գոգոլ*, Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 2, Ե., 1953, էջ 192: Վիյի կերպարը սկզբնավորվում է բանահյուսական կանոնադրությամբ, սակայն հարավուսական առասպելներում չկան այնպիսի էակներ, որոնք ունենան ստորին դիվաբանության այս ներկայացուցչին բնորոշ բոլոր հատկանիշները: Այնուամենայնիվ պետք է նշել, որ սլավոնական դիցաբանության մեջ կան մի շարք կերպարներ՝ նմանատիպ առանձին գծերով: Խոսքը առաջին հերթին թավ հոնքերով և երկար թարթիչներով հզոր ծերունիների մասին է, որոնց մահացու հայացքը թաքնված է հսկայական կոպերի տակ: Ազգագրագետ և բանահավաք Ա. Աֆանասևը նման արարածներին անվանում է «վիյ» (ուկրաինական *вій* «թարթիչ» բառից)՝ դրանով իսկ այս բառին տալով հասարակ անվան նշանակություն (Տե՛ս *А. Афанасьев, Поэтические воззрения славян на природу, т. I. М., 1865, էջ 170-171*): Այսպիսով՝ կարելի է կարծել, որ *վիյը*՝ Ն.Վ. Գոգոլի համանուն վիպակում որոշակի մարդակերպ (անտրոպոմորֆ) կերպար է՝ տարբեր դիցաբանական հերոսների բաղադրությամբ ձևավորված:

³ Տե՛ս *Գ. Գ. Խաչատրյան*, Հայոց լեզվի ոլորաններում, Վանաձոր, 1994, էջ 9:

Այնուամենայնիվ ավելացնենք նաև *խոյընթաց* բառը՝ որպես օրինակ, որում *ը* երկհնչյունն առաջանում է արմատների սահմանագծին⁴:

1. *Ը* երկհնչյունի օրինակը գրական հայերենում չի հանդիպել, բայց *ը* երկհնչյունը առկա է բարբառներում և ըստ էության տարաբնույթ հնչյունափոխությունների արդյունք է: Այսպես՝ Գ.Ջահուկյանը բաղաձայնական զուգաբանությունների շարքում նշում է *տ*-ի առնմանական փոփոխությունը *ն, ը, ռ* ձայնորդներից առաջ: Ուստի և, օրինակ, *կտրել* և *կոտրել* բայերի դիմաց կունենանք *կըյրել, գըյրել, կըյրել, գըյրել* ձևեր: Նման փոփոխություններ են արձանագրվում բարբառների արևմտյան խմբակցության Պոլսի, Սյոլլոզի, Եվդոկիայի, Կյուրիսի, Կեսարիայի, Ակնի, Սիվրիհիսարի, Հաջընի, Քեսար – Սվեդիայի, արևելյան խմբակցության Ղարաբաղի, Խոյ – Մարաղայի բարբառներում⁵:

Բացի դրանից՝ *նզն, նկն* հնչյունակապակցությունների դիմաց է առկա *յն*: Հետևաբար և *ընկնել, ցնկնել* բառերը կունենան *ըյնել, ցըյնել* ձևեր, հետևաբար և *ը* երկհնչյուն⁶:

1-25-րդ բաղաձայնական հատկանիշների համար լրացուցիչ մանրամասնումներ և մեկնաբանություններ անելիս Գ. Ջահուկյանն ավելացնում է. «Մենք միացնում ենք *ը*-ի քմայնացման հետ կապված տարբեր փոփոխությունները՝ նկատի ունենալով միևնույն հիմքը՝ քմայնացումը, սակայն արդյունքները կարող են տարբեր լինել. հմմտ. $\rho > \gamma$, $\rho > \delta$ և $\rho > \sigma$, շ փոփոխությունները, որոնցից վերջին երկուսը կարող են ուղեկցվել և $\rho > \gamma$ փոփոխությամբ՝ ըստ դիրքի»⁷:

⁴ *Խոյընթաց* բառում երկհնչյուն է, մյուսներում՝ հնչակապակցություն (ծանոթ. խմբ.):

⁵ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 45 (11-րդ զուգաբանություն) և 51-62 էջերի աղյուսակները:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 46 (9-րդ զուգանաբանություն):

⁷ Նույն տեղում, էջ 50:

Հաշվի առնելով այն հանգամանքները, որ՝ ա) p -ն հայերենի հաճախադեպ բաղաձայններից է⁸ և բ) $p > j$ հնչյունափոխությունը մեծ տարածում ունի բարբառներում, կարելի է թերևս արձանագրել, որ py երկհնչյուն հայերենում առկա է:

Այսպիսով՝ երկհնչյունների (ձայնավորների և կիսաձայն j -ի) համադրությունը կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակով:

Աղյուսակ 2

Ա	այ	(հայ)	յա	(կյանք)
Ե	եյ	(թեյ)	յե	(նայել)
Ո	ոյ	(հո-բոյ)	յո	(ա-յո)
Ու	ույ	(հույս)	յու	(հյուս)
Ի	իյ	(Բիյսկ)	յի	(հա-յի)
Ը	ըյ	(ընել) (բրբ.) (կըլրել) (բրբ.)	յը	(հա-յը)

2. Գ. Բ. Ջահուկյանը հայերենի վանկի համար սահմանում է $((C+)C+) V (+C(+C(+C)))$ լիակաղապարը՝ V -ին անմիջապես նախորդող C -ի տակ նկատի առնելով j կիսաձայնը և բացառելով *սպ, ստ, սկ* տիպի կապակցությունները: Յուրաքանչյուր մասնակաղապարի համար առաջադրելով մեկական նմուշ՝ լիակաղապարի 12-րդ տիպի համար աստղանիշով բերում է **կյանցք* օրինակը՝ որպես ենթադրական (հնարավոր, բայց չիրականացած) ձև⁹:

⁸ Տե՛ս Վ. Դ. Առաքելյան, *Ս. Ինչատրյան, Ս.Ա. Էլոյան*, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1975, էջ 46: Աղյուսակ 3-ում ներկայացված է հայերենի հնչյունների հաճախականությունը տոկոսային հարաբերությամբ: Ըստ աղյուսակի տվյալների՝ p -ն հաճախականությամբ 4-րդ հնչյունն է և 2-րդը՝ բաղաձայնների մեջ:

⁹ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 87-88:

Մենք լիակադապարի համար առաջադրում ենք *կուր-Ֆյուրստ*¹⁰ բառի *Ֆյուրստ* վանկը, որը լիովին համապատասխանում է լիակադապարին և ոչ թե ենթադրական, այլ իրական ձև է:

Բացի այդ Գ. Ջահուկյանը բառավերջում հնարավոր է համարում երեքից ոչ ավելի բաղաձայն՝ այն էլ վերջադիր *ք* բառակազմական մասնիկի դեպքում¹¹:

Համանման պնդում կա նաև «Հայոց լեզվի» Ա պրակում, ըստ որի՝ բառավերջում հազվադեպ են առաջնավանկի երեք բաղաձայններ, ինչպես՝ *պարտք, կուրծք, վարձք*¹²: Նախ՝ ինչպես վերևում նշված *Ֆյուրստ*, այնպես էլ *Կարստ*¹³, *վերստ*¹⁴, *Դելֆտ*, *Հումբոլդտ* բառերը ցույց են տալիս, որ հայերենում վերջնավանկում հնարավոր է վանկ չառաջացնող երեք բաղաձայնի առկայության՝ առանց *ք* բառակազմական մասնիկի: Երկրորդ՝ ռուսերենից փոխառյալ բազմաթիվ տեղանուններ (շուրջ 100 բառ), որոնք վերջանում են «բաղաձայն+սկ» հնչյունակապակցությամբ, արտասանվում են առանց վանկարար ձայնավորի, ինչպես՝ *Անգարսկ, Բրատսկ, Տելեգնովոսկ, Մինսկ, Սմոլենսկ, Կուրսկ* և այլն:

Ավելին՝ տեղանուններից մեկը վերջանում է «երկու բաղաձայն+սկ» կադապարով (չորս բաղաձայնով), բայց կրկին արտասանվում է առանց վանկարար ձայնավորի՝ Բերդսկ:

Վերոբերյալ բառերի՝ գաղտնավանկով արտասանությունը բարբառային է (ինչպես՝ *Օմշսկ, Տոմշսկ, Կիսլովոդշսկ, Մինշսկ*):

Այսպիսով՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին:

¹⁰ Հռոմեական սրբազան կայսրությունում իշխաններ, որոնք XIII դարից սկսած իրավունք ունեին ընտրելու թագավորին (կայսրին): Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 6, Ե., 1980: Կա նաև *Ֆյուրստ* գերմանական ազգանուն:

¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 87:

¹² Տե՛ս Գ.Բ. Ջահուկյան, Է.Բ. Աղայան, Վ.Դ. Առաքելյան, Վ.Ա. Քոսյան, Հայոց լեզու, Ա պրակ, Ե., 1980, էջ 114:

¹³ Ունի մի քանի նշանակություն. 1. *Կարստ* *Յոզեֆ* - գերմանացի հայագետ լեզվաբան: 2. *Կարստ* - կրաքարային սարավանդ Սլովենիայում: 3. *կարստ* - երևույթներ, որոնք առաջանում են լուծվող ապարներում՝ կապված ջրի և քիմիական պրոցեսների հետ: Հմտ. նաև *կարստային ջրեր*, որոնք կապված են կարստ առաջացման պրոցեսների հետ և գոյանում են լուծվող ապարների խոշոր ձեղքերում և խոռոչներում: Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 5, Ե., 1979:

¹⁴ Երկարության ռուսական չափ = 1,06 կմ:

1. Հայերենի բոլոր ձայնավորները / կիսաձայնի հետ կարող են երկինչուն կազմել յ-ի նկատմամբ գտնվելով թե՛ նախադաս, թե՛ ետադաս դիրքում:

2. Հայերենի վանկի լիակադապարը կարող է ներկայանալ ոչ թե ենթադրյալ (հնարավոր, բայց չիրականացած) ձևով (ինչպես **կյանք*), այլ *ֆուրստ* վանկով (*կուր-ֆուրստ*):

3. Հայերենի վանկը կարող է ավարտվել երեք կամ չորս բաղաձայնով, ընդ որում պարտադիր չէ, որ այդ բաղաձայններից վերջինը լինի բառակազմական *ք* մասնիկը, օրինակ՝ *Կարստ*, *վերստ*, *Մինսկ*, *Տմսկ*, *Բույնակսկ*, *Դելֆտ*, *Հուսբուրտ*:

Ключевые слова: гласные звуки, полугласный j [y], сочетание звуков, слоговая модель.

А. М. Сантоян - Дополнения в полных моделях дифтонгов и слога армянского языка. - Дифтонгические сочетания гласных с полугласным [y], в армянском языке до сих пор представлены в недостаточной степени. Во всех работах по интересующему нас вопросу авторы приводят следующие дифтонги: *шj[ay]*, *шj[ya]*, *пj[ou]*, *пj[yo]*, *пj[uy]*, *пj[yu]*, *тj[ey]*, *лj[y]*, *лj[yi]*, при этом, однако, ничего не говорят о дифтонгах *лj[iy]*, *лj[əy]*, а также – с некоторыми оговорками – о дифтонге *лj[yə]*.

В данной статье мы попытались внести дополнение в полную дифтонгическую систему и приводим языковые примеры с использованием модели «гласный + полугласный j [y]», которые теоретически возможны, но в литературе не описаны. В соответствии с этим, устанавливается целостность дифтонгических моделей и аргументируется тезис о том, что в армянском языке возможны все сочетания гласных и полугласного j.

Так, дифтонг *лj* [iy] встречается в словах *Бийск*, *Вий*, дифтонг *лj* [yə] употребляется, например, в таких словах, как: *հայր* [hayə] “армянин”, *խոյրնթաց* [хоуэнтас] “стремглав”. Что касается дифтонга *лj* [əy], то надо отметить, что он встречается в диалектах в результате разнородных фонетических чередований: *ալնել* [əynē] <*ընկնել* [ənknel] “упасть”, *կայրէ* [kəyyē] <*կարել* [ktrel] “отрезать”.

Полную модель слога принято воспроизводить в гипотетически реконструированном варианте *կյանցք* [*kjan^ck^c]. Мы же рекомендуем про- дуктировать полную модель не гипотетическим, а вполне конкретным при- мером: слогом (корнем) *ֆյուրստ* [fyurst] в слове *կուրֆյուրստ* [kurfyurst] ‘курфюрст’.

Более того, пересмотру было подвергнуто утверждение о том, что последний согласный в слоге, который оканчивается тремя согласными звуками, должен обязательно включать в себя словообразующий элемент *ք*[k^c]. Так, слова *կուրֆյուրստ* [kurfyurst] “курфюрст”, *Չարստ* [karst] “карст”, *վերստ* [verst] “верста”, а также заимствованные из русского языка топонимы, оканчивающиеся звуковым сочетанием *սկ*[sk] (*Օմսկ* [Омск], *Տոմսկ* [Томск], *Բերդսկ* [Бердск] и т.п.), подтверждают, что в армянском языке слог может завершаться тремя или четырьмя согласными звуками без участия частицы *ք* [k^c] и слогообразующего гласного.

Keywords: vowels, *յ* [y] semivowel, phonetic combinations, syllabic pattern.

A. M. Santoyan - Additions to the Paradigms of Armenian Diphthongs and Syllables. - To date, Armenian diphthongs composed by a vowel and the *յ* (y, [j]) semivowel have been presented with an incomplete set. In all scientific publications concerning the subject matter, authors have enumerated the diphthongs *այ* [ay], *յա* [ya], *ոյ* [oy], *յո* [yo], *ույ* [uy], *յու* [yu], *եյ* [ey], *յ* [y], *յի* [yi], without mentioning the diphthongs *իյ* [iy], *ըյ* [əy], and, with some reservations, *յը* [yə].

Additions have been made to diphthong paradigm in this article and linguistic examples have been provided in the theoretically possible but unspecified "vowel + *յ* [y] semi-vowel" combination templates. According to that, the template of diphthongs was completed, and it was proved that all "vowel + *յ* [y] semi-vowel" combinations and consonant are possible in Armenian. *յ*

Thus, the diphthong *իյ* [iy] is present in the words *Բիյսկ* [biysk], *վիյ* [viy], the diphthong *յը* is present, e.g., in the words *հայը* [həə] (the Armenian), *խոյնտաճ* [xoyənt^cac^s] (strongly paced, fast). As for the diphthong *ըյ* [əy], it may be observed in dialects because of various phonetic changes such as *ընկել* < *ընկնել* [əynel - ənknel] (to fall), *կրկել* < *կտրել* [kəyyel - ktrel] (to cut).

It was customary to present the syllabic paradigm with the conditionally possible variant **կյանկ* [kyanc^k]. It is suggested to present the whole template with a non-hypothetical, real example of the root syllable *ֆյուստ* [fyurst] of the word *կուրֆյուստ* (kurfurst).

Moreover, the assertion that in the case of a syllable ending in three consonants, the last consonant should be the word-building element *ք* [k], has been revised. Thus, the examples of kurfurst, Karst, and verst, as well as toponyms borrowed from Russian and ending in *սկ* [sk] (*Օսկ* [Omsk], *Տոմսկ* [Tomsk], *Բերդսկ* [Berdsk], etc.) indicate that in Armenian, the syllable can end in three or four consonants without the particle *ք* [k^c] and a syllable forming vowel.

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ.

Հայ. *հերկ*- < հե. *p^(h)erk^{(h)ο-}

Բանասիր. գիտ. դոկտոր Վ. Գ. Համբարձումյան

Հիմնաբառեր: Ստուգաբանություն. նախաձև արմատի տարբերակներ. ցեղակից լեզուների օրինակներ, հայերեն արմատի տարբերակում. նոր տվյալների օգտագործում, լրացումներ և ճշգրտումներ:

Ներածական: Ինչպես անվանի պատմաբան Գ. Խ. Սարգսյանն է կարծում, Խորենացուց մեզ հասած վիպական «Երկներ երկիր...» պատառիկը, որ անցյալի բանասիրական որոշ ուսումնասիրություններում քննվում է իբրև Վահագն դիցական սյուժեի մի երևույթ, «թեոգոնիական ցիկլի» մի հատված է¹:

Այդ ցիկլը ներկայանում է իր երեք մասով, դրանք են՝ տիեզերածնություն, երկրագործություն և պտղաբերություն: Հայերենում, իբրև հնդեվրոպական պատկերացումների ուրույն արտահայտություն, ցիկլային համաձույլ (սինթետիկ) դրսևորման միավոր է *հերկեմ* բայը, որն առանձնանում է իր, այսպես կոչված, բազմիմաստությամբ (իր տարբեր իմաստների մեջ):

Հնդեվրոպական լեզուների համար վերականգնվող ընդհանուր նախալեզվյան *p^(h)erk^{(h)ο-} արմատի ամենասկզբնական իմաստը պիտի եղած լինի «(սեղմելով, ուժ գործադրելով) կիսել, պատռել, ճեղքել» իմաստը, որ ուշպատմական շրջանի լեզուներում ունեցել է իր զարգացումները՝ ձևային, իմաստային և գործառական հատկանշումներով:

Հիշյալ տիպի լեզուների ընդհանուր համեմատական և տիպաբանական հետազոտությունների նորագույն տվյալները օգնում են հայերենի նախագրային ժամանակաշրջանի պատմությանը, մա-

¹Տե՛ս Գ. Խ. Սարգսյան, Введение // *Мовсес Хоренаци, История Армении*, перевод с древнеармянского языка, введение и примечания Г. Саркисяна, Ереван, 1990, էջ XIV: Հմմտ. *В.Н. Топоров, Древнеармянский в свете индоевропейских реконструкций // "Международный симпозиум по армянскому языкознанию, 21-25 сентября 1982 г. Тезисы докладов"*, Ереван, 1982, էջ 100-102:

նավանդ բառապաշարի համապատասխան շերտի ծագումնային հարցերին անդրադառնալ նոր մոտեցումով:

1. Արմատի ծագման վերաբերյալ մինչև այժմ եղած փորձերը:

Նախ անդրադառնանք հայերենի տվյալներին՝ անհրաժեշտ լրացումներով:

Եր. Մեղրեցու բառարանն ունի՝ *հերկել* – վարել, ցելել. *հերկ* – վար, ցել. *հերձել* – պատռել, բաժանել. *հերձուած* – բաժանումն²:

Հյուբշմանը հայ. *հերկ*-ը համարում է բնիկ, նշում է նաև *հերկ հարկանեմ*, *հերկեմ* ձևեր՝ ի համեմատություն լատ. *porca* «ակոսների միջև թումբ», կիմր. *rhÿch*, հբրետ. *rec* «հերկել», հիոլ. *et-rech* «ակոս» ձևերի³: Իսկ իր մեկ այլ աշխատության մեջ նա *հերկ* բառի ծագումը հե. **perk*՝ արմատից տալիս է հարցականով⁴: Եվ դա նշանակում է, որ արմատի ծագման և իմաստի բացատրության հարցը մնում է չլուծված:

Աճառյանը, թեև ընդունում է Հյուբշմանի հիշյալ ստուգաբանությունը, սակայն ծագումը որակում է «թերևս բնիկ»՝ հե. **perk*-արմատից, որ ըստ այդմ՝ «պիտի տար հայ. **հերգ*»: Այնուհետև, Աճառյանը բերում է նաև մեկ այլ արմատ՝ հե. **perk*՝- «պատռել, ճղել, ճանկռել, փորփրել». նշում է հայերենի հետ այդ երկուսի ունեցած առնչության վերաբերյալ այն երկվությանը, որ առաջ է եկել ուսումնասիրողների հայտնած տարբեր տեսակետների արդյունքում. «ոմանք այս երկու խմբի բառերը միացնում են. ընդհ. [անուր] արմատը դնելով **perk*՝. այս պարագային հայերենը դուրս է մնում, որովհետև հնիս. **perk*՝- տալիս է հայ. **հերս*-, ուրիշներ հենց հայերենը հիմք բռնելով՝ միացնում են երկուսը, որով մնում է հայ. *հերկ* < հնիս. *perg*- < *perk*»⁵: Ինչպես կարելի է նկատել, այստեղ ևս հարցի լուծումը վերջնական չէ:

² ԲՀ, 1975, էջ 184-185:

³ Hübschman, 1895, էջ 467:

⁴ H. Hübschman, *Armenische Studien*, Leipzig, 1883 (= Հ. Հյուբշման, Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 2004, էջ 205):

⁵ ՀԱԲ, 1977, էջ 86-87:

Եվ սա առաջ է բերում մի նոր խնդիր՝ վերստին անդրադառնալ այդ արմատի ծագմանը, եթե ոչ նաև նրա հնարավոր տարբերակների առնչակցությանը՝ իմաստի և հնչյունական կողմի առումով:

Ջահուկյանը իւեթ. *ħarš-* «պատռել, հերձել, հերկել» բառարմատին զուգադրում է հայ. *հերձել, հերկել*. տողատակին ծանոթագրում է. «Մակայն հայ. բայերը հավանաբար գալիս են հ.-ե. *perk-ից («հերկել, ճեղքել, ակոս»)՝ մի այլ հ.-ե. լեզվի միջնորդությամբ»⁶: Այստեղ ուշադրությունը է գրավում նախ *հերձել, հերկել* ձևերի միասին բերելը, որ նշանակում է թե դրանք դիտվում են նույնարմատ բաղադրական հիմքով կազմություններ՝ *-կ/-ձ* լրացումով, այնուհետև՝ «մի այլ հ.-ե. լեզվի միջնորդությամբ» լինելը, որը հարցի մեկնաբանությունը մղում է, կարելի է ասել, անորոշության ոլորտ:

Իսկ նախագրային շրջանի հնչյունաբանության վերաբերյալ աշխատության մեջ Ջահուկյանը այդ խմբում քննում է ընդամենը հետևյալ բառարմատները.

ա) *հերձ*, որից՝ *հերձեմ, հերձիք*. որ հանգեցնում է *հերկեմ* «վարել» բային՝ ծագած հե. *perk'- «ճեղքել, քանդել, փորել». հմմտ. հինդկ. *pārśāna-* «կիրձ, անդունդ», լատ. *porca* «ակոս», լիտվ. *pra-pařsas* «փոս. փորվածք», *peršėti* «տոգալ, ցավել, քերծել (վերքի մասին)»⁷:

բ) *հերկ*, որից՝ *հերկեմ*, նաև *հերքեմ* (?). այս ձևերը նույնպես ծագած են համարվում հե. *perk'- «ճեղքել, քանդել, փորել» արմատից⁸:

Եվ ըստ այդմ՝ հիշյալ արմատական կազմությունները ծագումնային և իմաստային նույն «դաշտի» միավորներ են:

Այնուհետև՝ թերևս կարելի է խոսել նաև հորդ «ուղիղ, հարթ (ճանապարհ)», հորձ «հուզում, կիրք. եռանդ» (զուգահեռ այլ՝ յորդ «առատ, առատահոս», յորձ «(ջրի) առատ հոսք». վերջինս «նույն է յորդ բառի հետ, որ սրա հոմանիշն է») բառարմատների մասին՝ այդ

⁶ *Գ. Բ. Ջահուկյան*, Հայերենը և հին հնդեվրոպական լեզուները, Ե., 1970, էջ 159:

⁷ *Джаукян*, 1967, էջ 181:

⁸ Նույն տեղում, էջ 181, 189, 191, 192:

խմբում, սակայն բերվում են առանձին-առանձին⁹: Հագիվ թե դրանք հայերենում լինեն համանուններ, որովհետև համարվում են ծագած հե. նույն արմատից (հակառակ դեպքում, իրոք, համանուն արմատներից):

Վերջիններիս հետ կապված՝ նշենք որոշ մանրամասներ:

ա) *հորձ*- «հուզում, կիրք. եռանդ» (?), ըստ Աճառյանի՝ «ան-ստույգ բառ»¹⁰: ՆՀԲ-ն առնչում է *յորձանք* բառին, որ առանձին չունի Աճառյանը՝ թերևս համարելով ածանցական կազմություն: Ջահուկյանը նույն աշխատության մեջ իրար է միացնում *յորձ*-«հեղեղում, հորդացում» և *հորդ* «լի, լեցուն» ձևերը՝ համարելով ծագած հե. *ordhjo- // *ortjo-(**er-*) արմատից, որ այնքան էլ հավաստի չէ, մանավանդ որ անհստակություն (շփոթ) կա մեկ այլ՝ *հորձ* «այլայլում, հուզում, եռանդ» [*or-dh- // *ort- (< *er-)] արմատի հետ¹¹:

բ) *հորդ*- «ուղիղ, հարթ (ճանապարհ)», որից՝ *հորդեմ* «ճանապարհ բանալ, մաքրել, պատրաստել» // *հորդիլ* «գնալ, տարածվել» և այլն. այդ արմատով կազմությունները առավելապես գտնում ենք հայերենի բարբառներում (նույն իմաստի արտահայտմամբ). հմմտ. *հոտեղ* (Ալշ.), *հորտեղ* (Բլ.), *հորթեղ* (Մշ.), *խորթեղ* (Սլմ.), *հիյթեղ* (ՀՃն..), *հորթեղ* (Հմշ., Տր.), *խորտեղ* (Վն.) և այլն¹²:

Ջահուկյանը հայերենի բնիկ արմատների ցանկում, ոչ անկախ նախորդ ուսումնասիրողների (առանձնապես՝ Հյուբշման, Մեյե, Աճառյան և ուրիշներ)՝ այս հարցում ունեցած մոտեցումներից, հայ. *հերկ*-ը և *հերձ*-ը համարում է ծագած հիմք-լեզվի տարբեր արմատներից:

ա) «*Հերկ*-ի միացումը *հարկանեմ*-ին առաջարկել է Մեյեն (Meillet, 1908, էջ 129). անհավաստի է կապը *perk- «պատռել, հերկել, ակոս» արմատի հետ *perk- > **հերս*: Պարզ չէ *հերձեմ* բայի կա-

⁹ ՀԱԲ, 1977, էջ 120, նաև 407-408: Տե՛ս նաև Джаукян, 1967:

¹⁰ ՀԱԲ, 1977, էջ 120:

¹¹ Джаукян, 1967, էջ 173, նաև 242, 302 և այլն:

¹² ՀԱԲ, 1977, էջ 120

պը սրանց հետ»¹³ . այնուհետև, նշվում է, որ *հերկել* բայը ծագում է հե. *perk- (< *per-) արմատից, ընդ որում իբրև «երկրագործություն, բուսականություն» իմաստային (թեմատիկ) խմբի միավոր¹⁴:

բ) Հեղինակի «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ *հերձ*- արմատի ծագման վերաբերյալ ոչինչ չի ասվում, այլ այն հնագույն շրջանի բառապաշարի բարբառային տարբերակների «համանիշային շարքերում» է բերվում՝ *հերձ*- [*հերձ(ան)ել* // *հերձուլ*], մի դեպքում՝ *երգիծանեն*, *ճեղքեն* (*ճեղքում*), *պատառեն*, մյուս դեպքում՝ *ճեղքեն*, *ցելում*, *պատառեն*, *փեռեկեն*, *քճքճեն* միավորների հետ¹⁵:

գ) Իսկ «Հայերեն ստուգաբանական բառարան»-ում Ջահուկյանը այդ արմատի ծագման մասին գրում է հետևյալը. «Թերևս բնիկ հնդեվրոպական՝ *perg'h- արմատից, բայց այս ձևը, բացի հայերենից, այլ զուգահեռներ չունի. *perk'- «պատռել, ճեղքել, փորփրել» արմատը պիտի տար **հերս*-, **pers* արմատից ծագող *փորձ* բառի նախաձևը պարզ չէ»¹⁶. նկատենք, որ սա նոր ստուգաբանություն է, որ այնքան էլ հեռու չէ Աճառյանի դիտարկումից (մանավանդ *հերս*-ի առնչությամբ):

Այսպիսով, ամփոփելով մինչև այժմ կատարվածը, կարելի է հաստատել, որ մեր այս աշխատանքում քննվող նյութի ստուգաբանական պարզաբանման հարցում եղածը մնում է ոչ վերջնական լուծում ստացածի սահմաններում, ուստի այդ ոլորտում նոր փորձերի դիմելը, կարծում ենք, դառնում է անհրաժեշտ:

¹³ Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 186:

¹⁴ Նույն տեղում: Նույն ընդհանուր արմատից են ծագած համարվում նաև *հրեմ* (?), *հար-ի* (աոր.), *հարում*, *հարկ-անեն*, *որ-ոտ* (?) միավորները (էջ 143-144): Նույնը գտնում ենք հեղինակի մեկ այլ «Опыт семантической классификации и ареального распределения индоевропейской лексики армянского языка» աշխատության մեջ (տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Լ. Ա. Տարաճեյան, Ս. Ս. Արուտյան, Очерки по сравнительной лексикологии армянского языка, Ереван, 1983, էջ 94-95): Հայ. *հարկանեն* (< *հարկ-*) բայի ծագման մասին տե՛ս Վ. Գ. Համբարձումյան, Ստուգաբանություն. հայ. *հարկ-* < հե. *(H)a/ork/g-t' // «Ջահուկյանական ընթերցումներ», Ե., 2021, 1 (16), էջ 60-69:

¹⁵ Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 396, 403:

¹⁶ Տե՛ս ՀՄԲ, 2010, 458-459:

2. Արմատի հնարավոր տարբերակների առանձնացում (նշում):

Հոդվածի վերնագրում նշված *հերկ*- ձևը ածանցական կազմություն է, պարզ արմատն է *հեր*-, որ առանձին գործածություն չունի՝ գրական հուշարձաններում և այլ կարգի աղբյուրներում պահպանված, սակայն հայտնի են այդ հիմքով տարբեր կազմություններ:

Բերենք դրանցից հետևյալները:

Հեր-, որից՝ *հերհեր* «սանդերք. բուրդ գգելու գործիք». Ջահուկյանի բառարանում հարցականով կապվում է հայ. *յեռուլ*, *հեր* «մագ» (<*ser- «իրար կողքի շարել»)՝¹⁷. սա ավելի հավանական չէ, քան կապը *հերկ*- արմատի հետ («բուրդ գգել» իմաստը ոչ այլ ինչ է, քան եղածը իրարից «գատել՝ հեռացնել, բաժանել»:

Հերիք (խսկց.-բրբռ.) «բավական, ձեռնհաս, կարող». Ջահուկյանի «Հայոց լեզվի պատմություն» գրքում (էջ 143) և բառարանում (էջ 458) թեականով կապվում է հե. *peri-ko- (*per-) «անցկացնել. տանել» արմատի հետ, և բերվում է այլ կարծիք, սակայն դա ավելի հավանական չէ, քան նրա առնչակից լինելը *հերկ*- արմատի հետ:

Հերկ [< (*h*)երկ- (?)] «(հողը՝ արտը) պատռել, գատել՝ իրարից առանձնացնել. վարել» բառն ունի առնվազն երկու կարգի բաղադրություն. ա) (*h*)երկ-. հմմտ. *հերկ*-(եմ), *հերձ*-(եմ // -անեմ), բ) *հարեմ* // *հարում* // *հարկանեմ* (< *հարկ-). հմմտ. *երկ*(ին)-ք // *երկ*(իր), *երկիւղ* և այլն¹⁸:

Հերձ «ճեղք, ծերպ, ճեղքվածք, պատռվածք» բառի համար Ջահուկյանը բառարանում գրում է (մասամբ՝ կրկնում ենք). «Թերևս բնիկ հնդեվրոպական՝ *perg'h- արմատից, բայց այս ձևը բացի հայերենից, այլ զուգահեռներ չունի. *perk- «պատռել ճեղքել, փոքրփրել» արմատը պիտի տար **հերս*-, **pers* արմատից ծագող *փորձ* բառի նախաձևը պարզ չէ»¹⁹. սա նույնպիսի բացատրություն է, ինչ ունի Աճառյանը, այնուամենայնիվ՝ բառարանում *փորձ* բառի համար

¹⁷ ՀՄԲ, 2010, էջ 458:

¹⁸ ՆՀԲ, 1837, էջ 63:

¹⁹ ՀՄԲ, 2010, էջ 458-459:

նշվում է հետևյալը՝ ինչպես որ Աճառյանի մոտ է²⁰. «բնիկ հնդեվրոպական՝ *phorg´ - [*per-] «փորձել» արմատից»²¹: Այստեղ, թերևս, կարելի է բերել նաև *հերձիք* «չարախոսություն, զրպարտություն» բառը, որ Ջահուկյանը դնում է հարցականով և համարում՝ «անստույգ բառ, ծագումն անհայտ է»²²:

Այնուհետև, եթե հնարավոր լինի նախկինում հայ. *հերու* «հերու, անցյալ տարի» բառի համար ևս բերվող հե. *peruti- «անցյալ տարի» արմատից առանձնացնել *-ու* մասնիկը, ինչպես որ նույն արմատից ծագող ցեղակից լեզուների՝ հինդկ. parut, հուն. πέρυσι (դոր. πέρυσι), իսլ. fiord «հերու, անցյալ տարի» ձևերի դեպքում է առանձնացվում *-ut*, *-սու* (*-սու*), *-ծ* տարրերը՝ իբրև ածանցական մասնիկներ, ապա հայ. *հերու*-ի բուն արմատը (հե. *per- > հայ. *հեր*) այս դեպքում ևս կարելի է ուշադրության առնել²³:

Կարելի է կարծել, որ դրանք ընդհանուր առմամբ ծագում են հե. *p^[h]erk^{[h]o}- արմատից՝ հայերենում ևս «երկուսի կիսված, ճեղքված. երկատված» իմաստների մեջ, ձայնորդային *-p//ն տարբերակմամբ:

Այդպես նաև, *հերկ*//*հերձ*- տարբերակմամբ ձևերին են առնշվում, մի կողմից՝ *երկ(ան // երկ-այն* «աղաց», *երկ-ան(ք)*, *երկ-ին(ք)*, *երկ-իր*, *երկ-ն-չիմ*, *երկ-այն // երկ-ար*, *երկ -իւղ*, *երկ-ու*), այլև *կր(-կին)*, *հեր-ք-եմ*, մյուս կողմից՝ **իերձ* // **իերդ*, եթե ոչ նաև (*ս*)*երկ*, *քերծ* և այլն²⁴:

Այստեղ առանձին ուշադրության առարկա են *հերկ*-ը, մասամբ՝ *հերձ*-ը, որոնց ծագման վերաբերյալ դասական համեմատաբանության կողմից կատարվածը ունի ճշգրտումների և լրացումների կարիք. ա) *հերկ*- (< հե. *perk-). այլև *հերս*. հմմտ. *հերստեղ*.

²⁰ ՀԱԲ, 1979, էջ 520:

²¹ ՀՄԲ, 2010, էջ 767:

²² Նույն տեղում, էջ 459. հմմտ. ՆՀԲ, 1837, էջ 94, ՀԱԲ, 1979, էջ 88:

²³ Հհմմտ. Hübschman, 1895, էջ 467, նաև ՀԱԲ, 1977, էջ 89:

²⁴ Հմմտ. Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 117, 148 և այլն: Հիշյալ օրինակների միջև ծագումնային, կոնկրետ՝ հնչյունական-իմաստային հարաբերակցության քննությունը այլ խնդիր է, որին այստեղ չենք անդրադառնում:

պարզ չէ *հերձեւ*-ի կապը սրանց հետ, նաև *հարսն*²⁵. ք) *հերձ*-«ճեղքվածք», «ճեղք, ծերպ». *հերձ(ն)ուլ*, *հերձի-ք*. ըստ Աճառյանի՝ «անստույգ բառ»²⁶. հմմտ. *կեղծ-իք* (*ր* // *ղ*-ի համար՝ հե.* րl-c // pr-th-լայն // *հար-թ*), *փերթ*-// *պրծ*-, *պարթ*-// *հարթ*- (?)²⁷:

3. Նոր տվյալների մեջբերում և քննություն:

Հե. *p^[h]erk^{[h]o} - > հայ. *հերկ*- // *հերձ* առնչությունը ուշադրության առարկա կարող է լինել համեմատական և տիպաբանական քննության տեսանկյունից: Կան նոր տվյալներ, ըստ այդմ՝ կատարված քննություն, սակայն, առ ի լրացումն դրանց, հայերենի նյութը մասամբ է ներառված համեմատվող լեզուների ցուցադրության մեջ (ռեպե՛տուարում):

Այս դեպքում նկատելի է նաև այն, որ նախ՝ այդ արմատը նախալեզվում վերականգնվում է ոչ միաձև, այլ ունի մի քանի տարբերակ՝ պայմանավորված արմատի ձայնավորի աստիճանավորմամբ:

Անդրադառնանք դրանցից մի քանիսին (հայերենի հնարավոր տվյալների լրացումներով), նախալեզվի արմատի (աժանցական, ձայնդարձային) կազմության՝ հայերենում հնարավոր արտացոլումների մատնանշմամբ:

1) Հե. *p^[h]er-. սա պարզ կամ նախնական արմատն է *p^[h]erk^[h] // *p^[h]rek^[h]- տարբերակային արմատների, առանց -k^[h]- աժանցի, որով նախահնդեվրոպականում բաղադրվում են ձայնդարձով կրկնակ հիմքեր²⁸: Եթե այդ *p^[h]er- արմատին հատուկ է եղել «ծակել» իմաստը, ապա նրանից, իրոք, կարելի կլինի բխեցնել հայ. *հերիւն*. *հեր-հեր* «բուրդ գգելու երկաթյա սանր» ձևերը²⁹: Իսկ աժանցավոր *p^[h]er-+-ek^[h] (> *p^[h]er-k^[h]) // *p^[h]r-ek^[h]- տարբերակային արմատից, թերևս,

²⁵ Նույն տեղում, էջ 186:

²⁶ ՀԱԲ, 1977, էջ 87-88:

²⁷ Հմմտ. Գ.Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 396, 403-404. *հերձակ-ք* ուշ կազմություն է, հոմանիշ՝ *սլաք*, *փքին*, նաև *հերձ(ան)-ել* // *հերձ(ն)-ուլ* հոմանիշները, բավականին հեռու ձևեր են, մի դեպքում՝ *երգիծանեմ*, *ճեղքեմ*, *պատառեմ*, մյուս դեպքում՝ *ճեղքեմ*, *ցելում*, *պատառեմ*, *փեռեկեմ*, *քճքճեմ*:

²⁸ Տե՛ս Դ.Մ., 1984, էջ 239:

²⁹ Հմմտ. ՀԱԲ, 1977, էջ 87:

հայ. *փեռեկ* «ճեղք» (?)³⁰: Նկատենք նաև, որ Աճառյանը *հերհեր*-ը համարում է միջին հայերեն՝ անհայտ ծագման բառ, Ջահուկյանը փորձում է կապել հնդեվրոպական *ser- «իրար կողքի շարել» արմատի հետ, որն անհավանական է³¹. հմմտ. հայ. (բրբռ.) *պեռ, պի-պեռ* «քար, (պինդ) սառցակտոր»՝ (ամրության՝ պնդության հատկանիշով (իմա՝ *հերհեր*-ի երկաթյա լինելը). միջին հայերենի նոր բառարանը չունի *հերհեր* բառը: Իսկ *փեռեկ* «ճեղք» բառը Ջահուկյանը, ինչպես որ Աճառյանը (ոչ անկախ Մեյեից) բխեցնում է հե. *spher-g' - (*spher-) արմատից, որը, թերևս, ավելի հավանական չէ, քան հե. *p^[h]erĕ^[h] // *p^[h]reĕ^[h]- տարբերակային արմատի հետ այն կապելը:

2) Հե. *p^[h]erĕ^[h] (նխն.) «քերծել, հողի մեջ փոս անել», (ուշ) «հերկ. ակոս». այս արմատը բերվում է ցեղակից մի շարք լեզուներում, ընդ որում համարվում է առավել բնորոշ եվրոպական արեալի լեզուներին. հմմտ. հինդկ. pársāna- «խորք. փոս», լատ. porca «ակոս», «մարգ, ածու», գալլ. rica «ակոս», հվգերմ. furuh (գերմ. Furche), հանգլ. furh (անգլ. furrow «ակոս») և այլն³². հմմտ. նաև հայ. *հերկ*- «հողի շերտ՝ ակոս. վարած հող», որ բերում ենք իբրև լրացում եղած տվյալների:

Եվ այս դեպքում, եթե ընդունելի լինի այն, որ հայ. *հերկ*- ձևը լրացնում է ուսումնասիրողների կողմից բերվող միայն եվրոպական տարածքին (արեալին) բնորոշ օրինակները, ապա ըստ ըստ այդմ կարելի է մտածել, որ հիմք-լեզվի հիշյալ արմատը համահնդեվրոպական տարածում է ունեցել³³:

3) Հե. *p^[h]er-ĕ^[h] // *p^[h]r-eĕ^[h]- արմատի այս երկու տիպերն առանձնացվում են իբրև նախատիպ՝ ցեղակից լեզուների արտացոլումների ելքային նշանակման համար. ընդ սմին տիպերից

³⁰ Տե՛ս ՆԱԲ, 1977, էջ 87, 1979, նաև էջ 496-49:

³¹ ՆԱԲ, 1977, էջ 87. ՆԱԲ, 2010, էջ 458:

³² Տե՛ս Դ.-ՄԵ., 1984, էջ 689. 868:

³³ Նշվում է նաև այդ արմատին համանուն *p^[h]erĕ^[h]-, որի նախնական իմաստ են ենթադրում «շերտավոր. երիզ», ուշ՝ «երփներանգ, խայտաբղետ. մուգ կարմիր և այլն». հմմտ. հինդկ. pīśhi- «խայտաբղետ», «բծավոր», հուն. περικρινός «խայտաբղետ», «սևավուն», πέρικη «պերկես (ձուկ)», բոց. խայտաբղետ» և այլն (տե՛ս Դ.-ՄԵ., 1984, էջ 536. 594). թերևս՝ պատմականորեն տեղի է ունեցել անցում բազմիմաստությունից համանունության:

առաջինում, ի թիվս ցեղակից այլ լեզուների տվյալների, բերվում է նաև հայ. *փեսայ* «որոնող՝ փնտրող», «հայցող»՝ իր նախնական իմաստով (հետագայում է, որ ձեռք է բերել սոցիալական երանգ՝ «ամուսնացող»)։ հմմտ. լիտվ. *peršū* «պսակվել», հվգերմ. *fergōn* «խնդրել» և այլն³⁴։ Ըստ Աճառյանի՝ հայ. փեսայ «փեսա. ամուսինը՝ զոքանչի և աներոջ առնչությամբ. քեռայր» բառի ծագումը «անստույգ» է, Ջահուկյանի բառարանում այդ բառի համար նշվում է՝ «ծագումն անյհայտ է»³⁵։

Այլն նշված հնդեվրոպական արմատի երկրորդ տիպից կարելի է, ի թիվս ցեղակից լեզուների տվյալների, ծագած համարել հայ. *հարց*- «հարցնել. հայցել» (թերևս նաև՝ *հարսն*, հականիշ՝ *փեսայ*. մեկը իբրև երկու մաս-ամբողջություն). հմմտ. հինդկ. *praśná-*, ավեստ. *frašna-* «հարց», լատ. *prescor* «խնդրում եմ», գոթ. *fraihnam* «հարցնում եմ», լիտվ. *prašaũ* «պահանջում եմ», հսլավ. *prošiti*, թոխ. *A prak-*, թոխ. *B prek-* «հարցնել»³⁶։

Տարբերակային արմատի նման լայն զարգացումը մի հիմք է հայերենում սոցիալական տվյալ երանգի՝ *հարսն* - *փեսայ* իմաստային (թեմատիկ) միավորի առանձնացման համար, որ իր սկիզբն ունի ավելի վաղ՝ նախագրային ժամանակի մեջ։ Ըստ այսմ, թերևս, հմմտ. ոչ միայն *փեսայ* [**փե(ր)սայ < *փե(ր)ձայ*] // *հարսն* (**հա(ր)ց-ն*), թերևս նաև հայ. *հոր* «մեկի աղջկա ամուսինը. փեսասն», եթե ոչ նաև՝ *պերսե* «փորձված»³⁷։

Նկատենք, որ հայկական ավանդույթով [*<* հնդեվրոպական (?) աղջիկ ուզողին «հարցնել. ուզել՝ խնդրել» (փեսա եղողին) փորձում են, օր.՝ *փայտ են ջարդել* տալիս և այլն (այլ տիպի լեզուներում կա ուրիշ կարգի ավանդույթ. ազգագրական մշակույթ]. հմմտ. հայ. *հարսն <* հե. **prk'-* (**perk'-*) (Джаукян, 1967, էջ 163)։ Հմմտ. նաև (բրբռ.) *փռե* «թափթփված՝ անկարգ մազերով (աղջիկ)»։ հմմտ.

³⁴ Г.-Ив., 1984, էջ 237, 239, 241։

³⁵ ՀԱԲ, 1979, էջ 497։ ՀՄԲ, էջ 763։

³⁶ St' u նույն տեղում, էջ 237, նաև էջ 239, 241։

³⁷ ԲՀ, 1975, էջ 274. ՀԱԲ, 1979, էջ 76, 119. Джаукян, 1967, էջ 301։ Վերջինս այլ քննարկման հարց է, որին կարելի է անդրադառնալ առանձին։

(բրբռ.) *Փռէ (Բաղման)* (տեղանուն՝ Մշ., Սս.), նաև *Բաթմանա կամուրջ, Բաթմանա բուղա* և այլն. հմմտ. հայ. *փռ-ել* < հե. *phēr- «սփռել. տարածել»³⁸ :

4) Հե. *p^[h]er(k^{[h]o})- «կաղնի», «Ժայռ», «բարձունք, բարձրություն» (հմմտ. լատ. quercus «կաղնի»). նորագույն տվյալների համաձայն՝ այս արմատի շրթնաքմային *k^{[h]o}-ն արդյունք է հետադարձ առնմանության՝ քմային *k^[h]-ից (*k^{[h]o} < *k^[h]-), ընդ որում դրանք համարվում են տարբերակային ածանցներ՝ բուն *p^[h]er- արմատի առնչությամբ. բովանդակության պլանում՝ նման իմաստով բառարմատի դրսևորումը ենթադրում է համապատասխան հողատարածք (լանդշաֆտ)՝ հնդեվրոպական լեզուների կրողների նախնական բնակության վայրի առումով: Եվ ըստ այդմ՝ մենք համեմատության մեջ ենք առնում հայ. *հերձ*- «կիսել, գատել» ամատը, որը նույնպես զուգահեռներ ունի ցեղակից լեզուներում թե՛ հնչյունապես բացատրելի անցումների, թե՛ մանավանդ իմաստային-գործառական (ֆունկցիոնալ) նշանակման առումով. հմմտ. նաև լիտվ. perkūnas «որոտ, ամպրոպ», perkūnija «ամպրոպ. փոթորիկ, կայծակ»³⁹: Հմմտ. հե. *p^[h]er(k^{[h]o})u-n- «ամպրոպի աստված». հայ. [...] (?) (համարժեքը փոխարինված է ուշ, օրինակ՝ իրան. *Վահագն* անվանումով⁴⁰

Իսկ վերջինին՝ *հերձ*- «կիսել, գատել» արմատին առնչակից ենք համարում հայ. *հերկ*- արմատը նախնական՝ նույն իմաստով (ավելի ուշ՝ «հողը ակոսել՝ վարել, ցանքս»). հայ. *կ // ձ* լծորդությունը թերևս, ծագում է հե. *k^[h]-//*k^{[h]o}- տարբերակումից: Ընդ սմին՝ բնության երկնային-ամպրոպային տարերքի և երկրային գարնանային ժամանակի երկրագործության (վարուցանքի՝ «հողը մշակելու՝ կիսելու, ակոսելու») իմաստաբանությունը ընդհանուր հնդեվրոպականում հանդես է գալիս փոխադարձ (դիֆուզ) վիճակով:

³⁸ ՀԱԲ, 1979, էջ 531: Ի դեպ՝ բրբռ. *փռէ (փռէ)* ձևին ստուգաբանական բառարանները չեն անդրադարձնում:

³⁹ Г.-Ив., 1984, էջ 410, նաև 866, 880: Ամպրոպի (կայծակի) պաշտամունքային գործառության մասին՝ իբրև գարնանային հանդեսի (խեթ. AN. TAՄ. ŠUM^{SAR}) սիմվոլ- օրինակի, տե՛ս *А. Б. Аракелян, «Дом для омовения» по данным хеттских источников // «Древний Восток», т. 5, Ереван, 1988, էջ 16-20* (իբրև ծանոթագրություն նշվող գրականությամբ հանդերձ):

⁴⁰ Տե՛ս վերը՝ Саркисян, 1990, էջ XIV: Հմմտ. Г.-Ив., 1984, էջ 615:

Այս համատեքստում ուշագրավ տվյալներ են պարունակում հայերենի որոշ բարբառներ, այդ տվյալները, իբրև հնդեվրոպական նախնական ձևի արտացոլում՝ կապված հնչունական անցումների հետ, որ երկու կարգի են:

ա) Մեկն այն է, որ եթե այս դեպքում ևս ընդունելու լինենք հե. *p-ն, ընդհանուր օրինաչափությունից (անցում՝ *h*-ի, *z*-ի, *q*րոյ/*h*) բացի, իբրև շեղում կամ բացառություն այդ ընդհանուրից, կարող էր, արտացոլվել որպես խուլ *ʷ*⁴¹:

բ) Մյուսը վերաբերում է հե. *p և *k^[h]- (*/*k^{[h]o}-*) խուլերի շնչեղ իլացման ձևով արտացոլմանը (հայ. *փ*, *ք*), օր.՝ հե. *p^[h]er-k^[h] (*p^[h]er-ek^[h]-) - հայ. (բրբռ.) *փեքոլ (անել)* «գետինը կիսել՝ հատել», «(ձիու, ցուլի կամ գոմշի՝ ոտներով կամ եղջուրներով գետինը փորփրել)», որից նաև *փեքոել* «պատռել, պատռվել», *փեքոտել* (սաստկ. *փեքոել*-ի) «պատառ-պատառ անել»⁴²: Աճառյանի «Արմատական»-ը չունի *փեքոլ* բառ(արմատ): Մեր այս համեմատությունը ենթադրելի է, եթե ընդունենք բառի նախնական ձևը **փե(ր)քոլ* (հմմտ. *խորհել* – *խոհ*, **քարշել* – *քաշել*, **խարշել* – *խաշել* և այլն), մանավանդ որ բառի ընդհանուր իմաստը («պատռել, հատել») տալիս է այդ հնարավորությունը:

5) Հե. *p^[h]er(k^{[h]o})- // *p^[h]eru- «կաղնի», «ժայռ» տարբերակային արմատի դեպքում ուսումնասիրողները բերում են ցեղակից այլ լեզուներից օրինակներ, որոնց կարելի է ավելացնել հայերենի որոշ տվյալներ⁴³. հմմտ. հայ. (բրբռ.) *պեռ* // *պիպեռ* (<**պեռպեռ*) «ամուր՝ պինդ, կարծր. (փխբ.) ժլատ», թերևս նաև *պղպղաքար*, թերևս նաև *պաղ* (բրբռ.՝ *պալ* «պինդ. ժեռ քար») (Ալշ., Մշ.), *պղպղ(աքար)*, որ Ջահուկյանը համարում է ծագած հե. *bēl- (*bōl-?) (< *b_l-) (ըստ Աճառյանի՝ հայ. *պալ* < հե. *bal- (*bāl-, *b_l-) «խոշոր, ուժեղ») արմատից՝ բաղաձայնական տեղաշարժի ակնհայտ հիմունքով⁴⁴: Այս

⁴¹ Sté 'u Hübschmann, 1895: Джаукян, 1967, էջ 288-292:

⁴² Sté 'u Մալխասյանց, 1945, էջ 497:

⁴³ Г.-Ив., 1984, էջ 866:

⁴⁴ Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 114:

դեպքում նկատի ունենք հիշյալ արմատի պարզ *p^[h]eru- տարբերակի առնչությունը հայ. (բրբռ.) *պալ* «(կարծր) քար. մեծ զանգված». հմմտ. հինդկ. *pnrvata-* «ժայռ», «սար», իւեթ. *peru-* (չեզոք սեռ. ուղղ. հոլ.), *peruni* (ոչ չեզոք սեռ.) «ժայռ»⁴⁵.

6) Հե. *p^[h]erk^{[h]o-} «լեռնային կաղնի», «ժայռերին աճող կաղնի». այլն՝ «սար»: այս դեպքում նույնպես ցեղակից լեզուներից բերվող համեմատելի օրինակների մեջ ներառված չէ հայերենից որևէ օրինակ. հմմտ. հուն. *ἔρκος* «կաղնու անտառ», լատ. *quercus* «կաղնի»⁴⁶: Այդ արմատի հատկապես երկրորդ՝ «սար» իմաստի հիման վրա, թերևս, կարելի է համեմատության մեջ առնել հայ. *քերծ* «ժայռ» բառը (հնչյունական նույն օրենքով, ինչ լատ. *quercus* «կաղնի»), թեև այն վերջին հաշվով, ինչպես որ Աճառյանի ստուգաբանությամբ է, հանգեցվում է *քեր* (*քերթ*) արմատին՝ ծագած հե. *kerd- / *kerth [*(s)ker-] արմատից⁴⁷:

Այս կետում նշենք, որ հե. *p^[h]erk^[h]- «ակոս» > հայ. *հերձ* // *հերկ* առնչություն, ընդ սմին «ակոս» իմաստի համար, ի թիվս ուրիշ երկուսի, վերականգնվում է նաև *p^[h]erk^[h]-, իսկ վերջինս սկզբնական իմաստով նշանակել է «քերծել, հողի մեջ խորանալ՝ հողը փորել». հմմտ. լատ. *porca* «ակոս» (թերևս լատ. *porcus* «խոզ», նախնական իմաստով՝ «(հող՝ գետինը) փորող, քանդող, ճեղքող» (<*p^[h]ork^{[h]o-}). այլն՝ «մարգ. ածու, թումբ». ի դեպ՝ վերջինիս հետ չի համեմատվում հայերեն ձևը, և գտնում են, որ միայն արևմտյան բարբառներում է դիտվում այդս ձևի «ակոս», նախնականը՝ «քերծ(ել)». իմաստի արտացոլումը՝ հայ. *հերկ* «ակոս՝ ցել»⁴⁸:

Այդպես նաև հայ. *փորձ*, *փորձոյ* < հ.-ե. *per-, հմմտ. հուն. *πειρα* «փորձ. փորձարկում», լատ. *ex-perimentum* (նույնը)⁴⁹: Ըստ այդմ՝ այդ արմատը հիմք-լեզվում ևս վերականգնվում է *k^[h]o- բաղադրիչով,

⁴⁵ Հմմտ. Գ.-ԻՎ., 1984, էջ 614:

⁴⁶ Գ.-ԻՎ., 1984, էջ 614, 614₁, 615, 619, 669, 866:

⁴⁷ Գ. Բ. Ջախուկյան, նշվ. աշխ., էջ 114: Հմմտ. ՀԱԲ, 1979, էջ 572:

⁴⁸ Գ.-ԻՎ., 1984, էջ 689, 868:

⁴⁹ Джаукян, 1967, էջ 105:

իսկ առանց այդ բաղադրիչի. հմմտ. հայ. *հարկանեմ* (*հարի, զարկանեմ*), (բրբռ.) *զանեմ, զանի* և այլն:

7) Հե. *p^[h]er(k^{[h]o})u-no- լիահունչ ածանցական արմատի համար, հավանաբար, կարելի է, իբրև ծագումնային համեմատության եզր նկատի ունենալ հայ. (բրբռ.) *էրակ // էրագ* «կարճատև հորդ անձրև» (առասպել.՝ ամպրոպային վերին ուժ՝ «անձրև, հորձանք» և այլն) (Ար., Սս.ն., Մշ., Ալշ.). հմմտ. իեթ. Pirya «Պիրվա (աստվածություն)», «ձիավոր (աստված)» (հետին ժամանակ՝ «Սուրբ Սարգիս» և այլն)⁵⁰: Այս նյութի բովանդակության պլանում քննությունը վերաբերում է այլ թեմայի, որին այստեղ չենք անդրադառնում:

Եվ առհասարակ պետք է նկատի ունենալ, որ բերված և հայերենի հետ համեմատության մեջ դրված հե. p^[h]erĕ^[h]- // p^[h]rek^[h]- և այլ ածանցական կամ ձայնդարձով տարբերակային ձևերը «հանգում է ավելի հին *p^[h]er- արմատին՝ -eú^[h]- ածանցով, որ կազմում է մեկ այլ հիմք ձայնդարձի երկու վիճակով՝ *p^[h]er- ú^[h]- և *p^[h]r- eú^[h]-, որը և առանցքային է հայ. (բրբռ.) ձևերի նոր քննության համար⁵¹:

Եզրակացություններ:

1. Հայ. *հերկ-* (**հերկ-*) արմատի տարբերակային-ծագումնային քննությունը հնդեվրոպական լեզուների համեմատական և տիպաբանական նոր տվյալների նկատառումով ավելի հիմնավոր է դարձնում ցեղակից լեզուների հետ նրա ունեցած ցեղակցային ընդհանրության:

2. Այդ արմատի նախնականն է *հեր-*, որ առանձին գործածված չէ գրական հուշարձաններում և այլ կարգի աղբյուրներում, սակայն հայտնի են այդ հիմքով տարբեր կազմություններ, ընդ որում գրականում և բարբառներում, արմատի հնչյունական կազմի տարբեր ձևացումներում:

3. Հայերենի տվյալների նման ընդգրկումով քննությունը ունի առանցքային նշանակություն ոչ միայն հնչյունական-ձևային նկարագրության համար, այլև իմաստային-ասքային (բովանդակության՝

⁵⁰ Г.-Ив., 1984, էջ 792-797:

⁵¹ Г.-Ив., 1984, էջ 239:

«առասպելական») ձևակերպումների և վերհանումների առումով. հայերենի նյութը տալիս է այդ հնարավորությունը:

Համառոտագրություններ

ԲՀ – Բառգիրք հայոց, քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Մ. Ամալյանի, Ե., 1975:

ՀԱԲ – Հ. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, հհ. 1-4, Ե., 1971-1979:

ՀՄԲ – Գ. Բ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:

հնխ. – հնդեվրոպական նախալեզու (= հե.)

նխն. – նախնական (նախկին):

Մալխապյանց, 1945 – *Մտ. Մալխասեանց*, Հայերեն բացատրական բառարան, հ, IV, Ե., 1945:

ՆՀԲ - Գ. Ալետիքեան, Խ. Միրմելեան, Մ. Ալգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837:

Г.-Ив. - Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы: Реконструкция и сравнительно-типологический анализ праязыка и протокультуры, I-II, Тбилиси, 1984:

Джаукян, 1967 - Г. Б. Джаукян, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967, էջ 301:

Hübschman, 1895 – Н. Hübschman, Armenische Grammatik. I Teil. Armenische Etymologie. Leipzig, 1895:

Meillet, 1908 – A. Meillet, Les dialectes indoeuropéens, Paris, 1908:

Ключевые слова: этимология, варианты корня праязыка, примеры родственных языков, различение корня армянского языка, применение новых данных армянского языка, добавление и уточнение материала армянского языка.

В. Г. Амбарцумян – Этимологические заметки: арм. հերկ-[herk-] < и.-е. *p^(h)erk^{(h)ο-}. - Для и.-е. корня *p^(h)erk^{(h)ο-} в доисторическом периоде выделяется смысл “(выдавливая, принимая силу) делить, порвать, разделить”, в дальнейшем известен как “царапать; рыть, копать”, “похота; борозда”, а это имеет место на основе формального, смыслового и функционального признаков. Происхождение арм. հերկ- [herk-] “пахота; пашня” до сих пор

неясно, остается неубедительным, поэтому следует новое обсуждение вопроса, тем более, что имеются новые, достоверные данные для этимологии и.-е корня.

Из того же корня происходят арм. *hɛr-* [her] (*hɛrhhɛr* [herher] “гребень, чесалка (для шерсти)” (<и.-е. *p^[h]er-), *hɛrhɛp* [herik_c] (разг.-диал.) “достаточно; способный, умелый” (< и.-е. *p^[h]er). *hɛrɫ* [<(h)ɛrɫ- (?)] [herk] “пахота; пашня” (<и.-е. *p^(h)erk^{(h)0-}); последний выделяется минимум по двум составам: а) (*h*)*ɛrɫ*- [herk] “пахота; пашня”, *hɛrɫ*-(*tu*) [herkem] // -*uɫuɫ* [-anem]) “рвать, порвать; разделить; пахать, вспахивать (землю, поле)”, *hɛrɫuɫ* [harem] // *hɛrɫuɫ* [harum] “натирать, тереть” // *hɛrɫuɫuɫ* [harkanem] (< **hɛrɫ*- [hark]) “бить, ударять” [ср. *ɛrɫ*(*h*)-*p* [erkink_c] “небо” // *ɛrɫ*(*hp*) [erkir] “земля”, *ɛrɫ**h**uɫ* [erkiwɫ] “боязнь, страх” и т. д.]. б) *hɛr*(*ɔ*) [herj] “щель, расселина. порыв, разрыв”, *hɛr*(*ɔ*)-(*tu*) [herjem] “вскрывать; рассекать” (<и.-е. *p^[h]er(k^{[h]0-}). Они, как правило, имеют одинаковое происхождение, тем самым в армянском существует вариативность частиц *-*r* [r]//*-u* [n] при общем смысле “разделить на два; прорвать; раздвоение”.

В статье основное внимание выделено на варианты корня *hɛrɫ*-[herk] “пахота; пашня” и *hɛr*(*ɔ*)-[herj] “щель, расщелина. порыв, разрыв”, о происхождении которых, сделанных со стороны классической компаративистики, нельзя считать цельным и законченным, к которым прилагаются еще следующие: *hɛru*. [hers] “гнев, ярость” (*hɛrunuɫ* [hersotel] “сердиться, рассердиться” и т. д.), *hɛru**u* [harsn] “невеста; сноха” и т. д. При и.-е. корня *p^[h]er(k^{[h]0-})/-*p^[h]eru- “дуб; скала, утес” ср. арм. (диал.) *uɫɛn* [peɹ] // *uɫ**uɫ**ɛn* [pɹeɹ] (<**uɫɛn**uɫ**ɛn* [peɹpeɹ]) “крепкий, прочный; твердый; густой”. (мет.) “скупой, жадный”, может быть еще *uɫ**uɫ*[paɫ] (диал.) *uɫ**uɫ* [paɫ] “крепкий, скала (камень)” и т. д).

Сравнение и.-е. *p^[h]er(k^{[h]0-} > арм *hɛrɫ*- [herk]// *hɛr*(*ɔ*) [herj] охватывает еще другие словоформы в армянском языке, при выяснении их происхождения предлагаемая этимология становится более обоснованным и приемлемым.

Keywords: etymology, variants of the root of the Proto-language, examples of related languages, distinguishing the root of the Armenian

language, application of new data of the Armenian language, addition and clarification of the Armenian language material.

V. G. Hambartsumyan. - Etymological Notes: Armenian հերկ- [herk-] < i.e. *p(h)erk(h)o-. - For the i.e. root *p^(h)erk^{(h)o-} in the prehistoric period the meaning "(extruding, taking force) to divide, tear, divide" is distinguished, later known as "scratch; dig", "lust; furrow", and it takes place on the basis of formal, semantic and functional features. The origin of the Arm.*հերկ-* [herk-] "plowing; arable" is still unclear, remains inconclusive, so a new discussion of the issue should follow, especially since there is new, reliable data for the etymology of the i.e. root.

The same root is derived from the Arm. *հեր-* [her] (*հերհեր* [herher] "comb, comb (for wool)" (< н.-е. *p^[h]er-), *հերիք* [herik_c] (colloquial) "sufficient; capable, skilled" (< i.e. *p^[h]er). *հերկ* [<(h)երկ- (?)] [herk] 'plowing; arable' (< i.e. *p^(h)erk^{(h)o-}); the last minimum is distinguished by two compositions: (a) *(h)երկ-* [herk] "tillage, arable land" *հերկ-(եւ)* [herkem] // *-անեւ* [-anem]) "tear, tear; divide; plow, plow (land, field)", *հարեւ* [harem] // *հարու* [harum] "rubbing, rubbing" // *հարկանեւ* [harkanem] (<*հարկ- [hark]) "hitting, hitting" [cmp. *երկ(իւ)-ք* [erkink_c] "sky" // *երկ(իր)* [erkir] "earth", *երկիւղ* [erkiwł] "fear, fear", etc.]. b) *հեր(ձ)* [herj] "cleft, rift, tear", *հերձ-(եւ)* [herjem] "to open; to dissect" (< i.e. *p^[h]er(k^{[h]o-}). They tend to be of single origin, thus in Armenian there is a variability in the particles *-ը [r]//ւ [n] with a general sense of "split in two; break through; split apart".

The article focuses on the variants of the root *հերկ-* [herk] 'plowing; plowing' and *հերձ-* [herj] 'crevice, crevice. gust, tear', whose origin, made by classical comparativism, cannot be considered whole and complete, to which the following are also attached: *հերս.* [hers] 'anger, rage' (*հերսոտել* [hersotel] 'to be angry, to be angry', etc.), *հարսն* [harsn] 'bride; daughter-in-law', etc.

With the i.e. root *p^[h]er(k^{[h]o-})//*p^[h]eru- "oak; rock, cliff" cf. (dial.) *պեր* [peɾ]// *պիպեր* [pipɛɾ] (<*պերպեր) "strong, solid; firm; dense". (met.) "miserly, greedy", may be also *պաղ* [pał] (dial. պալ [pal] "sturdy, rock (stone)", etc).

The comparison of i.e. *p^[h]er(k^{[h]o-} -> арм. *հերկ-* [herk]//*հերձ* [herj] covers other word forms in Armenian, the proposed etymology becomes more reasonable and presumable when determining their origin.

ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ

Բանասիր. գիտ. թեկնածու Ա. Ս. Խաչատրյան

Հիմնաբառեր: Նորաբանություն, բարդ բառ, արևմտահայերեն, շարահյուսական հարաբերություն, բառակապակցություն, բայ, բայաձև, ուղիղ խնդիր:

Բառակազմական համակարգը ներկայացնում է տվյալ լեզվի բառակազմական միջոցների և եղանակների, բառակազմական միավորների, բառակազմական տիպերի ու դրանց կաղապարների և բառերի կազմության հետ կապված հնչունաբանական ու քերականական իրողությունների ամբողջություն: Յուրաքանչյուր լեզու իր պատմական զարգացման ընթացքում ստեղծում է բառակազմության իր միջոցներն ու եղանակները: Այս ամենից բացի բառապաշարի զարգացմանը զուգահեռ լեզվի զարգացման ամեն մի փուլում գործում են նախորդ փուլերի բառակազմական իրողությունները, որոնք տվյալ փուլում դրսևորվում են տարբեր կենսունակությամբ: Ժամանակի ընթացքում լեզվից իսպառ վերանում են որոշ բառակազմական երևույթներ, առաջ են գալիս նոր իրողություններ, որոնք հնարավորություն են տալիս բառեր կազմելու առավել կենսունակ եղանակներով: Հայերենը պատկանում է այն լեզուների թվին, որոնց բառակազմությունը բավական ճկուն է: Այս առանձնահատկությունը հայերենում գործածվող արմատների, բառերի ու ածանցների միջոցով բազմաթիվ նոր բառեր ստեղծելու, օտար լեզուների շատ տերմիններ հայերենով հեշտությամբ թարգմանելու և, իհարկե, դրանց իմաստները հայեցի վերարտադրելու հնարավորություն է տալիս:

Դեռևս գրաբարից սկսած՝ հայերենը չի բավարարվել պարզ և արմատական բառերի կիրառմամբ, այլ ստեղծել է բազմաթիվ նոր բաղադրություններ: Բառապաշարի ուսումնասիրության ընթացքում կարևոր դերակատարում ունեն նորակերտ բառերը (նորաբանությունները, նորակազմությունները), դրանց երևան բերած իմաստային և բառակազմական նրբերանգները: Լեզվի բառապաշարը անընդհատ փոփոխվում և զարգանում է, որը անմիջականորեն կապված է հասարակական կյանքի, բնագավառների փոփոխման հետ: Շատ դժվար է հստակ ներկայացնել բառերի ստեղծման և նրանց հիմքը հանդիսացող առարկաների, երևույթների առաջացման ժամանակագրությունը: Ակադ. Գ. Ջահուկյանը գրում է. «Իրերի աշխարհը պահանջում է բառերի նորացում, և բառերի փոփոխության պատճառներն ըմբռնելու համար պետք է հաճախ դուրս գալ լեզվի սահմաններից և մտնել հասարակության, նրա մշակույթի, գիտության ու արվեստի պատմության մեջ»¹:

Բառակազմական իրողությունների ուսումնասիրությունը միշտ էլ լեզուն ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում է եղել²: Դեռևս գրաբարյան շրջանից փորձեր են արվել որոշելու բառերի կառուցվածքը, դասակարգելու նաև բառակազմական միավորները, այդ թվում՝ բարդության բաղադրիչների՝ միմյանց նկատմամբ ունեցած հարաբերությունները (հոլովական, շարահյուսական):

1. *Բաղադրությունների բաղադրիչների հոլովական հարաբերությունները*: Անվանական բառերի (գոյականների և բայարմատի, գոյականների և գոյականների) միացումից ստեղծված բարդությունները մեծ տարածում ունեն հայերենում: Նման բաղադրումներից կազմվում են գոյականներ, ածականներ, որոնցով մեծապես հարստանում է արևմտահայերենի բառային կազմը: Երբ բարդու-

¹ Գ. Բ. Ժաուկյան, *Общее и армянское языкознание*, Ереван, 1978:

² Տե՛ս Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, Ե., 1965: Ս. Մուրվալյան, *Հայոց լեզվի բառային կազմը*, Ե., 1955: Է. Բ. Աղայան, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., 1984: Ս. Ա. Էլշյան, *Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն*, Ե., 1989: Ս. Ս. Մարգարյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1990:

թյան բաղադրող հիմքը արտահայտված է բայարմատով կամ բայահիմքով, ապա վերջինս իրեն է ենթարկում բարդության առաջին բաղադրիչը: Նման բարդությունները բառակապակցության վերածելիս առաջին բաղադրիչը ստանում է զանազան հոլովների արտահայտած իմաստներ:

ա) *Ուղղական-հայցականի նշանակությամբ. արժեչափ, ապագայակերտ, լրասփիւռ, գանձատրում, խաղաղաբեր, ջղագար, ճակատագրորոշ, հայրենակերտիչ* և այլն:

բ) *Սեռական-տրականի նշանակությամբ. սպայակոյտ (գլխավոր շտաբի իմաստով), ռազմավորձ, հուզաշխարհ, ճնշամիջոց, հրթիռատարափ, հայադարբնոց, գործելաձև, կենսագրահ:*

գ) *Բացառականի նշանակությամբ. դպրոցագուրկ, վարկագուրկ, հեռակապ:*

դ) *Գործիականի նշանակությամբ՝ աշխարհացրիւ, բրդահիւս, ծիրանավառ, ախտավարակված, ատելավառութիւն, պարսպապատ, մատնանիշ:*

Նշենք, որ սույն թեմայի առնչությամբ ներգոյականի նշանակությամբ նորակազմություններ չեն հանդիպել:

2. *Բարդությունների բաղադրիչների շարահյուսական հարաբերությունները:* Ինչպես գիտենք, բառաբարդումը կարևոր միջոց է լեզվի բառային կազմի հարստացման համար: Այն որոշ չափով առնչվում է ձևաբանության և շարահյուսության հետ: Շարահյուսության հետ բառաբարդման կապն արտահայտվում է բարդության բաղադրիչների բազմազան շարահյուսական հարաբերություններով: Թեև իսկական բարդությունների բաղադրիչների շարահյուսական կապը ձևաբանորեն դրսևորված չէ և ընդհանուր առմամբ մթագնած է, սակայն յուրաքանչյուր բարդության մեջ այն առկա է պոտենցիալ ձևով և երևան է գալիս, երբ բարդությունը վերածում ենք բառակապակցության և միայն այդ դեպքում կարող ենք վերապրուկորեն որոշել նրանց շարահյուսական պաշտոնը: Այս առիթով Մ. Աբեղյանը գրում է. «Ինչքան էլ իսկական բարդության մեջ շարահյուսական կապակցության ձևն իբրև այդպիսին անհե-

տացած է, բայց և այնպես երկու բաղադրիչ մասերի շարահյուսական հարաբերության զգացումը մնում է: Սակավաթիվ են այնպիսի իսկական բարդությունները, որոնց երկու մասերն էլ ունեն համադասական հարաբերություն»³. օրինակ՝ *դեզադեզ, գունդագունդ, հեզանագ, շեղջաշեղջ* և այլն: Սակայն սովորաբար բարդության բաղադրիչ մասերի հարաբերությունը ստորադասական է. բաղադրիչներից առաջինը ըստ իմաստի երկրորդի լրացումն է:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեքվող խոսքի մասերն ավելի լայն հնարավորություններ ունեն բառաբարդման համար, քանի որ նրանց քերականական կարգեր ունենալը օժանդակում է բարդ բառեր կազմելուն, բարդության կազմի մեջ մտնող հիմքերի փոխհարմարվելուն:

Բարդությունների բաղադրիչները, երբ վերածում ենք բառակապակցության, միմյանց հետ որոշակի շարահյուսական հարաբերության մեջ են գտնվում, որով և բացատրվում է բարդության ներքին ձևը. օր.՝ *մատենադարան* բառի ներքին ձևն է «մատյանների դարան», որի առաջին անդամը լրացնում է երկրորդին: Երկուսը միասին ներկայացնում են հատկացուցիչ-հատկացյալ կապակցություն: Ինչպես նաև՝ *մատենագիր* «մատյան գրող» (ուղիղ խնդիր), *ջրակյաց* «ջրում ապրող» (տեղի պարագա):

Բարդությունների բաղադրիչների շարահյուսական հարաբերությունները լինում են համադասական և ստորադասական:

Համադասական հարաբերությունները առավել հաճախ դրսևորվում են շաղկապական և հարակցական հարադրություններից ստացված կցական բարդությունների ժամանակ՝ *անցուդարձ, կերուխում*, սակայն, այնուամենայնիվ, կան քիչ թվով ածական հիմքերով բուն կամ իսկական բարդություններ, որոնք մերձիմաստ բաղադրական հիմքեր ունեն, ինչպես՝ *վեհարժեք, գիտարուեստ, տանդեմ, սահմանադուռ, բազմարհեստ*:

Ստորադաս բաղադրիչով բարդ բառերը գերակշիռ տեղ են գրավում արևմտահայերենի բառապաշարում: Այդպիսի բարդ

³ Մ. Մբեղյան, նշվ. աշխ., էջ 201:

բառեր կազմվում են ստորադաս բաղադրիչներ ունեցող համարյա բոլոր կաղապարներով. որոշիչ + որոշյալ, հատկացուցիչ + հատկացյալ, գործողության օբյեկտ + գործողություն, գործողության հանգման առարկա + գործողություն, գործողության կատարման միջոց + գործողություն, գործողության կատարման ձև + գործողություն, գործողության կատարման տեղ + գործողություն, գործողության կատարման ժամանակ + գործողություն և այլն:

Արևմտահայերենի բարդ բառերի գերակշռող մասում հիմնական իմաստային կենտրոնը վերջին բաղադրիչն է: Վերջինս արտահայտում է այնպիսի իմաստ, որը կոնկրետանում է առաջին բաղադրիչի միջոցով: Ընդ որում, գերադաս բաղադրիչը կարող է լինել անվանական կամ բայական: Առաջինի դեպքում բարդության բաղադրիչների կապակցությունը հիշեցնում է անվանական բառակապակցություն՝ որոշիչ, հատկացուցիչ կախյալ բաղադրիչներով, իսկ երկրորդ դեպքում՝ բայական բառակապակցություն, որում կախյալ բաղադրիչները խնդիրներն ու պարագաներն են:

Այժմ ներկայացնենք, թե շարահյուսական ինչպիսի փոխհարաբերություններ են հնարավոր բառաբարդման կաղապարներում, երբ բաղադրիչներից մեկը բայական հիմք է:

Արևմտահայերենում բավականին տարածված են գոյական (մասամբ նաև այլ խոսքի մասերով) + բայահիմք կաղապարով կազմված բարդ բառերը, որոնցում սերող հիմքը, որն արտահայտված է անուն խոսքի մասերով, կարող է կատարել զանազան խնդիրների ու պարագաների պաշտոններ: Իսկ թե ինչպիսի լրացում կընդունի բաղադրող հիմքում հանդես եկող բայարմատը, պայմանավորված է վերջինիս բայիմաստով և սեռով: Եթե բարդության բայական բաղադրիչը ներգործական սեռի բայ է, ապա պարզ է դառնում, որ առաջին բաղադրիչը կարող է լինել կրող խնդիր: Իսկ եթե բարդության երկրորդ բաղադրիչն արտահայտված է չեզոք կամ կրավորական սեռի բայերով, առաջին բաղադրիչները լինում են անուղղակի խնդիրներ և պարագաներ:

Ռ. Մկրտչյանը «Ակնարկներ ժամանակակից հայոց լեզվի բառագիտության և տերմինաբանության» ժողովածուի «Խոսքի մասերի բառաբարդման կաղապարները ժամանակակից հայերենում» բաժնում նշում է. «Ընդհանուր առմամբ բայական գերադաս բաղադրիչներով բարդությունները կարելի է արտահայտել գործողության հետ կապված առարկաներ + գործողություն և գործողության հետ կապված հանգամանքներ + գործողություն ընդհանուր կաղապարներով, որոնք իրենց մեջ կարող են ընդգրկել մի շարք ենթատեսակներ՝ մասնակաղապարներ»⁴:

Գոյական + բայարմատ կամ բայահիմք կաղապարը բավական կենսունակ է ինչպես ժամանակակից արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում: Այս կաղապարում, բնականաբար, հիմնական իմաստն արտահայտվում է բայարմատով, իսկ սերող հիմքում գտնվող բաղադրիչը՝ այս դեպքում գոյականը, տարբեր իմաստներով ու հարաբերություններով լրացնում է գերադաս անդամին: Այս կաղապարով կազմված բարդությունները հնարավորություն ունեն արտահայտելու բայի և իր լրացումների բոլոր տեսակի շարահյուսական հարաբերությունները, որոնք արտահայտվում են զանազան հոլովներով ու կապերով: Վերը նշված կաղապարով կազմվում են գոյականներ և ածականներ:

Գոյական + բայարմատ կամ բայահիմք կաղապարով կազմված բարդությունները, ըստ Ս. Էլոյանի, ընդհանուր առմամբ արտահայտում են երեք հիմնական բառային իմաստ. 1. գործողության անվան (երբ բայարմատն ունի անորոշ դերբայի կամ բայանվան նշանակություն), 2. գործողի անվան կամ գործողի հատկանիշի (երբ բայարմատն ունի ենթակայական դերբայի նշանակություն), 3. գործողությունն իբրև հատկանիշ (երբ բայարմատն ունի հարակատար դերբայի նշանակություն)»⁵:

⁴ Ակնարկներ ժամանակակից հայոց լեզվի բառագիտության և տերմինաբանության, Ե., 1982, էջ 108:

⁵ Տե՛ս Վ. Դ. Առաքելյան, Ա. Հ. Խաչատրյան, Ս. Ա. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Ե., 1979, էջ 333:

ա) Գործողության անվան իմաստ արտահայտող բարդություններ: Գոյականով և բայարմատով բաղադրված բարդությունների մի մասն արտահայտում է գործողության անվան իմաստ: Այս բառերը մեծ մասամբ այնպիսի վերացական գոյականներն են, որոնք անվանում են որևէ երևույթ, իրողություն և սակավ գործածականություն ունեն. օրինակ՝ *ծիրանավառ*:

բ) *Գործողի անուն արտահայտող բարդություններ*: Այս իմաստային խմբի բարդությունները կարելի է բաժանել երկու հիմնական տեսակի, որոնք արտահայտում են. 1. *գործողություն կատարողի անձի իմաստ՝ մորթապաշտ, անտառապահ, ակնաբույժ, վիրաբույժ, ջահակիր, պատմագիր, տառաստեղծ, լարախաղաց, փայտահատ* և այլն, 2. *գործողություն կատարող առարկայի, գործիքի, մեքենայի, երևույթի իմաստ. օր.՝ մարդատար, փոշեկուլ, ջրցան, կողմնացույց, ուրախաչափ, աղբատար, ցորենաքաղ, սերմնացան*:

Այս իմաստային խմբում բաղադրող հիմքում գտնվող բայական բաղադրիչը հիմնականում արտահայտում է ենթակայական դերբայի իմաստ:

3. *Գործողությունն իբրև հատկանիշ արտահայտող բարդություններ*: Հարկ է նշել, որ շատ դեպքերում բարդությունների շարահյուսական հարաբերությունները որոշելը բավական դժվար է, և հաճախ դրանք որոշվում են հարաբերական առումով՝ նկատի ունենալով բարդության առավել ընդունելի և առավել բնորոշ շարահյուսական հարաբերությունը:

Անվանական խոսքի մաս (գոյական, ածական, դերանուն) + բայարմատ (բայահիմք) կաղապարով կազմված բարդությունները շարահյուսական կապակցության վերածելիս կարող են արտահայտել հետևյալ հարաբերությունները՝ խնդրային, պարագայական և ենթակայական:

Ստորև կանդրադառնանք այս հարաբերություններին առանձին-առանձին՝ փորձելով ներկայացնել նրանց արտահայտած շարահյուսական հարաբերությունների նրբերանգները:

4. *Բարդությունների բաղադրիչների խնդրային հարաբերությունները*: Գոյական + բայարմատ (որոշ դեպքում էլ՝ այլ խոսքի մաս) կաղապարով կազմված բարդություններում դրսևորվում են խնդրային հետևյալ հարաբերությունները:

ա) *Ուղիղ խնդրային հարաբերություն*: Այս կաղապարով կազմված բարդություններում երկրորդ բաղադրիչն արտահայտված է բայով, իսկ առաջին բաղադրիչը կարող է լինել գոյական, սակավ դեպքում՝ նաև դերանուն, որոնք ցույց են տալիս այնպիսի առարկաներ, անձեր կամ որպես այդպիսիք մտածված երևույթներ, որոնք անհրաժեշտ են տվյալ գործողության կատարման համար. օր.՝ *արժեչափ, ապագայակերտ, լրասփիւռ, հայակերտ, հայրենակերտիչ, լրասփիւռ, գանձատրում, ճակատագրորոշ* և այլն:

բ) *Հանգման խնդրի հարաբերություն*: Այսպիսի հարաբերություն ունեցող բարդության սերող հիմքի գոյականը արտահայտում է սեռական-տրական հոլովի իմաստ: Այս կաղապարով հիմնականում կազմվում են ածականներ՝ *կրթանպաստ, հայաստանակեդրոն*:

գ) *Միջոցի խնդրի հարաբերություն*: Նման հարաբերություն արտահայտող բարդությունները հիմնականում հատկանշային իմաստ ունեն և կազմում են ածականներ, որոնց մի մասը ժամանակակից ըմբռնմամբ վերածվել է գոյականի: Բարդության մեջ գոյական բաղադրիչը արտահայտում է գործիական հոլովաձևի իմաստ՝ *ցեխապատ, մատնանիշ*:

դ) *Անջատման խնդրի հարաբերություն*: Այս կաղապարով հիմնականում կազմվում են ածականներ: Սակայն հանդիպում են նաև գոյականներ, որոնք արտահայտում են տարբեր անձերի, առարկաների անուններ: Այս կաղապարի գերադաս բաղադրիչը արտահայտում է այնպիսի մի գործողության գաղափար, որն ունի ծագելու, սերելու, ինչպես նաև մի բանից զրկվելու, մի բանից հեռանալու իմաստներ: Այսպիսի կազմություններում բարդության առաջին անդամը ունի բացառական հոլովի իմաստ՝ *դպրոցագուրկ, վարկագուրկ*:

5. *Բարդությունների բաղադրիչների պարագայական հարաբերությունները*; Պետք է նկատել, որ բարդությունների մեջ դրսևորվում են ոչ բոլոր պարագայական հարաբերությունները, իսկ եղածներն էլ դրսևորվում են ոչ հավասար ծավալով: Մեզ հանդիպած նորաբանությունների դեպքում առավել գործուն են տեղի և ժամանակի, մի դեպքում էլ պատճառի պարագայական հարաբերություն արտահայտող բարդությունները:

ա) *Տեղի պարագայական հարաբերություն*: Այս կադապարով կազմված բաղադրությունների ստորադաս բաղադրիչներն արտահայտում են տարածական հարաբերություններ, իսկ գերադաս բաղադրիչները՝ շարժման, ուղևորման գործողություն՝ *աշխարհացրիւ, հեռակապ, աշխատելադաշտ, աշխարհատարած*:

բ) *Ժամանակի պարագայական հարաբերություն* արտահայտող կադապարով կազմված բաղադրությունը փոխանվանաբար ածականից անցել է գոյականի համակարգը՝ *վերանորոգ*:

Բառերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բայական գերադաս բաղադրիչներով բարդ բառերն առանձնապես արգասավոր չեն գոյականներ կազմելիս, քանի որ այդպիսի կառուցվածք ունեցող բարդ բառերի մեծ մասն արտահայտում է հատկանշային հարաբերություն:

Նյութի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում գործուն են բառակազմական գրեթե նույն սկզբունքները: Նորակազմությունների բաղադրիչները միմյանց նկատմամբ ունեն մի շարք հարաբերություններ՝ հոլովական, շարահյուսական: Դրանցից յուրաքանչյուրն իր հերթին բաժանվում է ենթախմբերի:

Ключевые слова: неологизм, сложные слова, западноармянский язык, синтаксические отношения, словосочетание, форма, глагол, прямое дополнение.

А. С. Хачатрян - О некоторых словообразовательных особенностях неологизмов западноармянского языка. - Изучение неологизмов (неослово-

образований) всегда находилось в центре внимания лингвистов. В западно-армянской прессе компоненты (многокомпонентность) неологизмов связаны рядом отношений: падежных, синтаксических и т. д. Следует отметить, что во многих случаях довольно сложно определить синтаксические отношения компонентов сложных слов, и очень часто они определяются относительно, имея в виду более приемлемые, более типичные синтаксические отношения сложных слов.

В преобладающей части западноармянских сложных слов главный смысловый центр - последний компонент. Он выражает значение, которое конкретизируется посредством первого компонента. Причем главный компонент может быть именным или глагольным. В первом случае соединение компонентов сложного слова напоминает именованное словосочетание: определение, несогласованное определение с зависимыми компонентами, а во втором случае - глагольное словосочетание, где зависимыми компонентами являются дополнения и обстоятельства.

Keywords: neologism, compound words, Western Armenian, syntactic relations, collocation, form, verb, direct object.

A. S. Khachatryan - On Some Word-forming Peculiarities of Neologisms in the Western Armenian Language. - The study of neologisms (new word formations) has always been in the focus of linguists' attention. In the Western Armenian press, the components of neologisms (multicomponent) are connected by a number of relations: case, syntax, etc. It should be noted that in many cases it is rather difficult to determine the syntactic relations of the compound words' components and very often they are defined relatively, meaning more acceptable, more typical syntactic relations of compounds.

In the prevailing part of Western Armenian compound words the main sense center is the last component. It expresses a meaning, which is concretized through the first component. Moreover, the main component may be nominative or verbal. In the first case, the connection of the compound word components resembles a nominal word combination: definition, attribute with dependent components, and in the second case - a verbal collocation, where the dependent components are objects and adverbials.

**ՆՈՐԱՄՈՒՑ ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ՄԽԱԼ
ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(Ինտեգրացիա, ասոցիացիա, մոտիվացիա)
Բանասիր. գիտ. թեկնածու Ս. Կ. Տիոյան**

Հիմնաբառեր: Օտար բառեր. անհարկի գործածություն. հայերեն համարժեքի ընտրություն. լեզվական հսկողություն.

1. Մոտիվացիա:

Մեր սփյուռքահայ մտավորականները անընդհատ պայքարում են օտար տերմինների՝ արևմտահայերենի մեջ ներթափանցման դեմ: Չունենալով սատարող որևէ պետական կամ պաշտոնական լծակ, այնուամենայնիվ, սփյուռքահայ մամուլում տեղ են գտնում որոշակի թվով օտար բառեր, մեծ մասամբ՝ նորակազմ տերմիններ, մասնավորապես ռազմաքաղաքական և մարզական ոլորտների վերաբերող. օր.՝ *մոբիլիզացնել, ինտեկրում, անտիդոմիա, թրիպլին, քափիթեն, բլինդաժ* և այլն: Դրանք հետագայում աշխատել են փոխարինել հայերեն համարժեքներով. ինչպես՝ *տիքթեթելադրանք, պարտադրանք, պիտոճէ* - ելևմուտ (ֆրանս. փոխառություն), *պլոք* - յանձնախումբ և այլն¹: Օրինակ՝ «Հայկական երեսփոխանական *պլոքի* ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի՝ Լիբանան - Քորեա խորհրդարանի բարեկամութեան յանձնախումբի նախագահի իր հանգամանքով, «Շաղգոյեան» կեդրոնի իր գրասենեակին մեջ ընդունեց Լիբանանի մօտ Քորեայի նորանշանակ դեսպան Եոնկ Տայ Քոոնը, . . . (April 30, 2019)»:

Արևելահայերենի դեպքում խնդիրը հանգում է հասարակության պատասխանատվությանը, ավելի ճիշտ՝ բացակայությանը: Այլապես ի՞նչ կնշանակի, օրինակ, «Շատ լավ մթնոլորտում անցավ փառատոնը. երեխաները *մոտիվացվեցին*» նախադասության մեջ *մոտիվացվել* բայը². այդ բայի *մոտիվ* հիմքը (*մոտիվ* - *մոտիվանալ, մոտիվացել, մոտիվացվել*), իբրև առանձին միավոր, օտար բառերի

¹ Քասիմ (Մ. Գոչունեան), Օրուան մտածումներ, թիւ 1, Իսթանպուլ, 2014, էջ 441- 442:

² Տե՛ս «TV Մոլ», 2021, հ. 22, էջ 4:

բառարանում նշվում է երկու իմաստով՝ «1. պատճառ, դրդապատճառ, շարժառիթ, 2. պատճառաբանություն, փաստարկ, հիմնավորում»³: Դատելով գրական հայերեն ճիշտ համարժեքներից՝ բառն այս դեպքում անտեղի է գործածվել:

Բերենք հետևյալ օրինակները: «Նայելով բակում խաղացող ուրախ երեխաներին՝ իմ մեջ առաջանում էր *մոտիվացիա*, որ ես դա անել չեմ կարող»⁴: Այս դեպքում, ենթադրվում է, *մոտիվացիա* բառը «միտք, մտահոգություն» իմաստով է կիրառվել: Այլն՝ «Կարգախոսը պետք է մոտիվացիա համար»⁵: Այս օրինակում բառի մեկնաբանությունը անհնարին է դառնում՝ համատեքստի ոչ ամբողջական լինելու պատճառով:

Օտար բառը հատկապես Հանրային հեռուստատեսության հաղորդավարների խոսքում նախընտրելի է համարվում, որ տրամադրված գործածում են իրենց գրեթե ամեն կարգի հաղորդումներում. դա նկատում ենք «Առավոտ լուսոն», «Հարցազրույցները» հոդորդումներում, պատեհ-անպատեհ առիթներով, կարծես «մեծագույն հաճույքով» օգտագործում են հաղորդումների հեղինակները: Ահա այսպես, անփութորեն, օտար բառերն ամենուրեք տարածվում են (դատելով մեր ունեցած բազմաթիվ օրինակներից՝ առավելապես երիտասարդների խոսքում), ընդ որում՝ առօրյա խոսքից մինչև պաշտոնական, բանավորից մինչև գրավոր:

Մոտիվացիա բառը, որ ունի վեցից ավելի հայերեն համարժեքներ՝ *պատճառ, դրդապատճառ, պատճառաբանություն, շարժառիթ, փաստարկ, հիմնավորում*, իրենց ածանցյալներով, որոնք ծածկում են օտար բառի իմաստային դաշտը, մնում է ավելի գերադասելի, քան նրա հայերենի համարժեքները: Դա, կարծում ենք, պայմանավորված է մի կողմից՝ հայերենին ըստ ամենայնի չտիրա-

³ *Ս. Հայրապետյան*, Օտար բառերի բառարան, Ե., հեղին. հրատ., 2011, էջ 643:

⁴ Հ 1 հեռուստաալիք. 18.06.2021 (իր մասին պատմում էր հաշմանդամություն ունեցող Ա. Սահակյանը):

⁵ Հ 1 –ով հեռարձակվող «100 հարց անվանի մարդկանց» հյուրին՝ երգիչ երգահան Գոռ Սուլջանին երեխաները հարցրին, թե ինչ է նրա համար կարգախոսը, որի պատասխանը եղավ վերը բերվածը (17-ը հոկտեմբերի 2021թ. , ժամը՝ 8. 20):

պետելու հանգամանքով, որ առավել տեղին չէ հեռուստատեսային հաղորդման հեղինակի դեպքում, մյուս կողմից՝ օտարլեզվյան նույնպիսի հաղորդումները նմանակելու կամ օտար բառերով խոսելը մտավորականի ցուցանիշ համարելու միտումով:

Մոտիվացիա բառի արմատը՝ *մոտիվ*, վկայված է Ստ.Մալխասյանցի բառարանում՝ որպես ֆր. motif բառի փոխառություն ռուսերենի միջոցով, և ունի հետևյալ երեք իմաստները. «1. պատճառ, շարժառիթ. 2. պատճառաբանություն հոգուտ մի բանի. 3. երգի եղանակ»⁶: Այնինչ, «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» այն բերվում է ընդամենը երկու իմաստով. «1. պատճառ, շարժառիթ և 2. երգի եղանակ»⁷: Է. Բ. Աղայանի բառարանում *մոտիվ* բառը երեք իմաստով է նշվում. «1. երաժշտական եղանակ, 2. թեմա, 3. պատճառ, առիթ»⁸:

Մոտիվացիա բառը հայերենին է անցել առանձին, իսկ նրա բաղադրական հիմքը՝ *մոտիվ*, այստեղ բերում ենք ցույց տալու, թե այն հայերենում իմաստային ինչ ընդգրկում ունի՝ անկախ օտար լեզվում նրանից կազմված և տվյալ դեպքում հայերենի անցած *մոտիվացիա* բառի գործածության բնույթից:

Մոտիվացիա բառը չունեն հիշյալ բառարանները, ուստի այն նորահայտ փոխառություն է արդի հայերենում, որ ունի չկարգաբերված գործածություն: Հայերենի գրական նորմային լիովին տիրապետելու դեպքում այն կարող է հանդես գալ ճիշտ կիրառումով, այլև ոչ այն հաճախականությամբ, որ նկատում ենք վերջին տարիներին, բառը գործածողի, այսպես կոչված, «բարձր ոճում»՝ գրավոր կամ բանավոր (վերջին դեպքում մեր թեմային առնչվող մամուլի և հեռուստատեսության ոլորտում):

Ընդ որում նոր գրական հայերենում *մոտիվացիա* փոխառությունը հավասարապես գործածվում է *մոտիվ* բառից հայերենում կազմված *մոտիվացնել*, *մոտիվացում* և այլն բառերին հետ՝ նույն

⁶ ՄԲԲ, հ. 4, էջ 359:

⁷ ԺՀԼԲԲ, հ. 3, էջ 558:

⁸ ԷԲԲ, էջ 1027:

իմաստային դաշտում: Վերջինները հայերենում նորակազմություն են, չենք գտնում, օրինակ, հիշյալ բառարաններից ոչ մեկում: Եվ փոխառյալ *մոտիվացիա* բառի պես, հայերենում ունենալով իրենց բազմաթիվ համարժեքները, վերջին տարիների հանդես են գալիս առավելապես ոչ ճիշտ գործածությամբ: Դրանք սփռված են տպագիր բազմապիսի նյութերում՝ ըստ հեղինակի նախասիրության, հնչում են ռադիոյով և հեռուստատեսությամբ. օր.՝ «Եթե դու *մոտիվացում* ունես, ապա քեզ համար ընդամենը գոյություն ունի խնդիր, որը պետք է լուծել,- ասում է Նատալիան»⁹:

Վերջապես՝ դիտարկելով բազմաթիվ օրինակներում *մոտիվացիա* բառի իմաստային տարբեր դրսևորումները՝ նկատում ենք, որ այն գործածվում է ևս մեկ նոր իմաստով, որ է՝ «բացատրություն, մեկնաբանություն-հիմնավորում». օր.՝ «Սպանությունը միշտ հանցագործություն է անկախ՝ ինչ *մոտիվացիա* ունի, ինչին է ծառայում» [«Առաւօտ» (օրաթերթ), 2003, 09, 12]: «Նշենք միայն, որ երկրորդ դեպքում երբևէ *մոտիվացիա* չունի՝ ի լուր բոլորի հայտարարելու» [«Հայկական ժամանակ» (օրաթերթ), 2006. 11. 01]. «միգուցե և կարողանար, եթե դրա համար համապատասխան *մոտիվացիա* ունենար» (ն. տ., 2006. 06. 03) և այլն¹⁰ :

2. Ինտեգրացիա:

Այս բառը փոխառություն է հայերենում, և ուշագրավ է նրանով, որ մինչև «Օտար բառերի բառարանում» տեղ գտնելը (լատ. *integratio* – ամբողջ. «1. մասերի ամբողջացում, ներգրավում: 2. (տնտեսգ.), տնտեսության ամբողջականացում և միասնական տնտեսական քաղաքականության իրականացում»), բացատրական բառարաններն ունեին որպես զուտ մաթեմատիկական տերմին:

ԺՀԼԲԲ-ում՝ *ինտեգրացիա*, տե՛ս *ինտեգրում*, *ինտեգրել* (մաթ). «*Ինտեգրումը* դիֆերենցման հակադարձ գործողությունն է¹¹: Այս բառն իր՝ նշված իմաստով գործածական է միայն արևելահայ

⁹ «TV մոլ» (14-20 –ը հունիսի, 2021, հ. 24, էջ 11):

¹⁰ Այս առիթով մանրամասն դիտարկվել են «Արևակում» *մոտիվացիա* բառի բոլոր՝ 96 համատեքստերը :

¹¹ ԺՀԼԲԲ, հ. 2, էջ 317:

իրականության մեջ, ուստի հասկանալի պատճառներով՝ արևմտահայերենի որևէ բառարանում այն արձանագրված չէ:

Է. Բ. Աղայանի բառարանում *ինտեգրացիա* բառի միայն *ինտեգրացնել* ածանցյալում, այն էլ *փխբ.* (փոխաբերաբար) նշումով է մեկնաբանվում՝ «միավորել, միասնացնել, համախմբել» իմաստներով. մյուս բոլոր ածանցյալները բերվում են իբրև մաթեմատիկական տերմիններ են¹²: Փաստորեն *ինտեգրել - ինտեգրացիա* ածանցման մեջ վերջինիս փոխաբերական իմաստը դարձել է ոչ միայն առաջնային, հիմնական, այլև առավել կիրառական: Այս դեպքում նույնպես օտար բառի գործածությունը, այն էլ իբրև սովորական՝ ոչ մաթեմատիկական հասկացության անվանում (տերմին) անիմաստ ենք համարում¹³:

Վերջերս ավելի գործուն է դարձել այդ բառի՝ «ներգրավվել, ներառնվել, ընտելանալ» իմաստներով գործածությունը, իսկ գրական արևմտահայերենում նույն իմաստներով կիրառվում է *համարկել* բայը¹⁴. «Այս ամենը եւ ԱԺ հավաքագրված մնացած «քաղաքական» ուժերի մեծ մասը ամբողջապես *ներգրավվել* են իշխանության մեջ» («Հայկական Ժամանակ», 2005. 09. 24): «Այդ նպատակով վարկային միջոցներ են *ներգրավվել* Վերականգնման եւ զարգացման եվրոպական բանկից եւ Սեւծովյան տնտեսական համագործակցության բանկից»: [«Ազգ» (օրաթերթ) 2008. 08. 28]: «Դրանով իմ սիրելի հայերը կկարողանան *ներգրավվել* Իսպանիայի ներքաղաքական կյանքում» (ն. տ.):

Կարծում ենք, ճիշտ կլինի արևելահայերենում ևս ինտեգրացիա ձևի համար կիրառել արևմտահայերեն *համարկել* բայը, որի գործածությունը «Ազգ» օրաթերթում առայժմ բավականին անսովոր է թվում՝ սակավ գործածության պատճառով:

¹² ԷԱԲ, էջ 491:

¹³ Հանդիպում է «Արևակի» 101 համատեքստում՝ *քաղաքական ինտեգրացիա, եվրոպական ինտեգրացիա, տնտեսական ինտեգրացիա, ինովացիոն համակարգերի ինտեգրացիա, հայկական ինտեգրացիա* և այլ կազմություններում:

¹⁴ «Արևակում» *ներգրավվել* բայով կա 520 համատեքստ՝ իմաստային ամենատարբեր նրբերանգներով:

3. Ասոցիացիա:

Սա վերը բերված բառերից ամենահաճախականն է. «Արեւակում» հանդիպել է 260 համատեքստում՝ արձակ, չափածո, թարգմանական գրականություն, մամուլ և այլն. օր. «Ինչպես կանխել հանցագործությունը և ինչ պատիժ կիրառել» թեմայով շաբաթ օրը կազմակերպվել էր քննարկում «Իրավաբանների և հոգեբանների միջազգային ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից, («Առաւօտ, 2007. 08. 14): «Հետագայում ՀՍՍՀ առողջապահության մինիստրությանը կից հիմնվել է ծննդօգնության խորհուրդ, 1928-ին՝ մանկաբարձ-գինեկոլոգների ասոցիացիա (հետագայում՝ ՀՍՍՀ-ի մանկաբարձ-գինեկոլոգների գիտական ընկերություն) (ՀՄՀ, հ. 7, 1981): Իսկ հետևյալ օրինակում այն գործածվել է միանգամայն այլ իմաստով. «Հիմա ի՞նչ ենք հասկանում դա ասելով, որովհետև, անկեղծ ասած, իմ մոտ ոչ մի *ասոցիացիա* չծնվեց դրանից» (OPD 160-09-2). կարելի է ենթադրել, որ այն գործածված է «միտք, մտահղացում» իմաստով:

«Օտար բառերի բառարանում» այն ներկայացված է որպես [*ассоциация* լատ. *associatio* միացում] «1. միություն, ընկերություն կազմակերպությունների, անձերի միության քաղաքական, տնտեսական, մշակութային, գիտական գաղափարական և այլն բնագավառներում ինչ-որ նպատակների հասնելու համար: 2. (քիմ.). միացություն՝ քիմիական երևույթ, որի ժամանակ մոլեկուլները կրկնապատկվում, եռապատկվում են: 3. (հոգեբ.). զուգորդում՝ երկու կամ ավելի հոգեբանական առաջացած կապ (զգայություններ, ընկալում, մտապատկերներ և այլն)»¹⁵:

ԺՀԼԲԲ-ում *ասոցիացիա* բառը նույնպես ունի երեք իմաստ. «1. Միատեսակ գործունեության հիմնարկների միավորում, միություն. գիտաշխատողների ասոցիացիա: 2. Որևէ բանի՝ նյութի միացություն, խումբ, միացում: Մոլեկուլների ասոցիացիա»¹⁶:

¹⁵ Ա. Հայրապետյան, նշվ. աշխ., էջ 56:

¹⁶ ԺՀԼԲԲ, հ. 2, էջ 187:

Համանման երեք իմաստներն են ներկայացված նաև Է. Բ. Աղայանի բառարանում՝ «միություն կամ ընկերություն, միացություն, միավորում»¹⁷:

Այսպիսով, մանրամասն դիտարկելով երեք օտարամուտ բառերի իմաստային հնարավոր բոլոր դրսևորումները, հանգում ենք հետևյալ եզրակացությանը:

1. *Ինտեգրացիա* բառի պարագայում վերջերս ավելի գործունե են դարձել նրա՝ «ներգրավվել, ներառնվել» իմաստները, որոնց գուցա հեռ արևմտահայերենում գործածվում է *համարկել* բայը. մեր համոզմամբ տեղին է արևելահայերենում ևս *ինտեգրացիա* բառի հիշյալ իմաստի համար կիրառել արևմտահայերեն նախընտրելի *համարկել* բայից կազմվող *համարկում* գոյականը:

2. *Ասոցիացիա* օտար բառի դեպքում, ելնելով դիտարկված օրինակներից, մեր տեսակետն այն է, որ եղած իմաստներից բացի կարելի է գործածել նաև «միտք, մտահղացում» իմաստներով:

3. *Մոտիվացիա* բառի իմաստային դրսևորումների մանրամասն քննությունը ցույց է տալիս, որ գործածական իմաստներից բացի կարելի է հանձնարարելի համարել ևս մեկը՝ «բացատրություն, մեկնաբանություն-հիմնավորում» իմաստը:

4. Եվ ելնելով ՀՀ լեզվի օրենքի պահանջներից՝ առավել ևս կարևոր ենք համարում պատկան կամ իրավասու մարմինների (տեսչական, ակադեմիական, նաժաձեռնողական և այլն) ամենօրյա, մշտական ուշադրությունը հատկապես ռադիոյի և հեռուստատեսության այն հաղորդումներին, որոնցում տեղ են գտնում նման անհարկի, բոլորովին անհասկանալի իմաստներով, հաճախ ավելորդ գործածությունները:

¹⁷ ԷԱԲ, էջ 111:

Համառոտագրություններ

ԷԱԲ – Է. Բ. Աղայան. Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., «Հայաստան» հրատ., 1976:

ԺՀԼԲԲ - «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հհ. 1-4, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ, 1969-1980:

ՀՄՀ - «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 7, Ե., 1981:

ՄԲԲ - Հայերեն բացատրական բառարան, կազմեց Սո. Մալխասեանց, հ. 1-4, Ե., ՀՍՍՌ Պետհրատ., 1944,

Ключевые слова: иностранные слова, неуместное применение, выбор армянского эквивалента. языковой контроль.

С. К. Тиюян - О неправильном употреблении варваризмов («интеграция», «ассоциация», «мотивация»). - В статье рассматриваются три наиболее часто встречаемые варваризмы, которые проникли в литературный армянский язык, а именно: «интеграция», «ассоциация», «мотивация», а также их всевозможные смысловые функциональные особенности. Как стало ясно из анализа, для слова «интеграция» более типичны значения «вовлекаться» и «включаться». В западно-армянском оно имеет эквивалент «համարկել», который, по нашему мнению, может быть использован и в восточно-армянском. Что касается производного слова «ассоциация», то мы считаем, что к его смысловым проявлениям можно также добавить значения «мысль» и «идея». А для слова «мотивация» можно добавить еще одно значение, а именно: объяснение, «комментарий-обоснование».

Кewwords: foreign words, inappropriate use, choice of Armenian equivalents, linguistic control.

S. K. Tioyan - On the Misuse of Barbarisms («integration», «association», «motivation»). - The article discusses the semantic properties of three barbarisms that are most frequently used in Standard Armenian, namely: «integration», «association», and «motivation». As the analysis has shown, the word «integration» is most frequently used in the meanings «to be involved» and «to be included». In Western Armenian, the word «integration» also has the

meaning «համարկել », which, in our personal opinion, could be used in Eastern Armenian as well. As far as the word «association» is concerned, we believe that it, in addition to the other meanings, can be applied in the meaning «idea». The «word» motivation can also be applied in one more meaning, i.e. «explanation».

**ԹԵՔ ՎԵՐՋՆԱԲԱՐԱՆՈՒՄԻ ԲԱՌԵՐ
ՀԱՅԵՐԷՆԻ ՄԷՋ
Պատմ. գիտ. թեկնածու Ա. Ա. Ֆիշենկճեան**

Հիմնաբառեր: Թեք պարզ բառ, բարդ բառ, ածականական կազմություն, բարդության երկրորդ բաղադրիչ, դիրաթեք, կիսաթեք:

Հայոց լեզուի *թեք* միավանկ վերջնաբաղադրիչով բառերը (բարդ կամ յարադիր) շարահիսուրթեան մէջ հանդէս կու գան ածականական եւ մակբայական կիրարկութեամբ. օր.՝ *թեք բռնել, թեք կտուր, թեք դրուած է, դիրաթեք* եւ այլն:

Այս թեք բայարմատը որպէս ածական կը բացատրուի «շեղած, կոր, ծռած» եւ որպէս մակբայ՝ «դէպի մի կողմ կախուած, որի մակերեսին մի կողմը բարձր է միւսից» իմաստներով:

Հայերէնի *թեք* վերջնաբաղադրիչով բարդ բառերու քննութիւնը սկիզբ առաւ, երբ մասնագիտութեան բերումով կ'ուսումնասիրէինք մեր տրամադրութեան տակ գտնուող փաստաթուղթ մը՝ նուրիուած Սուրիոյ համայնքի պատմութեան: Փաստաթուղթը կ'անդրադառնար թերթի մը հրատարակութեան գծով յանձնախումբի մը կազմութեան, ուր գրուած էր. «Նոյեմբեր 18-ին, (1924 թ.) Կ. Կոմիտէն ընտրեց յանձնախումբ մը ընկերներ Լ. Գարագաշեան, Արամ Սահակեան եւ *միաթեք*, պարտք դնելով անոնց վրայ, միջոցներ ձեռք առնել թերթի հրատարակութիւնը արագացնելու» (ընդգծումը՝ Ա. Ֆ.):

Վերոնշեալ նախադասութեան մէջ *միաթեք* բառը չէր դրսեւորեր այն բառիմաստը, որ տրուած էր Է. Աղայեանի բացատրական եւ այլոց բառարաններուն մէջ: Օր.՝ *միաթեք* բառը՝ Աղայեան կը համարէ ածական խօսքի մաս. հեղինակի համաձայն, *Միաթեք* - (աձ.) կը նշանակէ՝ դէպի մի կողմ հակուած՝ կախուած՝ ծռուած, շեղ. 2. թեքուել, մի կողմի վրայ հակուել¹: Ստ. Մալխասեանցի բացատրական բառարանի մէջ չենք հանդիպիր *միաթեք* բառին: Այդ բառը

¹ Է. Բ. Աղայան, Արդի հայերէնի բացատրական բառարան, Ե., 1976, էջ 439:

Ա. Սուքիասեան կը բացատրէ՝ (աժ.) «միալանջ /մի կողմի թեքութիւն ունեցող»²:

Միաթեք բառին հանդիպած ենք Հ. Հ. Սարգսեանի «Երկրաբանական տերմինների ռուս-հայերէն բառարան»-ին մէջ, ուր *միաթեք բլրաշար* բառակապակցութիւնը հեղինակը կը բացատրէ, թէ բառը կազմուած է յունարէն մէկ, եզակի եւ klino- «կոանում եմ» բաղադրութեամբ, *միաթեք* (մոնոկլինալ). օր.՝ *միաթեք տեղադրում, միաթեք ծալք*³:

«Հայոց լեզուի հանգաբառարան»-ի մէջ ընդհանրապէս չէ յիշատակուած *միաթեք* բառը. Փոխարէնը մենք կը գտնենք երկու բառ՝ *կիսաթեք* եւ *դիւրաթեք* (իմաստային ոչ մէկ բացատրութիւն)⁴:

Եւ այսպէս, դեգերելով հայերէնի մասնագիտական այլ բառարաններու մէջ՝ կը հանդիպինք *թեք* միավանկ բառի մէկէ աւելի իմաստներու.

ա) *թեք*, ած. մ. 1) մէկ կողմ հակած՝ ծռած, կողմնակի, շեղակի, շեղ, ծուռ, կոր. 2) (փոխ.) խոտորած, շեղած⁵:

բ) *թեք*, ած. մէկ կողմ հակած. ծուռ, կոր, խոտոր⁶:

գ) Երեւանի եւ Ջուղայի բարբառներուն մէջ, կը նշանակէ «ծուռ, մէկ կողմ».օր.՝ *գլխարկը թեք է դրել: Սա ուղիղ է, սա թեք*⁷:

ե) *թեք* - Շեղ, ծուռ, խոտոր (դէպի մի կողմ ծոված՝ կախված), վայրահակ (դէպի ներքեւ հակված), դարիվեր, զարիվեր եւ այլն⁸:

Եզրակացնելով՝ *թեք* բառը որպէս ածական հանդէս կու գայ «շեղած, կոր, ծռած», իսկ որպէս մակբայ՝ «դէպի մի կողմ կախուած, որո՞ւ մակերեսին մէկ կողմը բարձր է միւսէն» իմաստներով:

² Ա. Ս. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Ե., 2009, էջ 770:

³ Հ. Հ. Սարգսյան, Երկրաբանական տերմինների ռուս-հայերէն բառարան, Ե., 1984, էջ 68, 124:

⁴ «Հայոց լեզվի հանգաբառարան», Ե. 1976, էջ 605

⁵ Տե՛ս Ա. Տէր Խաչատուրեան, Հ. Գանգրունի, Փ. Կ. Տոնիկեան, Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրուք, 1968, էջ 185; Գ. արք. Ճէրէճեան, Փ. Կ. Տոնիկեան, Ա. Տէր Խաչատուրեան, Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրուք, 1992, էջ 686:

⁶ Ա. Տէր Խաչատուրեան, Հ. Գանգրունի, Փ. Կ. Տոնիկեան, նշուած աշխ., էջ 185; Պ. վրդ. Ճիզվեճեան, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, Հալէպ, 1957, էջ 393:

⁷ Տե՛ս, Հ. Աճառեան, Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս 1913, էջ 397:

⁸ Ա. Ս. Սուքիասյան, նշուած աշխ., էջ 340:

Թեք միավանկ բառը ստանալով նախաձանց եւ վերջաձանց կը կազմէ անձանցաւոր եւ բարդ բառ: *Թեք*-ով կը կազմենք նաեւ այն-պիսի բարդ բառեր, ուր *թեք*-ը մեծ մասամբ հանդէս կու գայ բառասկիզբը, սակաւ են *թեք* վերջնաբաղադրիչով բարդ բառերը.

1961 թ., «Հայկական ԽՍՀ աստլաս»-ի հրատարակումի նպատակով, ԳԱ երկրաբանական գիտութիւններու ինստիտուտի աշխարհագրական բաժինի գիտնականներու նախագիծով, (տերմինաբանական) եզրութաբանական կոմիտէն կը հաստատէ աշխարհագրական, երկրաբանական եւ այլ կարգի մասնագիտական շուրջ 150 բառ ու բառակապակցութիւն եզրոյթ (տերմին).

ա) «Այդ բառացանկին մէջ հայերէն բազմաթիւ եզրոյթներ (տերմիններ), որոնք արդէն գործածութեան մէջ էին. կոմիտէն կ'որոշէ կրկին վաւերացնել իրենց բուն նշանակութեամբ, իսկ երբեմն ալ իմաստային նոր երանգով. ադ բառերու ցանկին մաս կը կազմէր նաեւ *միաթեք* բառը⁹:

բ) Հաստատուած ցանկին մէջ տեղ կը գտնեն քանի մը տասնեակ հայերէն բառաձեւեր, որոնք որպէս եզրոյթներ իրենց նշանակութեամբ դեռեւս նոր շրջանառութեան մտած կամ բոլորովին նոր գործածութեան յանձնարարուող բառեր էին. ցանկին մէջ էր *սակաւաթեք* բառը:

Միաթեք բառին չենք հանդիպած հայերէնի այլ բառարաններու մէջ, ուստի կարելի է եզրակացնել, որ վերը բերուած առաջին օրինակի մէջ յիշատակուած *միաթեք* բառը փոխաբերական իմաստով գործածուած է եւ կը նշանակէ «գաղափարական նոյն հայեացք ունեցող եւ կամ համակիր»: Ուստի կարելի է եզրակացնել, որ *միաթեք* բառը այս նախադասութեան մէջ ունի գոյականական կիրարկութիւն:

Մինչդեռ *թեք* վերջնաբաղադրիչով շուրջ մէկ տասնեակ բարդ բառեր հանդէս եկած են «մէկ կողմի թեքութիւն ունեցող» իմաստով. օր.՝ *միաթեք, դիրաթեք, կիսաթեք, քառաթեք, զուգաթեք, համաթեք,*

⁹ <https://www.langcom.am/wp-content/uploads/2019/07/Terminology-and-spelling-guide.pdf/>
Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու

ուղղաթեք, բազմաթեք, եռաթեք, սակաւաթեք, հաւասարաթեք եւ այլն, որոնք շարահիւսութեան մէջ մակբայական ու ածականական կիրարկութիւն ունին.

Միաթեք բառի օրինակներ.

1) ածականական կիրարկութիւն. «Վիրահայոց-Արցախյան *միաթեք* աստիճանաձև բեկորների գոնան, ...»¹⁰:

2) մակբայական կիրարկութիւն. Փոքր Կովկասի արտաքին շարը՝ կազմված միջին բարձրության լեռնաբազուկներից, որոնք *միաթեք* իջնում են դեպի Կուրի դաշտը: Լանջերը *միաթեք* իջնում են դեպի կենտրոն և մասնատված են Մարցա գետի վտակներով:

2) *Դիւրաթեք* բառի օրինակներ¹¹.

«Դիւրաւ ծոռող, ճկուն, ճապուկ. հեշտութեամբ թեքւող». փոխաբերաբար՝ «փոփոխական, փոփոխամիտ». *Դիւրաթեք* լեզու, *դիւրաթեք ճիւղեր, դիւրաթեք* մարդ՝ կամք և այլն:

«Անհաստատ, փոփոխական, փոփոխամիտ» իմաստը՝ Աղալեանի եւ այլոց մօտ: *Դիւրաթեք* բառը ըստ Լ. Խաչատրեանի, *ճապուկ* ածականի հոմանիշ, ուր կու տան այլ բացատրութիւններ եւս, *դիւրաշարժ, արագ* եւ *ճկուն*¹²:

Այլ օրինակներ՝ «Պոլսէն եկած գնած է, Դամասկոսի *դիւրաթեք* երկաթ» (Գ.Զօհրապ Կեանքը ինչպէս որ է). «կանայք կը տիրապետեն *դիւրաթեք* էրիկներուն խաբելու արուեստին, Ինքը թէւ չէր ուզեր, բայց խաբուեցաւ»¹³: «Ինքնութեան *դիւրաթեք* ըլլալը այս պարագային հարստութիւն մըն է»¹⁴: «Բարձրահասակ տղայ մըն էր, քիչ մը նիհար, *դիւրաթեք* ու ճկուն կազմով» (Լ. Շանթի «Կինը» աշխատութենէն): «Կաղնի չեղայ ես կեանքիս մէջ, / Որ հողմերէ վախ չունենամ:/ Եղայ եղեգ մը *դիւրաթեք*. Որ զեփիւռի շունչէն

¹⁰ <http://www.hven.am/myfiles/files/pdfs/Notifications/LalvarNoy.pdf/>

¹¹ *Ա. վրդ. Կռանեան*, Բառգիրք հայերէն լեզուի, Պէրուք, 1998: Էջ 101: *Յ.Թ. Գայայեան*, Բառարան գանձարան հայերէն լեզուի, Գահիրէ, 1938, էջ 104:

¹² Գրաբարի ուսումնական բառարան, ձեռնարկին մէջ կը յիշատակուի:

¹³ «Միտն» (ամսաթերթ), 2015, թիւ 82, էջ 43: [http://tert.nla.am/archive/NLA%20_AMSAGIR/SionE/2015/2015\(10-12\).pdf](http://tert.nla.am/archive/NLA%20_AMSAGIR/SionE/2015/2015(10-12).pdf)

¹⁴ <http://armenianeducation.blogspot.com/2011/11/blog-post.html>,

անգամ / Կը տատանի ու կ'օրօրուի (Թորոս Թորանեան). «կիսաթեք ձգվել է դեպի նա»¹⁵ եւ այլն:

Եզրակացութիւններ:

1. *Միաթեք* բառը հայերէնի մէջ հանդէս կու գայ նաեւ իմաստային նոր երանգով եւ գոյականական կիրարկութեամբ.

2. *Թեք* վերջնաբաղադրիչով շուրջ մէկ տասնեակ բարդ բառերէն քիչերը տեղ գտած են ե՛ւ արեւելահայերէնի, ե՛ւ արեւմտահայերէնի բառարաններուն մէջ: Ուստի հնարաւոր է առաւել ընդգրկուն յօդուածով ուսումնասիրել այդ վերջնաբաղադրիչով բարդ բառերու բառակազմական, ձեւաբանական եւ շարահիւսական առանձնաշատկութիւնները:

3. Ուսումնասիրութիւնը մեր կողմէ կատարուած առաջին փորձն է, ուստի հաւակնութիւն չունինք զայն ամբողջական համարելու:

Ключевые слова: простое слово *թեք* [tʰecʰ] ‘наклонный’, составное слово, *прилагательное*, второй компонент составного слова, соответствующие примеры.

А. А. Фишенкчян - Сложные слова, оканчивающиеся на *թեք* [tʰekʰ] ‘наклонный’ в речи. - Слово *թեք* [tʰekʰ] ‘наклонный’ грамматически является прилагательным и наречием. При помощи которого образуют новые слова, но их *мало* как в восточноармянских, так и в западноармянских словарях. Их не всегда можно рассматривать как новые слова.

Keywords: simple word *թեք* [tʰecʰ] 'inclined', compound word, adjective, second component of a compound word, appropriate examples.

A. A. Fishenkchyan - Compound Words Ending in *թեք*[tʰecʰ] ‘inclined’ in Speech. - The word *թեք*[tʰecʰ]‘oblique’ is grammatically an adjective and an adverb. With the help of which new words are formed, but they are few in both Eastern and Western Armenian dictionaries.They may not always be considered as new words.

¹⁵ http://publishing.yzu.am/files/banber149_1.pdf/

ՄԵՌԱՆԻՇ ԱԾԱՆՑՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Բանասիր. գիտ. դոկտոր Վ. Գ. Համբարձումյան

Ս. Ե. Բաղդասյան, Ն. Պ. Խաչիբաբյան

Հիմնարատեր: Բառակազմություն, ածանցում, կենսունակ և ոչ կենսունակ ածանցներ, սեռի քերականական կարգ, սեռանիշ ածանցներ:

Ինչպես այլ ցեղակցության, այնպես էլ հնդեվրոպական շատ լեզուներում հաղորդակցական միավորները, ամենից առաջ բառերը միմյանց հետ հարաբերվել են տարբեր կարգային (կատեգորիական) միջոցներով և եղանակներով (հոլով, թիվ, դեմք, ժամանակ և այլն), այդ թվում նաև սեռով, որն այլ բան չէ, քան բայի դեպքում ընթացքի մեջ ուղղություն (պրոցես)՝ ենթակայից ուղիղ խնդիր, և հակառակը, գոյականի դեպքում՝ առարկայի կամ երևույթի ըմբռնում. բային բնորոշ է եղել դեմքը, իսկ գոյականին՝ սեռը¹:

Գոյականական միավորների դեպքում առաջնային են հոլովումը և սեռը. վերջինը զանազանվում էր *շնչավոր* և *անշունչ* հակադրությամբ, որ էական դեր է խաղում գոյականի հոլովառության մեջ. հնդեվրոպական մի շարք լեզուներ մինչև այժմ պահում են այդ առանձնահատկությունը, կան նաև այնպիսիները (օրինակ՝ հայերենը), որոնք պատմականորեն այլ առանձնահատկություն են հանդես բերում: Ավելի մասնավորման դեպքում՝ հակադրելի են *արական*, *իգական* և *չեզոք* սեռեր, որոնք ոչ այլ ինչ են, քան առնչություն կամ պայմանավորում, այսպես կոչված, բնական սեռով՝ իբրև կենդանի օրգանիզմի հատկության դրսևորում:

Ժամանակակից հայերենում գոյականի համակարգում տարբերում են շնչավորի և անշունչի (resp. անձի և իրի), դասի և տիպարի, սակայն ոչ սեռի քերականական կարգեր: Ավելին, գոյականի ձևակազմական (ոչ բառակազմական) դրսևորումը որևէ կերպ չի

¹ Հմմտ. *А. Мейе*, Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.-Л., 1938, էջ 204-205: *Э. Г. Туманян*, Структура индоевропейских имен в армянском языке, М., 1978, էջ 62:

պայմանավորվում սեռով (հմմտ. *սեռի խնդիր/քնության խնդիր, անձի առում՝ տրականով, իրի առում՝ ուղղական-հայցականով* և այլն): Տեսական նման դրույթները կարող են ելակետային լինել հայերենի գոյականական միավորների «քերականական սեռի» պատմական փոփոխությունների քնության համար:

Ժամանակակից հայերենում գոյականի, այսպես կոչված, «քերականական սեռը» արտահայտվում է միայն բառակազմական հիմունքով՝ ածանցմամբ, այլ կերպ ասած՝ այն չունի ձևակազմական հիմունք: Նման դրվածքը այդպիսին է գոնե հին գրավոր շրջանից մինչև նոր ժամանակները. հին գրական հայերենի նկատմամբ հունաբան դպրոցի ներկայացուցիչները ժամանակին այս հարցում ունեցան «միջամտություն», որն արհեստական լինելով՝ իսպառ դուրս մնաց լեզվից²:

Բառակազմությունը շարունակում է լինել ժամանակակից հայերենի բառապաշարի հարստացման և զարգացման կարևորագույն գործոններից մեկը: Հայերենն ունի բավականին ճկուն բառակազմություն, որն էլ հնարավորություն է տալիս նրանում գործածվող արմատների, բառերի և ածանցների միջոցով ստեղծել բազմաթիվ նոր բառեր՝ ոչ միայն բուն իմաստով, այլև իմաստային նրբություններով (բազմիմաստություն և այլն): Որքան էլ հայոց լեզվի պատմության նկատառումով նրա բաժիններից մեկը՝ բառագիտությունը, ըստ այդմ՝ բառակազմությունը պակաս ուշադրության առարկա է եղել համապատասխան բնագավառում, այնուամենայնիվ ժամանակակից հայերենի դեպքում կան բավականին մեծ թվով աշխատություններ (մենագրություն, գիտական հոդված և այլն), որոնք նվիրված են եղել այստեղ մեզ հետաքրքրող ոլորտի համաժամանակյա ուսումնասիրությանը³:

² Տե՛ս *Գ. Բ. Ջահուկյան*, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V-XV դդ.), Ե., 1954: *Ա. Ն. Մուրադյան*. Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Ե., 1971: *Վ. Գ. Համբարձումյան*, Լատինաբան հայերենի պատմություն (14-18-րդ դդ.), Ե., 2010:

³ Տե՛ս *Ս. Ա. Էլոյան*, Ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1963: *Է. Բ. Աղայան*, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1974: *Ս. Ա. Գալստյան*, Ածանցումը և ածանց-

Այդ ամենով հանդերձ սույն հոդվածում անդրադառնում ենք ավելի մասնավոր մի հարցի՝ սեռանիշ ածանցների արտահայտությանը հայերենի՝ հատկապես վերջին տասնամյակների գործածության բառապաշարում. կազմությամբ՝ հիմնականում ավանդական, իսկ օրինակների ընդգրկմամբ՝ նորություն:

Ածանցումը որպես բառակազմական եղանակ մեծ դեր ունի հնդեվրոպական լեզուների բառապաշարի հարստացման գործում: Ածանցի բնորոշումը ընդհանուր է և սովորական հիշյալ տիպի տարբեր լեզուների, ընդ որում նաև հայերենի և վերջինիս առանձին փուլերի համար. «Ածանցումը բառակազմության այն, համեմատաբար բարդ աստիճանն է, երբ որոշ հիմնական ձևույթներ, կորցնելով նյութական իմաստը և կցվելով բառերին (կամ արմատներին), արտահայտում են իրահարաբերական իմաստ⁴»: Այդպես նաև սովորական է և ընդունված հետևյալ սահմանումը. «Ժամանակակից հայերենում ածանց է համարվում բառակազմական այն ձևույթը, որը, կցվելով բառահիմքին, փոխում է նրա բառային իմաստը, կազմում է նոր բառ՝ նոր իմաստով»⁵:

Ածանցները, ըստ բառին ավելացող դիրքի, հիմնականում բաժանվում են երկու մեծ խմբի՝ նախածանցների և վերջածանցների, որոնք արդյունքում ունենում ենք նույնպիսի բառեր. օր.՝ լույս – լուս(ավոր), լույս – (ան)լույս, գույն – գուն(ավոր), գույն – (դժ)գույն և այլն: Իսկ ըստ ծագման՝ ածանցները լինում են բնիկ և փոխառյալ. բնիկ են համարվում հնդեվրոպական ծագման ածանցները, որոնք պատմականորեն առաջ են եկել նույնպիսի բայարմատներից կամ բառերից, փոխառյալ են այլ լեզուներից, հիմնականում՝ նույնպիսի բառի կազմում եղած վիճակով հայերենի անցած, հետագայում,

ները ժամանակակից հայերենում, Ե., 1978: Գ. Բ. Ջահուկյան, Է. Բ. Աղայան, Վ. Դ. Առաքելյան, Վ. Ա. Քոսյան, Հայոց լեզու, մաս I, պրակ Ա, Ե., 1980, էջ 187-472: Ա. Մ. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու. հնչյունաբանություն, բառագիտություն, Ե., 1982:

⁴ Հ. Զ. Պետրոսյան, Ս. Ա. Գալստյան, Թ. Ա. Ղարազյուլյան, Լեզվաբանական բառարան, Ե., 1975, էջ 7:

⁵ Ա. Մ. Սուքիասյան, Ք. Ա. Սուքիասյան, Ս. Ֆ. Ֆելեքյան, Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն), Ե., 2017, էջ 316:

համաբանությամբ պայմանավորված, հայերենում գործածական ածանցները. օր. *Որմիզ(դուխտ) – Հայկան(դուխտ)* և այլն:

Այլ կերպ ասած՝ բնիկ ածանցն ունի հայկական ակունքներ, փոխառյալը սերում է այլ լեզուներից: Հնում փոխառված ածանցներն այժմ երբեմն գիտակցվում են իբրև բնիկ (օր.՝ *-ուհի, -դուխտ* ածանցները): Հայերենում ածանցների փոխառությունը տարածված երևույթ չէ: Նման ածանցները սովորաբար լեզվի մեջ են անցնում փոխառյալ բառերի կազմում:

Ս. Ա. Էլոյանը, անդրադառնալով ածանցների առաջացմանը, նշում է, որ «հայերենի բառակազմական ածանցների մի զգալի մասը առաջացել է քերականական ձևերի իմաստների մթազնման և քարացման ճանապարհով, որի արդյունքում բառահարաբերական մասնիկները ձեռք են բերում բառակազմական արժեք»⁶: Սա հայերենին առհասարակ բնորոշ երևույթ է, որ ընդունելի է նաև մեզ համար՝ կապված մեր քննության առարկայի հետ:

Ստորև անդրադառնում ենք այս եղանակով առաջացած սեռ ցույց տվող մի քանի ածանցների, որոնք գործածական են ժամանակակից հայերենի նորագույն շրջանում:

Սեռը գոյականին հատուկ քերականական կարգ է, որը բնորոշ է շատ լեզուների, սովորաբար երեք սեռ՝ արական, իգական և չեզոք: Այսպես, ռուսերենը երեք սեռի տարբերակման համար ունի համապատասխան վերջավորություններ. արական սեռը վերջանում է հիմնականում բաղաձայնով՝ *дом, мороз* և այլն, իգական սեռը՝ *-а, -я, книга, песня* և այլն, չեզոք սեռը՝ *-о, -е, озеро, море* և այլն: Իսկ գերմաներենում սեռի զանազանման համար որևէ նշան չկա, սեռը արտահայտվում է միայն հոդի միջոցով. արական սեռ՝ *der - der Name, der Junge*, իգական սեռ՝ *die - die Frau, die Bank*, չեզոք սեռ՝ *das - das Haus, das Zimmer* և այլն:

Անգլերենը և հայերենը չունեն նման տարանջատում, ընդ որում գնտնում են, որ հայերենը ևս, լինելով հնդեվրոպական լեզու,

⁶ Տե՛ս Ս. Ա. Էլոյան, Ժամանակակից հայերենի ածանցների առաջացման ուղիների մասին, // «Պատմա-բանասիրական հանդես», 1959, 4, էջ 54:

ունեցել է սեռի քերականական կարգ, որը ժամանակի ընթացքում կորցրել է:

Ժամանակակից հայերենի գոյականների համակարգում կա միայն բնական սեռային տարբերակում, որը կատարվում է կա՛մ բառային միջոցներով (*մաքի-խոյ, աղջիկ-տղա, հավ-աքաղաղ*), կա՛մ բառակազմական միջոցներով (*ուսանող-ուսանողուհի, ուսուցիչ-ուսուցչուհի*): Գոյականի սեռի մասին խոսելիս Ա. Մելեն անդրադառնալով *երկին(ք)* և *երկիր* բառերին, նշում է, որ *երկինք* անունը արական է, իսկ *երկիր* անունը՝ իգական: Սա բացատրվում է նրանով, որ վեդայական երկերում երկինքը «հայր» է, իսկ երկիրը՝ «մայր»⁷:

Ինչպես արդեն վերը նշվեց, կան բառակազմական կաղապարներ, որոնք պատմական փոփոխությունների հիմքի վրա հնանում են, դուրս են մղվում կամ գործածվում են մասնակիորեն՝ իբրև ոչ գործուն միջոցներ: Այդպիսի իգականակերտ մասնիկներ են՝ *իա, իթա (եթ), անուշ, ուշ, դուխտ* և *ուհի*, որոնցից *իա*-ն և *իթա*-ն համարվում են ոչ կենսունակ, իսկ *ուհի*-ն ունի լայն կիրառություն:

Ս. Գյուլբուդաղյանը հանգամանորեն քննելով այս մասնիկները, նշում է, որ *իա*-ն ունի հունական ծագում (*Մոֆիա, Եվդոքիա*), *իթայ (եթ)* ձևը հայերենին անցել է ասորերենից՝ *ճաւակեթ* (աղջիկ, զավակ), *տալիթա* (աղջիկ)): Այս մասնիկները հետագայում մեծ տարածում չեն գտել:

Ուհի-ի համեմատությամբ պակաս կիրառություն ունեն *անուշ* և *ուշ* բաղադրիչները, որոնցով կազմվում են միայն հատուկ անուններ, (*Սմբատանուշ, Երվանդանուշ, Սահականուշ*), որի դեպքում բաղադրությունն ունենում է այսինչի կամ այնինչի աղջիկ իմաստը, օրինակ՝ *Սահականուշ - Սահակի աղջիկ*: *Ուշ* բաղադրիչը *անուշ*-ի կրճատ տարբերակն է, որով նույնպես հատուկ անուն է կազմվում, օրինակ՝ *Մարգուշ, Թագուշ, Վարդուշ* և այլն⁸:

⁷ Ա. Մելեն, Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 1978, էջ 229:

⁸ Ս. Վ. Գյուլբուդաղյան, Իգական սեռի արտահայտությունը հայերենում, էջ 180-181: http://ysu.am/files/23S_Gyulbudaghyan-1497445005-.pdf

Սակավ գործածություն ունի պարսկերենից փոխառված *դուխտ* («դուստր») մասնիկը, որը գործածվում է միայն հատուկ անունների մեջ՝ իբրև բաղադրության երկրորդ մաս և նշանակում է այսինչի դուստրը, օրինակ՝ *Հայկանդուխտ* (Հայկի դուստր), *Խոսրովիդուխտ* (Խոսրովի դուստր), *Սահանդուխտ*, *Որմիզդուխտ*, *Շահանդուխտ* և այլն:

Ինչպես արդեն վերը նշվեց, *անուշ* և *դուխտ* մասնիկները նախկինում ունեցել են այսինչի կամ այնինչի աղջիկ իմաստը, և դրվել են երեխայի հոր անվան վրա՝ կազմելով նոր անուն: Այժմ այն կորցրել է իր նախնական իմաստը և պարտադիր չէ, որ օրինակ *Հայկանդուխտի* կամ *Պերճանուշի* հոր անունը Հայկ կամ Պերճ լինի:

Ինչ վերաբերում է *ուհի*-ածանցին, այն մեր լեզվին է անցել պարսկերեն *ուրհի* (դուստր, աղջիկ) ձևից:

Հայոց լեզուն, փոխառելով *ուհի*-ով վերջացող հատուկ անունները, սկսել է *ուհի* արմատն օգտագործել իգական իմաստ ունեցող ածանցի նշանակությամբ: Լեզվի զարգացման հետագա աստիճաններում *ուհի* ածանցը այնքան է կենսունակացել, որ այժմ դրվում է գրեթե ցանկացած բառերի կամ արմատների վրա, եթե միայն կարելի է պատկերացնել այդ բառերի իգական սեռին պատասխանելու իմաստը, օրինակ՝ *երգչուհի*, *պարուհի* և այլն⁹:

Այժմ *ուհի*-ն ամենատարածված և ամենակենսունակ ածանցն է համարվում, որով կազմվում են թե՛ հատուկ և թե՛ հասարակ գոյականներ, օր.՝ *Հայկուհի*, *Տիգրանուհի*, *Նաիրուհի*, *Արմենուհի*, *Վանուհի*, *Թագուհի*, *բժշկուհի*, *երգչուհի*, *ուսանողուհի*, *սպասուհի*, *միանձնուհի*, *մաքրուհի* և այլն:

Ինչպես երևում է օրինակներից, այն կարող է ավելանալ ինչպես հատուկ, այնպես էլ հասարակ գոյականներին, ածականներին:

Տվյալ ածանցի կենսունակ լինելը թերևս բացատրվում է նրանով, որ հայերենը չունի իգական նշանակություն ունեցող որևէ ածանց և դրա կարիքը զգացվում էր, թեև այն այժմ էլ չի օգտագործվում պաշտոնական լեզվում, և հիմնականում տարածված է

⁹ Տե՛ս *Ս. Ա. Էլոյան*, նշվ. աշխ., էջ 62:

գրական և խոսակցական բանավոր խոսքում: Որևէ պաշտոնական փաստաթղթում չենք հանդիպել *ուհի* ածանցով կազմությունների:

Հազվադեպ հանդիպում ենք նաև *ուհի*-ի անկախ կիրառությունների՝ կին, աղջիկ բառերի հոմանշային արժեքով, ինչպես՝ Սխավվեցի՝ իմ կես կյանքում ես մի... *ուհի* պահեցի (Հ. Շ.), Նիկոլան ուզեց վազել կամ ցույց տալ, որ ինքը ներկա է. բայց պարագայն լավ չէր և հետևապես «*ուհի*» ները ներս մտան (Վ. Փ.):

Գոյականի սեռային տարբերակում ունեցող լեզուների մեծ մասում ածականները, դասական թվականները, որոշ դերանուններ, դերբայները և բայի խոնարհման որոշ ձևեր ունեն սեռային վերջավորություններ, որոնցով համաձայնում են գերադաս գոյականի հետ:

Այն լեզուներում, որոնցում գոյականների պատկանելիությունը այս կամ այն սեռին որոշվում է մասնիկներով կամ հիմքերով, սեռային տարբերակումը դրսևորվում է նաև հոլովման հարացուցում: Ս. Գյուլբուդաղյանը առանձնացնում է իգական սեռի դերանուններ՝ *սէ, նէ (սերա, ներա, սացա, նացա, սէք)*, որոնք ժամանակի ընթացքում չեն տարածվել: Ավելի ուշ Պ. Դուրյանը փորձեց վերականգնել *նէ* դերանունը, սակայն այդ ձևերը մնացին միայն բանաստեղծություններում և չտարածվեցին¹⁰. Բերենք մեկ-երկու օրինակ՝ *Նէ* մոտեցավ հուշիկ, ըսավ..., Ես դողդողամ իր վըրայ, *Նէ* իմ վըրայ գորովի (Պ. Դուրյան):

Եթե *ուհի* ածանցը թե՛ նախկինում թե՛ ներկայում պահպանել է իր իգական նշանակությունը, ապա նույնը չենք կարող ասել *-որդ* ածանցի վերաբերյալ:

Որդ ածանցը ժամանակակից հայերենի կենսունակ ածանցներից է: Այն ծագել է հայերենում ներկայումս գոյություն ունեցող *որդի* արմատից՝ *ի* մասնիկի կորուստով: Այսպես *օրիորդ* բառը արդի հայերենում համարվում է պարզ բառ, սակայն սկզբնապես, այն եղել է բարդ բառ՝ կազմված *օրի* և *որդ(ի)* բառերից: *Օրի* (<*աւրի*)

¹⁰ Ս. Վ. Գյուլբուդաղյան, նշվ. աշխ., էջ 180-181: http://ysu.am/files/23S_Gyulbudaghyan-1497445005-.pdf

արմատը Գ. Ղափանցյանը ստուգաբանում է որպես ուրարտական արմատ (< awri), որ նշանակում է «բարձրաստիճան մարդ, իշխան, տեր», իսկ *օրհորդ*՝ «տիրոջ կամ իշխանի որդին, դուստրը»¹¹:

Հետագայում *որդ* արմատը, կորցնելով իր նախնական իմաստը, այնքան է հեռացել իր սկզբնարմատից, որ այժմ դժվար է այն կապել *որդի* բառի հետ, ուստիև *զնորդ, դիտորդ, դիմորդ, վարորդ, հաճախորդ* բառերն ասելիս չենք հասկանում միայն արական սեռին պատկանող անձ:

Որդ ածանցը կազմում է գոյականներ՝ անձերի անուններ «նախատիպի ցույց տված առարկային առնչվող մասնագիտությամբ զբաղվող» բառակազմական նշանակությամբ, օրինակ՝ *նավորդ, դահուկորդ, լուսնորդ* և այլն¹²:

Եթե *որդ* ածանցով բառը չենք կարող համարել միայն արական սեռ ցույց տվող գոյական, ապա նույն բառին ավելացնելով *ուհի*-ն միանշանակ պարզ է դառնում նրա սեռային պատկանելությունը, օր.՝ *բնորդ, հաճախորդ*՝ և՛ իգական և՛ արական, իսկ *բնորդուհի, հաճախորդուհի*՝ միայն իգական:

Այսպիսով, հողվածում փորձել ենք դասդասել ածանցները ըստ սեռային հատկանիշի՝ արական և իգական, և եկել այն եզրահանգման, որ հայերենը, որպես այդպիսին, գոյականի դեպքում չունի սեռի քերականական կարգ, այն նախկինում արտահայտվել է որոշ ածանցներով, որոնցից միայն կենսունակ է մնացել *ուհի*-ն, այն էլ ոչ պաշտոնական լեզվում, իսկ նախկինում արական սեռ ցույց տվող *որդ* ածանցը իմաստի մթազնման հետևանքով կորցրել է իր սկզբնական նշանակությունը:

Ключевые слова: словообразование, суффикс, жизнеспособные и нежизнеспособные суффиксы, родовой грамматический порядок, родовые суффиксы.

¹¹ Ս. Ա. Էլշյան, նշվ. աշխ., էջ 52, 1959

¹² Ս. Ա. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1978, էջ 158-159:

В. Г. Амбарцумян, С. Е. Баграмян, Н. П. Хачибабян - Выражение суффиксов рода в армянском языке.- В статье была предпринята попытка сгруппировать суффиксы по грамматическому признаку статьи. Были тщательно изучены суффиксы - *նւհի* [uhi], -*դուխտ* [duxt], -*որդ* [ord], а также рассматривались другие частицы, выражающие женский род -*իւ* [ia], -*իթս* [itca], -*ուշ* [uŝ] ит. д. По сравнению с другими языками (русский, немецкий), армянский не имеет грамматического обозначения рода, в армянском используется частица -*նւհի* [uhi].

Keywords: word formation, suffix, viable and non-viable suffixes, gender grammatical order, gender suffixes.

V. G. Hambardzumyan, S. E. Baghramyan, N. P. Khachibabyan - The Expression of Gender Suffixes in Armenian.- An attempt was made to group the suffixes according to the grammatical feature of the article. The suffixes -*նւհի* [uhi], -*դուխտ* [duxt], -*որդ* [ord] were thoroughly examined, other female particles were also viewed -*իւ* [ia], -*իթս* [itca], -*ուշ* [uŝ] and others. Compared to other languages (Russian, German etc), Armenian does not have a grammatical signifier of gender, in this case we use -*նւհի* [uhi].

ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎՈՒՄ ԳՄԼ, ՏՄԼ, ԼՄԼ ԲԱՅԵՐԻ ՁԵՎԵՐԻ
Մ-Ի ԱՆԿՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Բանասիր. գիտ. թեկնածու Գ. Գ. Գրիգորյան

Հիմնարարներ: Ապոկոպ, խոսակցական լեզու, ֆիզիկական չափեզրեր՝ տևողություն, ուժգնություն, հաճախականություն, ֆորմանտ:

Մեր հոդվածներում բազմիցս նշել ենք, որ խոսակցական լեզվում ապոկոպը (հուն. ἀποκοπή «կրճատում») կամ բառավերջի հնչյունի անկումը տարածված երևույթ է առօրյա խոսակցական լեզվում (օրինակ, հրամայական եղանակի *ի* վերջավորության *ր*-ի անկումը, վաղակատարի *լ*-ի անկումը շրջուն շարադասության ժամանակ, պատմական առումով՝ գրաբարի բառավերջի *յ*-ի անկումը *ա* և *օ* ձայնավորներից հետո և այլն): Արտաբերական մակարդակում դա արտահայտվում է հնչադասության, հնչաբառի կամ հնչավանկի արտաբերության վերջի թուլացմամբ կամ անկմամբ, որը հաստատվում է նաև փորձառական հնչյունաբանական մեթոդներով:

Այսպես նաև *գալ*, *տալ*, *լալ* անկանոն բայերի անկատար ներկա և անցյալ ժամանակաձևերի ժխտականի կազմման ժամանակ խոսակցական լեզվում հաճախ կատարվում է *ա*-ի անկում, որը ապոկոպի ցայտուն օրինակ է և համատարած բնույթ ունի (*չես գալիս*-ի փոխարեն արտասանում են *չես գալի*):

Խոսակցական լեզվում *ա*-ի անկումը կարելի է կապել տնտեսման սկզբունքի հետ, երբ *իս* վերջավորության փոխարեն գործածվում է *ի* վերջավորությունը, սակայն հաղորդակցման ըն-

¹ Քանի որ *լալ* բայի անկատար ներկա և անկատար անցյալ ձևերը խոսակցական լեզվում հաճախ չեն գործածվում (փոխարենը օգտագործում են *լացել* բայը՝ *լացում եմ*, *չեմ լացում*, ապա այդ բայը չենք քննարկի):

թացքում պարզ է լինում, որ խոսքը անկատար ժխտականի (*չէս գալի*) կամ ժխտական-հարցականի (*չէս գալի՞*) մասին է, այսինքն՝ *ս*-ի անկման պարագայում իմաստը հասկացվում է: Այս անկումը, ինչպես հրամայական եղանակի *հր* վերջավորության *ր*-ի չարտասանելու դեպքում, կարծում ենք, կրկին, անփութության արդյունք է:

Գալ, տալ անկանոն բայերի նշված բայաձևերը ենթարկել ենք փորձառական հետազոտության՝ պարզելու, թե ինչու է *ս*-ն անկում ապրել անկատար ներկա և անցյալ ժամանակաձևերի շրջման դեպքում՝ դրանով հանդերձ պահպանելով իմաստը: Փորձառական հնչյունաբանական քննության արդյունքում հետևել ենք, թե ինչպիսի փոփոխությունների են ենթարկվել հնչյունների ֆիզիկական չափեզրերը: Հայտնի է, որ հնչյունի անկումը անպայմանորեն կապված է բառավերջի, ուստի և արտասանության թուլացման հետ, որն իր արտահայտությունը գտնում է ֆիզիկական չափեզրերի տվյալների փոփոխության մեջ: Եթե մենք կարողանանք ապացուցել, որ անկատար ներկա և անցյալ ձևերում ուղիղ և շրջուն շարադասության պարագայում *ս*-երը օրինաչափորեն մեծ փոփոխություններ են կրում, ապա կարող ենք ենթադրել, որ պատճառներից մեկը արտասանության թուլացումն է, որը հայտնի փաստ է, և ապացուցվում է մեկ անգամ ևս այս իրադրության մեջ: Ուղիղ և շրջուն շարադասության դեպքերում *ս*-երի համեմատության համար փորձառական ճանապարհով հետազոտել ենք անկատար դերբայի վերջավորության *ս*-ի ֆիզիկական չափեզրերը՝ ուժգնությունը, հաճախականությունը, տևողությունը և ֆորմանտները:

Փորձարկման ենք ենթարկել *գալ* և *տալ* բայերի անկատար ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերով բայեր պարունակող նախադասություններ, որից հետո կազմել ենք դրանց ժխտական, այնուհետև՝ ժխտական-հարցական ձևերը: Փորձել ենք պարզաբանել, թե որն է այն հիմնական պատճառը, որի ժամանակ կատարվել է անկատարի *ս*-ի անկումը ժխտական կամ ժխտական-հարցական ձևերը կազմելիս: Արդյո՞ք դա կապված է տրամաբանական շեշտի, հարցական դերանվան կամ այլ պատճառի հետ: Փոր-

ձարկման նյութն ընտրելիս, այսինքն՝ նախադասությունները կազմելիս հաղորդավարների² ներկայացրել ենք ժխտական անկատար ներկա և անցյալի ճիշտ, այսինքն՝ **ս**-ով ձևերը, քանի որ առանց *ս*-ի ձևերում կունենայինք համեմատության 0 (զրո) եզր: Իսկ այս պարագայում կարող ենք համեմատել *ս*-ի տվյալները դրական և ժխտական ձևերում:

Ուսումնասիրությունը կատարելիս օգտագործել ենք հետևյալ ծրագրերը՝

ա) Word – նախադասությունների կազմում՝ հաղորդավարներին ներկայացնելու՝ նախադասությունները կարդալու համար,

բ) Voice Memos - ձայնագրում,

գ) Excel – տվյալների մուտքագրում, միջինացում, աղյուսակների կազմում,

դ) MP4 – ձայնագրությունների առցանց փոխակերպում wav կամ MP3 տեսակների,

ե) Praat – հնչապատկերների վերլուծություն:

Այսպիսով, որպես օրինակ բերենք հետևյալ նախադասությունները, որտեղ պետք է համեմատենք *գալիս* և *տալիս* բայաձևերի *ս*-երը ուղիղ և շրջուն շարադասությամբ՝ թե՛ ժխտական, թե՛ ժխտական-հարցական ձևերում.

Այսօր դու գալիս ես: / Այսօր դու չես գալիս: / Այսօր դու չե՞ս գալիս: / Մեծ նվեր ես տալիս ինձ: / Մեծ նվեր ինձ չես տալիս: / Մեծ նվեր ինձ չե՞ս տալիս:

Բնական է, որ խոսակցականում բայաձևերի մեջ *ս*-ն ընդհանրապես չկա, որն ակնհայտ է թե՛ լսողությամբ և թե՛ փորձառական տվյալներում, այսինքն՝ հնչապատկերի մեջ բոլորովին չկա *ս*-ի պատկերը: Մինչդեռ հաղորդավարների գրական արտասանության տարբերակներում (*ս*-ով ձևերում) ուսումնասիրել ենք *ս*-ի ֆիզիկական չափերը (ուժգնությունը, հաճախականությունը, տևողու-

² Հաղորդավարներն ունեն բարձրագույն կրթություն, ծնվել և մեծացել են Երևանում, գերազանց կամ լավ տիրապետում են ժամանակակից գրական արևելահայերենին և ժամանակակից խոսակցական լեզվին (խոսում են ոչ միայն գրական, այլև խոսակցական արևելահայերենով):

թյունը ֆորմանտները և սպեկտրը) և հաստատել, որ խոսակցական լեզվում *u*-ի լրիվ անկումը կապված է արտասանության թուլացման հետ, որը ձգտում է *o*-ի, այսինքն՝ հնչյունի բացարձակ անկման:

Հաղորդավարների կողմից կարդացված նախադասությունները ձայնագրվել են, այնուհետև ներածվել համակարգիչ՝ «Պռաստ»³ ծրագրի միջոցով վերլուծելու համար: Ձայնագրությունները համակարգչային ծրագիր ներմուծելուց առաջ կատարել ենք դրանց առցանց փոխակերպում WAV կամ MP3 տեսակի, քանի որ «Պռաստ»-ը ընկալում է նշված տեսակի ֆայլերը: Դրանից հետո կատարվել են նախադասությունների մեջ *u* բաղաձայնի ֆիզիկական չափերերի տվյալների հաշվարկներ և մշակումներ: Հնչյունի ֆիզիկական հատկանիշներից ուսումնասիրել ենք տևողությունը, ուժգնությունը, հաճախականությունը, և ֆորմանտները, քանի որ հնչյունի կորուստը կամ անկումը կապում ենք արտաբերության թուլացման կամ նույնիսկ մինչև զրոյական թուլացման հետ:

Անդրադառնանք հնչյունի ֆիզիկական չափորոշիչների վերլուծությանը առանձին-առանձին:

1. *Տևողություն:* *U* բաղաձայնի տևողության միջինացված արժեքն է 0.15 միլիվայրկյան ուղիղ շարադասությամբ բայաձևերում, նույնքան՝ ժխտական բայաձևերում, և 0.17 միլիվայրկյան՝ ժխտական-հարցականի դեպքում: Փաստորեն ամենամեծ տվյալները գրանցվել են ժխտական-հարցական բայաձևերի դեպքում, որի պատճառը, կարելի է եզրակացնել, հարցման հնչերանգն է:

Ուղիղ	Ժխտական	Ժխտական-հարցական
0.15	0.15	0.17

³ «Պռաստ»-ը (Praat, հոլանդերեն՝ «խոսք, խոսել») ժամանակակից փորձառական հնչյունաբանության մեջ ամենաօգտագործվող համակարգչային ծրագրերից է, որը նախատեսված է հնչամիավորների վերլուծության և համադրության համար: Ծրագիրը հնարավորություն է տալիս ուսումնասիրել հնչամիավորի ուժգնությունը, հաճախականությունը, տևողությունը, ֆորմանտները և սպեկտրը: «Պռաստ» ծրագիրը մշակվել և կատարելացվում է Ամստերդամի համալսարանի գիտաշխատակիցների՝ Պոլ Բոերսմայի (Paul Boersma) և Դեյվիդ Ուինինկի (David Weenink) կողմից (ծրագիրը ստեղծվել է 1995թ.):

2. *Ուժգնություն:* Այլ պատկեր ունենք ուժգնության պարագայում, երբ որոշակիորեն գրանցվել են նվազող դեցիբելներ ուղիղ, ժխտական և ժխտական-հարցական հերթականության մեջ.

Ուղիղ	Ժխտական	Ժխտական-հարցական
59.7	52.9	52.2

Սա նշանակում է, որ հարցման հնչերանգի ժամանակ հիմնական ուժգնությունը կենտրոնանում է հարցական մասի վրա, որից հետո տեղի է ունենում ուժգնության թուլացում, մանավանդ որ հարցումն արտահայտվում է հնչադասության վերջին հատվածում:

3. *Հաճախականություն:* Մ բաղաձայնի հաճախականության միջինացված արժեքն է 120 հերց ուղիղ շարադասությամբ բայաձևերում, 106 հերց՝ ժխտական բայաձևերում, և կրկին 120 հերց՝ ժխտական-հարցականի դեպքում: Փաստորեն ամենափոքր տվյալները գրանցվել են ժխտական բայաձևերի դեպքում: Հաճախականության տվյալների տարբերությունը նշված դեպքերի համար բավականին ակնառու է և կազմում է 14 հերց:

Ուղիղ	Ժխտական	Ժխտական-հարցական
120	106	120

4. *Ֆորմանտ:* Նշենք, որ շատ չճանրաբեռնելու նպատակով ուսումնասիրել ենք F1 ֆորմանտը (F2, F3 և այլն ֆորմանտների մեջ): Ֆորմանտների տվյալները համեմատելիս պարզվեց, որ ամենից մեծ տվյալները գրանցվել են ժխտական կազմության պարագայում, ի տարբերություն տևողության և հաճախականության դեպքերի, երբ ժխտական կազմության նախադասություններում գրանցվել են *u* բաղաձայնի նվազագույն տվյալներ: Ժխտական նախադասություններում *u* բաղաձայնի F1 ֆորմանտի միջինացված արժեքն է 859, որն առավելագույնն է ուղիղ և ժխտական-հարցական տիպի

նախադասություններում հնչող *ս*-ի ֆորմանտի տվյալների համեմատության մեջ և գերազանցում է մոտ 118 հերցով:

Ուղիղ	Ժխտական	Ժխտական-հարցական
741	859	746

Ստորև ներկայացված աղյուսակում ներկայացված են նախադասություններում *զալիս* և *տալիս* բայաձևերի *ս* բաղաձայնի սևողության, ուժգնության, հաճախականության և ֆորմանտների թվային տվյալները և դրանց միջինացված արժեքները.

	Տևողութ.	Ուժգնութ.	Հաճախական.	Ֆորմանտ
Գալիսես	0.16	62.9	117.9	1009
	0.16	55.6	126	602
	0.16	66	108	984
Միջինացված	0.16	61.5	117.3	865
Չեսգալիս	0.15	51.1	76.8	1055
	0.18	50	89	494
	0.17	61	115	1142
Միջինացված	0.16	54	93.6	897
Չե՞սգալիս	0.19	48.4	115	631
	0.15	48	119	433
	0.2	56	126	1044
Միջինացված	0.18	50.8	120	702

Տալիսես	0.13	56.7	122.4	377
	0.12	55	123	356
	0.14	62	124	1118
Միջինացված	0.13	57.9	123	617
Չեստալիս	0.12	48.9	121.7	913
	0.13	50	110	334
	0.15	57	125	1221
Միջինացված	0.13	51.9	118.9	822.6
Չե՞ստալիս	0.19	54.3	132	739
	0.15	50	111	523
	0.17	57	117	1113
Միջինացված	0.17	53.7	120	791

Այսպիսով, որպես ամփոփում նշենք, որ ըստ մեր դիտարկումների՝ տևողության, ուժգնության, հաճախականության և ֆորմանտների թվային տվյալները բալանսավորում են միմյանց, այսինքն՝ եթե տևողության տվյալները մեծ են մի դեպքում, ապա հաջորդ դեպքում դրանք մեծ են ուժգնության պարագայում: Քանի որ խոսակցական լեզվում *գալ* և *տալ* անկանոն բայերի անկատարներկա և անցյալ ձևերում ուղիղ և շրջուն շարադասության պարագաներում *ս*-երը օրինաչափորեն մեծ փոփոխություններ չեն կրում, ուստի կարող ենք ենթադրել, որ *ս*-ի անկումը պայմանավորված է առավելապես տնտեսման սկզբունքով, որի դեպքում իմաստային կորուստ չենք ունենում:

Ключевые слова: апокопа, разговорный армянский язык, физические размеры: длительность, интенсивность, частота, формант.

Г. Г. Григорян - О падении частицы *u [s]* в причастные формы *quɫ [gal]* “прийти, приходить”, *uɫɫ [tal]* ‘давать, дать’, *ɫɫɫ [lal]* “плакать” разговорного армянского языка. - В современном разговорном языке ярким примером выпадения звуков является падение звука *-u [s]* окончания *-hu [is]* глаголов *quɫhu [galis]* и *uɫɫhu [talis]*. Согласно нашим экспериментальным наблюдениям, звук *-u [s]* в конце слова является довольно «стабильным» звуком, и мы не можем подтвердить тот факт, что спад произошел из-за слабого произношения. Падение звука «s» окончания «is» в разговорном языке обусловлено в основном принципом экономии, и в этом случае мы не имеем смысловой потери.

Keywords: *apocope, spoken language, physical parameter: duration, intensity, frequency, formant.*

G. G. Grigoryan – On the Fall of Suffix *u [s]* in the Verb-forms *quɫ [gal]*, *uɫɫ [tal]*, *ɫɫɫ [lal]* in Spoken Armenian. - In the modern colloquial language a striking example of falling sounds is the omission of the sound *u [s]* in the ending *-hu [is]* of the verbs *quɫhu [galis]* and *uɫɫhu [talis]*. According to our experimental observations, the sound *u [s]* at the end of a word is a fairly “stable” sound, and we cannot confirm the fact that the omission or the loss occurred due to weak pronunciation. The fall of the sound “s” of the ending “is” in the colloquial language is due to mainly the principle of economy, in which case we have no semantic loss.

ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ «ՀԱԳՈՒՍ» ԻՄԱՍՏԱՅԻՆ-
ԹԵՄԱՏԻԿ ԽՄԲՈՒՄ

Բանասիր. գիտ. թեկնածու Լ. Հ. Ղամոյան

Բանայի բառեր: Մենիմաստ և բազմիմաստ բառեր, «հագուստ» իմաստային (թեմատիկ) խումբ, փոխաբերական իմաստ, դարձվածային իմաստ:

Բազմիմաստությունը արդյունք է բառային իմաստների զարգացման, բառի սկզբնական իմաստի փոփոխությամբ¹: Ուսումնասիրելով *հագուստ* իմաստային (թեմատիկ) խմբի բառապաշարը՝ նկատում ենք, որ բառերի մի զգալի մասը բազմիմաստ է, որ բացատրվում է արդի հայերենի զարգացման ընդհանուր օրինաչափություններով, նոր պայմաններում նրա բառապաշարի հարրստացմամբ և կատարելագործմամբ՝ թե՛ քանակապես, թե՛ իմաստաբանորեն: Նման քննության համար հիմք ենք ընդունում Է. Աղայանի հետևյալ սահմանումը. «Որքան երկար է բառի «կյանքը», այսինքն՝ նրա գործածությունը լեզվի մեջ, այնքան հարուստ է նաև նրա բովանդակությունը և այնքան շատ են նրա իմաստները»²: Այս ձևակերպումը լիովին վերաբերում է նաև «հագուստ» իմաստային (թեմատիկ) խմբի բառերին, և դա պատահական չէ:

Հագուստ իմաստային (թեմատիկ) խմբի բազմիմաստ բառերի իմաստները ներկայացնում են մի բաց համակարգ, որի միավորների միջև կա որոշակի ընդհանրություն. առանձնանում են երկու և ավելի իմաստներով բառեր, որոնք գտնվում են որոշակի հարաբերության մեջ:

ա. Բավականին շատ են երկու իմաստով (երկիմաստ) բառերը. օր՝ *զլխարկ* «1. գլուխը ծածկելու հագուստ, 2. մի գլխարկի տա-

¹ Վերնագրում կա ձևակերպման սխալ (տավտոլոգիա). *իմաստային*-ը, իբրև տերմին, *թեմատիկ*-ի թարգմանությունն է՝ հայերենում, որ ճշտիվ առաջարկել է ակադ. Գ. Բ. Ջահուկյանը (*ծանոթ. Խմբ.*):

² Է. Բ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 48:

րողության չափ»։ *հագուստ* «1. հագնելու շոր, զգեստ, հանդերձ, 2. զգեստների ամբողջությունը, հագուստեղեն», *ասր* «1. ոչխարի բուրդ (մանաւանդ մաքրած՝ սպիտակ), գեղմ, 2. ասուեղեն՝ բրդե հագուստ» (ԳԲ) և այլն։

բ. Եռիմաստ անվանումներից են՝ *վտաւակ* «1. տակի զգեստ, շապիկ, 2. (եկեղց.) ուսանոց, վակաս, 3. վերարկու», *բեհեզ* «1. վուշի բարակ թել, 2. վուշի թելից գործուած նուրբ կտոր, 3. բեհեզէ զգեստ» (ԳԲ) և այլն։

գ. Քռիմաստ բառանուններից ունենք *հանդերձ*՝ «1. զգեստ, հագուստ, 2. ծածկոց, ծածկույթ, 3. շորի կտոր, լաթ, ձորձ, 4. հանդերձանք, սարք, պատրաստություն» (ԳԲ) և այլն։

դ. Կան նաև հինգ և ավելի իմաստներ ունեցող բառեր, որոնք հիմնականում բարբառային են. օր.՝ *մեզար* «1. Վն. Մշ. Կր. Սս. կանանց և աղջիկների կապելու գոգնոց, 2. Վն. Սս. մազե լաթ՝ կտավի նման հյուսած՝ գործի ժամանակ առաջը կապելու համար, 3. Մր. Ղզի. հացի սփռոց, 4. Ղրբ. բրդե գործվածք, որով թախտը կամ խմորի երեսն են ծածկում, 5. Վն. բրդյա մեծ բոխչա, որի մեջ կանայք հաց և այլ մթերք են դնում և շալակին առնում, հեռու տեղ տանում» (ՀԼԲԲ) և այլն։ Նկատելի է այն, որ դրանցում բուն կամ գլխավոր իմաստները ելակետային են, իսկ մյուսները՝ հավելյալ («երկրորդական» կամ ածանցյալ). օր.՝ *բարուր* բառն իր ուղղակի իմաստով նշանակում է «խանձարուր, նորածին մանկան փաթեթոց ամբողջությունը». այս իմաստի հետ է կապված ածանցյալ իմաստը՝ «խանձարուրի մեջ փաթաթած երեխա» և այլն։

Բազմիմաստ բառերը կարող են կազմված լինել բառակազմական տարբեր կաղապարներով. դրանց մեջ կան և՛ արմատական, և՛ ածանցավոր բառեր, ինչպես նաև՝ բարդություններ. նշենք նման կազմություններից հետևյալները։

1. *Արմատական բազմիմաստ բառեր*, օր.՝ *խույր* «1. թանկագին քարերով զարդարված պսակաձև փաթաթոց կամ գլխանոց, որ գլուխներին դնում կամ կապում էին արքաները, բարձրագույն իշխանավորները, կրոնավորները իբրև նշան իրենց բարձր աստի-

ճանի, 2. խույրաձև գլխարկ»։ *թաշկիհնակ* «1. բամբակյա կամ մետաքսյա կտորի փոքրիկ քառակուսի շերտ՝ քիթը, բերանը, դեմքը սրբելու համար» և այլն:

2. *Ածանցավոր բազմիմաստ բառեր*, օր.՝ *գայլենի* «1. գայլի մորթի, 2. գայլի մորթուց կարած (մուշտակ), 3. գայլի մորթուց պատրաստած», *ընձենի* «1. ընձի մորթի, 2. ընձի մորթուց կարած (մուշտակ), 3. ընձի մորթուց պատրաստված՝ կարված» (ԺՀԼԲԲ)»։ *թիկնանոց* «1. անթև կարճ վերարկու, 2. թիկունքի վրայ զցելու զգեստ (առանց թևերի)», *գառնենի* «1. գառան մորթի, 2. գառան մորթուց պատրաստած», *թեզանաւոր* «1. թեզանիք ունեցող, 2. թեզանիքով զգեստ» (ԳԲ) և այլն:

3. *Բազմիմաստ բարդ բառեր*: Բազմիմաստ կարող են լինել նաև բարդ բառեր: Իսկական բարդությունները կապակցության վերածելիս արտահայտում են երկու և ավելի նույնպիսի հարաբերություն՝ տարբերի բառիմաստով, օր.՝ *ծաղկազլխարկ* «1. ծաղիկներից հյուսված գլխարկ, 2. ծաղկազարդ գլխարկ»:

Հաճախ բարդության իմաստի բազմակիությունը կախված է վերջին ձևային կամ բաղադրիչի բնույթից. այսպես՝ կան գերադաս բաղադրիչներ, որոնք կարող են ընկալվել և՛ բայական, և՛ գոյականական իմաստով, օր.՝ *բրդազգեստ* բարդ բառը կարող է ընկալվել ոչ միայն իբրև՝ «1. բրդյա զգեստ հագած», այլև՝ «2. բրդյա հագուստ», *հարսնազգեստ*՝ «1. հարսի նման հագնված, հարսի նման զուգված-զարդարված», նաև՝ «2. հարսի զգեստ». *մետաքսաշապիկ*՝ «1. մետաքսե շապիկ հագած», այլև՝ «2. մետաքսե շապիկ» (օրինակները տե՛ս ԺՀԼԲԲ) և այլն:

Նշված բարդությունները հոդակապով կազմություններ են. հանդիպում են նաև անհոդակապ ձևեր, ինչպես՝ *թևշոր* (նաև թևաշոր) «1. շոր, որ սափորով ջուր կրողը առնում է ուսին հագուստը չկեղտոտելու և ուսը չցավեցնելու նպատակով. ուսաշոր, թևշոր, 2. մանկան թևերը փաթաթելու շոր, թաթաշոր». *կրծկալ* «1. կուրծքը պատելու շոր, զգեստ, կրծակալ, կրծապանակ, լանջապանակ, լանջակալ, 2. արևելյան տարագով կանացի զգեստի մաս, որ

զգեստի վրայից ծածկում է կուրծքը, կոճկվում է վզի ետևի կողմում և ներքևից երիզով կապվում է մեջքին, 3. շորի կտոր, որ կապում են երեխայի վզից՝ զգեստը մաքուր պահելու համար, 4. (բրբռ.) քառակուսի մորուք» (ԺՀԼԲԲ). *մխշոր «Դրս. (Քդ.)* 1. ծխի մեջ աշխատող կանանց արտահագուստ, 2. ծխացող, 3. խոպոտ» (ՀԼԲԲ) և այլն:

«*Հագուստ*» նշանակող բազմիմաստ բառերի մեծ մասը *գոյա-կան* է, ավելի քիչ մասը՝ *ածական* են, սակավ են *բայ* հանդիսացող միավորները. օր. *գօտեւորել* «1. գօտի կապել (ուրիշին կամ ինքն իրեն)», «2. *փխբ.* կազմ ու պատրաստ լինել, գօտեպնդուել, գօրանալ, սրտապնդուել» (ԳԲ), *լանթել* «1. մաշված հագուստը մի քանի տեղից կարկատել» (*Ղրբ. Հվր.*), «2. դժգոհ՝ կոպիտ պատասխան տալ» (ՀԼԲԲ) և այլն:

Հին գրական հայերենից գրական աշխարհաբարին են անցել *հագուստի* մի քանի անվանումներ՝ ենթարկվելով իմաստային փոփոխությունների. օր.՝ *գոտի* բառը գրաբարում ունեցել է 5 իմաստ. «1. մեջքի գօտի, մեջկապ, 2. (աստղգ.) մոլորակների ուղեծրի կազմած ձուածրաձև շրջանակը, 3. (աշխգր.) երկրագնդի մակերևույթի՝ երկու միջօրեականների միջև պարփակուած տարածութիւնը, 4. լեռնաշղթայ, 5. կամարաձև ճեմելու տեղ ապարանքներում» (ԳԲ), իսկ միջին հայերենում հանդիպում ենք *գօտեկ* տարբերակով, որը մենիմաստ է՝ «գօտի, մեջկապ» (ՄՀԲ). պահպանվել է այդ բառի գլխավոր իմաստը, փոփոխվել են 2-րդ և 3-րդ իմաստները, 4-րդ և 5-րդ իմաստները դուրս են եկել գործածությունից, ավելացել են նորերը՝ «որևէ երկրի բաժանումը ըստ տնտեսական շրջանների», «ռազմաճակատում որևէ որոշակի նպատակի ծառայող տարածություն», իսկ երկուսը՝ «*փխբ.* երկարություն (գետի՝ ճանապարհի և այլն)» և «*փխբ.* ծիածան» (ԺՀԼԲԲ): Այդպես նաև *գրապան, գտակ, կնգուղ, կպպա, խալաթ* և այլ բառերի դեպքում:

Նկատելի է նաև այն, որ *հագուստ* հասկացությունն նշող բազմիմաստ բառերի իմաստները կարող են հանդես գալ տարբեր ենթախմբերի մեջ.

1) *Միննույն իմաստային խմբին պատկանող բառեր*. օր.՝ *պատմուճան* «1. երկար և լայն վերնազգեստ, 2. փառաւոր՝ զարդարուն զգեստ, 3. սովորաբար զգեստ». *սփածանէլի* «1. գոգնոց, 2. վրան զցելու՝ ծածկելու՝ փաթաթելու շոր», *վարջամակ* «1. թաշկինակ, 2. սրբիչ, դաստառակ, 3. գլխին փաթաթելու՝ կապելու շոր, 4. գլխի փաթոյթ, ապարօշ» (ԳԲ) և այլն:

2) *Տարբեր իմաստային խմբերի պատկանող բառեր՝ իրենց ենթախմբերով*:

ա) Գլխավոր (ելակետային) իմաստը «հագուստ» է նշանակում, մյուսը (կամ մյուսները)՝ ոչ. օր.՝ *կումաշ* «1. ընտիր կերպաս, 2. շարժական գույք», *սանտալ* «1. սանդալ, մույկ (ոտնաման), *փառչամ* «1. զգեստի քղանցք, 2. գլխի մազերի հյուսածո փունջ, ցցունք» (ՄՀԲ) և այլն:

բ) Միայն երկրորդական կամ ածանցյալ իմաստն է (կամ իմաստներն են) «հագուստ» նշանակող խմբից, օր.՝ *օթոց* «1. օթևանելու՝ գիշերելու տեղ, օթևան, սենյակ, ննջարան, 2. անկողնու ծածկոց, 3. հագուստի վրայից հագնելու վերնազգեստ (վերարկու, թիկնոց են)» (ԳԲ) և այլն:

Հանդիպում են բազմիմաստ բառեր, որոնց մի իմաստը հատկանիշ է ցույց տալիս, մյուսը՝ առարկա. օր.՝ *քրձեղէն* «1. քրձից պատրաստուած, քրձէ, 2. քրձից պատրաստուած իրեր՝ հագուստներ» (ԳԲ), *գյուլբանդ*// *գյուլբանք* «1. ծաղկավոր, ծաղկազարդ» (Ար.), «2. ծաղկազարդ թաշկինակ՝ գլխակապ» (ՀԼԲԲ):

Բառի փոխաբերական գործածությամբ և իմաստային զուգորդմամբ ընդլայնվել են նրա իմաստային սահմանները. օր.՝ *երկարահանդերձ*, հիմնական ((հզվդ.) երկար հագուստ ունեցող), ուղիղ իմաստից բացի ունի «*փխբ.* (հնց.) հոգևորական» իմաստ. *զգեստ* բառանունն իր՝ «1. ընդհանրապես հագուստ, հանդերձ, 2. վերնազգեստ, շրջազգեստ» իմաստների կողքին ունի՝ «3. *փխբ.* բուսականություն, կանաչ, կանաչություն, 4. *փխբ.* ձյան սավան, 5. *փխբ.* տերևները ծառերի նկատմամբ». *թաշկինակ*՝ «1. բամբակյա կամ մետաքսյա կտորի փոքրիկ քառակուսի շերտ՝ քիթը, բերանը,

դեմքը սրբելու համար, 2. բարակ կտորից պատրաստված սովորաբար եռանկյունաձև կանացի փոքրիկ գլխաշոր» և «3. *փխբ*. կամագուրկ, հնագանդ մարդ» (ԺՀԼԲԲ) և այլն:

Ի տարբերություն սովորական բառերի՝ դրանք մենիմաստ են, երբեմն հանդես են գալիս իմաստային ճյուղավորումներով, որոնցում առկա է իմաստային ընդհանրություն, օր.՝ *գոտին (գոտիկը) հաստացնել* - 1. հարստանալ, հարստություն դիզել, 2. գիրանալ, չաղանալ. *գրպանը ծակ* - 1. առատորեն՝ շռայլորեն ծախսող, վատնող, 2. դրամ չունեցող, չքավոր, քսակը ծակ. *գրպանը մտնել* - 1. գրպանից գողություն անել, գողանալ, ուրիշի ունեցածը յուրացնել, 2. շահ ստանալ, բաժին հանել, օգտվել. *փեշից կախվել կամ կախ ընկնել* - 1. աղաչել, օգնություն խնդրել, 2. մի բանով կաշկանդվել, հակված լինել մի բանի» և այլն:

Բազմիմաստության հետևանքով երբեմն տեղի է ունենում բաղադրիչների իմաստային կապի թուլացում, կրկնակի վերաիմաստավորում և այլն, առաջ եկած փոխաբերական նոր իմաստ դարձվածային միավորի գլխավոր իմաստի հիման վրա. օր.՝ ա) *սրտի թելը կտրվել* - 1. մեռնել, 2. սաստիկ վախենալ, բ) *հոգին գրպանը դնել* - 1. անխիղճ, անգութ լինել, 2. ժլատ, գծուծ լինել, ժլատություն անել, գ) *ասեղ կուլ տված* - 1. սաստիկ նիհար, 2. վիզը ձգված (մարդու մասին)³:

Այսպիսով՝ «հագուստ» նշանակող բառերի և դարձվածային միավորների բազմիմաստությունը ևս մեկից ավելի իմաստների համատեղումն է մեկ միավորի սահմաններում, ընդ որում դարձվածային միավորների իմաստները երբեմն իրարից այնքան էլ չեն տարբերվում և կարող են դիտարկվել իբրև հոմանիշներ: Այս դեպքում ևս կարևորվում է համատեքստը, որտեղ էլ կոնկրետանում են բառիմաստները և ճշգրտվում:

³ Օրինակները քաղել ենք Ա. Մ. Սուքիասյանի, Ս. Ա. Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանից» (Ե., 1975):

Համառոտագրություններ

ԱԱՆԲ – Արեւմտահայերէն արեւելահայերէն նոր բառարան

Ար. – Արարատյան

Արբ - Արաբկիր

բրբռ.- բարբառային

ԳԲ – Գրաբարի բառարան

Գնձ. – Գանձակ

Դրս. - Դերսիմ

Կր – Կարին

ԺՀԼԲԲ – Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան

ՀԼԲԲ – Հայոց լեզվի բարբառային բառարան

Հճն. – Հաճրն

Հվր.- Հավարիկ

Ղզխ - Ղազախ

Ղրբ. – Ղարաբաղ

ՍՀԲ – Սիջին հայերենի բառարան

ՆՆ – Նոր Նախիջևան

Պլ – Պոլիս

Սբ.- Սեբաստիա

Սս - Սասուն

Վն - Վան

Քղ. - Քղի

Ключевые слова: современный армянский язык, полисемия и моносемия, тематическая группа “одежда”, корень и суффикс, сложные и суффиксальные слова, новообразование, неологизмы, метафора, фразеологизм.

Л. Г. Гамоян - Полисемия в семантической группе “одежда” в современном армянском языке. - Большинство слов в семантической группе “Одежда” многозначные, но все значения не имеют одинакового смысла в словообразовательной структуре языка. Основные из этих значений являются исходными, а другие - вторичными или производными, но все находятся в определенных взаимоотношениях. Многозначные слова в основном бывают простые, производные и составные. В семантической группе “Одежда” есть новообразования и фразеологизмы, которые также много-

значны. Подобно словам, фразеологизмы имеют свою внешнюю и внутреннюю стороны, бывают однозначными и многозначными.

Keywords: Modern Armenian, polysemantic and monosemantic words, semantic field “Clothes”, root, affix, neologism, compound and derivative words, metaphor, phrase.

L. H. Ghamoyan - Polysemy in Semantic Group “Clothes” in Modern Armenian. - Majority of words in the semantic field “Clothes” are polysemantic, but all meanings haven't the same sense in the word structure of language. The main of these meanings are initial, and others are secondary or derivative, but all they are in the definite connections. Generally polysemantic words are simple, derivative and compound in word formation. In the semantic field “Clothes” there are neologisms and phrases, which are also multisense. The phrases like words have their external and inner sides and are simple and multisignificant.

ԲԱՌԻՄԱՍՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՇԵՂՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԻ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Բանասիր. գիտ. թեկնածու Ս.Վ. Սաֆարյան

Հիմնաբառեր: Բառիմաստ, հոմանիշություն, իմաստի ընդլայնում, իմաստի հակադրություն, իմաստային նրբերանգներ:

Արդի հայերենում կան բառագործածության շեղումներ, որոնք կապված են իմաստաբանության հետ. ըստ Հ. Գալստյանի՝ «Բառագործածության սխալները բառիմաստը չհասկանալու կամ ստույգ չիմանալու հետևանք են»¹:

Ստորև անդրադառնում ենք նման շեղումների մի քանի տեսակների.

1. *Բառագործածության շեղումներ հնչյունային նմանության կան նման արտասանության հետևանքով. վարք* «իրեն պահելու եղանակ, ձև» և *վարկ* «հեղինակություն, պատիվ» բառերի արտասանական նմանության հիմքի վրա սխալ կազմություն է *վարքաբեկել* «վարկաբեկել» բառը: Նույն կերպ՝ *հովար* և *հովհար* բառերի սխալ գործածության տեղիք տալ. *հովար* բառը «գլխարկի ճակատամասի առաջ ձգվող հատվածն» է, իսկ *հովհար* բառը՝ «հով անելու համար ձեռքի փոքրիկ հարմարանք»: Ուրեմն՝ ճիշտ չի լինի ասել՝ «Նա դեմքի մոտ անընդհատ շարժում էր *հովարը*»: Այդպես նաև *հրաձիգ* «հրազենից կրակող» և *հրձիգ* «այրող, հրդեհող» *հառել* «սևեռուն նայել», և *հառնել* «վեր ելնել, բարձրանալ. վերակենդանանալ» և այլն:

Բառիմաստի հետ կապված սխալները առաջանում են իմաստով իրարից հեռու բառերի դպքում. օր.՝ *այգաբաց* բառը կազմված է *այգ* «լույս» և *բաց* «բանալ» բառերից և նշանակում է «լուսաբաց»: Նրա հետ շփոթության տեղիք տվող *այգեբաց* բառը կազմված է *այգի-ա-բաց* բաղադրիչներից (ինչպես *այգեգործ*՝ *այգի-ա-գործ*) և նշանակում է *այգեթաղից* հետո բացել այգին: Հետևաբար սխալ է՝

¹ Հ. Գալստյան, Ճիշտը և սխալը, Ե., 2019, էջ 5:

«Գարնանը սկսվում են այգաբացի աշխատանքները» նախադասությունը:

2. Մոտ հնչողություն կամ ձևային նմանություն և տարբեր իմաստներ ունեցող բառերի սխալ ընկալումներ. սրանց հետ են կապվում նաև հետևյալ բառերի գործածության մեջ նկատվող շեղումները. բրդել «մանր կտրատել» և (բրբռ.-խսկց.) բրթել «հրել, հեռուն մղել», գիրգ «փափուկ» և գիրկ «գոգ», թափոր «սգո կամ թաղման երթ» և թափուր «դատարկ, չզբաղեցրած», թյուր «սխալ, թյուրիմացություն կամ սխալ իմացություն» և թույր «գույն, երանգ» (օր.՝ սևաթույր), խարամ «մետաղական թափոն» և խարան «դաջվածք, երբեմն՝ ծանր հետք», կտրիճ «քաջ» և կտրիչ «կտրող գործիք» (-իչ վերջածանց), հերկել «վարել» և հերքել «ժխտել», պճնուհի «շատ զարդարվող կին» և պչրուհի «սեթևեթող, ձևեր անող կին» (այս դեպքում դեր է խաղում նաև իմաստի մոտիկությունը): Նման շեղումների կասեցման նպատակով եղել են կանոնարկման միջամտություններ, սակայն դրանք այսօր ևս շարունակում են տեղ գտնել արդի գրական հայերենի մեջ, մանավանդ բանավոր խոսքում:

Եթե *անօրինակ* (դրական շեշտադրումով) նշանակում է «օրինակը, նմանը չունեցող» (հմմտ. «*անօրինակ* անձնագոհություն») և *անօրինական* «օրենքից դուրս, ապօրինի» բառերի ոչ հաճախադեպ փոխատեղումներ կարող են լինել, ապա *բոնագրավել* և *բոնագանձել* իրավաբանական տերմինների գործածության նեղ շրջանակը և իմաստների ակնհայտ մոտիկությունը տեղիք են տալիս շփոթումների: Այս դեպքում աննուշադրությունն այն բանի նկատմամբ, որ առաջին բառը առնչվում է գույքի, իսկ երկրորդը դրամական առգրավումների հետ, կարող է հանգեցնել այսպիսի սխալի. «Օրենքի համապատասխան կետի պահպանումով *բոնագրավեցին* (ճիշտը՝ «*բոնագանձեցին*») կասկածյալի յուրացրած մեծ գումարը»:

3. Ճիշտ կամ սխալ գործածությունը երբեմն առաջանում է բառիմաստի ընդլայնման հետևանքով: «Ժառանգելը» և «Ժառանգություն ստանալը» նույն իմաստն ունեն, պարզապես առաջինը ժամանակի ընթացքում իմաստի ընդլայնումով ձևոք է բերել նաև «ժա-

ռանգություն թողնել, կտակել» հակառակ նշանակությունը: Իմաստի հստակ ընկալումը պարզ է դառնում՝ «Ծնողները նրան ժառանգել էին մեծ հարստություն» և «Նա ծնողներից ժառանգել էր մեծ հարստություն» կառուցվածքներում, որոնցից կայուն ընդունելին երկրորդն է: Նշենք նաև, որ եթե «ժառանգություն ստանալը» հիմնականում վերաբերում է նյութական-իրեղեն բնագավառին («Ժառանգություն էր ստացել տունը և այգին»), ապա «ժառանգելը» առնչվում է նաև հոգեմտավոր ոլորտի, բնավորության հետ. «Զգուշավորությունը ժառանգել էր նախնիներից»:

ա) Իմաստի ընդլայնման և բազմիմաստության հակումի հիման վրա առաձգականացման հնարավորություն կարող է ունենալ նաև *մեկնել* և *մեկնարկել* բառազույգը: *Մեկնել* բառի մի քանի իմաստներից՝ ա) «շարժվել» («Գնացքը մեկնում է առավոտյան»), բ) «երկարել» («Ձեռքը մեկնեց խեղդվողին»), գ) «բացատրել, պարզաբանել» («Անհասկանալի հատվածները մեկնելու-մեկնաբանելու կարիք ունեն») առաջինի հետ հոմանիշային կապի մեջ է *մեկնարկել* նորակազմությունը, որը նշանակում է «շարժվել, շարժումն սկսել»: Այս հիմքի վրա աստիճանաբար գործածության մեջ են մտնում «Զբոսաշրջիկները *մեկնարկեցին* միջնադարյան եկեղեցու մոտից» կազմության նման օրինակներ:

Կիրառական շփումը, մոտիկություն երբեմն ոչ նախընտրելի ձևեր է առաջադրում նաև *պահպանել* և *պաշտպանել* բառերին. առաջինը «պահելն է, խնամքով վերաբերելը ոչ միայն նյութական («պահպանել հին ձեռագրերը»), այլև հոգևոր-բարոյական արժեքներին (օր.՝ «պահպանել խաղաղություն, անցյալի հիշատակները, սիրո զգացմունքը»), այնինչ՝ երկրորդը՝ *պաշտպանել*-ը «ինչ-որ վտանգից հեռու պահելը, ազատելն» է՝ «պաշտպանել երկրի սահմանները, հայրենի տունը»: Կայունացած այս կազմությունների կողքին երբեմն գործածում ենք «պահպանել երկրի սահմանները», «պաշտպանել հին ձեռագրերը» ոչ նախընտրելի օրինակները, որը պետք է անել իմաստային նրբերանգների նկատմամբ մեծ ուշադրությամբ և սխալ ընկալումներից հեռու մնալու մտահոգությամբ. առաջին կա-

պակցությունը պետք է հուշի, որ երկրի սահմանները խնամքով պահելու անհրաժեշտություն կա, իսկ երկրորդը ակնարկում է, որ ձեռագրերի նկատմամբ անուշադրության վտանգ կա: Բոլոր դեպքերում նախընտրելի է ընդունված և գործածելի կայուն ձևերի կիրառությունը:

բ) Շփոթմունքի նրբերանգային հնարավորություն է պարունակում նաև *հասկացություն* և *հասկացողություն* մոտ հնչմամբ բառազույգը: *Հասկացություն*-ը «իմաստի՝ գաղափարի պատկերացումն» է, իսկ *հասկացողություն*-ը «այդ պատկերացման ըմբռնումը»: Ուստի պետք է սխալից խուսափել և հստակեցնել՝ «Դժվար ընկալելի են գիտական բարդ *հասկացությունները*» (ոչ թե *հասկացողությունները*) և «Այդ դեպքերի նկատմամբ նրա *հասկացողությունը* (ոչ թե *հասկացությունը*) պարզունակ էր» ձևակերպումների սահմանը, որպեսզի հնարավոր լինի խուսափել փոխատեղումներից:

Ահա և բացահայտ սխալ գործածությունների շարք են կազմում այնպիսի բառերը, որոնք ոչ միայն ձևային շատ կամ քիչ նմանություն ունեն, այլև իմաստային մոտ ընկալումների հնարավորություն են տալիս նաև բառակազմական ինչ-ինչ դրսևորումների մեջ. «-ություն, -ությ» ածանցների և բառիմաստի խորքային մոտիկության հիմքի վրա հանդիպում են *ավանդություն* «հնից եկած սովորություն, զրույց» և *ավանդույթ* «ընդունված կարգ, սովորույթ» բառերի փոխատեղման փաստեր: Սխալ են՝ «Այդ *ավանդույթները* (փխ.՝ *ավանդությունները*) անընդհատ պատմվելու հասել են նոր ժամանակներ», նաև՝ «Ավանդություն է (փխ.՝ *ավանդույթ* է) հարսի և փեսայի ուսերին լավաշ դնելը»: Նույն հիմունքներով իմաստային սխալ գործածության օրինակ է *բարդություն* «դժվարություն» և բարդույթ «կոմպլեքս», ներքին հակում» բառերի փոխատեղումը. «Գիտնականը ևս առնչվեց խնդրի լուծման բարդույթին (փխ.՝ *բարդությանը*)» նախադասության դեպքում:

գ) Հաճախադեպ են նաև մասնագիտական այս կամ այն ոլորտին առնչվող տերմինների հետ կապված բառիմաստային սխալ-

ները. *գործառություն* և *գործառույթ* «ֆունկցիա», «որոշակի շրջանակի գործողություն» բառի փոխարեն կիրառվում է *գործառնություն* պետական-քաղաքական, տնտեսական, բանկային, առևտրային կամ այլ ոլորտի բնորոշգործողություն» տերմինը. օր.՝ Հիմնական *գործառնությունը* (փխ.՝ «գործառությունը, գործառույթը») տեսական գիտելիքների գործնական կիրառությունն է՝ նախադասության մեջ: Տարբերությունը հստակվում է, եթե, օրինակ, «Հիմնարկը նոր *գործառնությունների* ծրագրեր է նախատեսում» նախադասության մեջ տվյալ բառը փոխարինենք *գործարքներ* բառով (*գործարքների* ծրագրեր), որը չենք կարող անել նախորդ նախադասության մեջ:

դ) Հաճախադեպ են նաև *պաշտոնական* և *պաշտոնեական* բառերի իմաստային անընդունելի փոխատեղումները: Առաջինը արտահայտում է ծիսակարգային, կանոնակարգված հարաբերությունների իմաստ՝ *պաշտոնական* հանդիպումներ, ճաշկերույթ, հաղորդագրություն» և այլն: Այնինչ, երկրորդը ներառում է դիրքի, իրավունքի ավելի սահմանափակ ոլորտ, հիմնականում կիրառվում է *պաշտոնեական* դիրքի չարաշահում» և նման կառույցներում: Ուստի սխալ են «պաշտոնեական բանակցություններ» և «պաշտոնական դիրքի չարաշահում» ձևակերպումները:

Այդպես նաև *պատրաստականություն* բառը «պատրաստ լինելը, կարողություն և հմտություն ունենալն» է, իսկ *պատրաստականություն* բառը՝ «ինչ-որ բան անելու ցանկություն, հոժարություն ունենալը»: Ուստի ճիշտ չեն՝ «Մասնագիտական բարձր *պատրաստականություն* ունի», կամ «Չարությունը խանգարում էր ուրիշին օգնելու *պատրաստականությանը*» և այլն:

ե) Բոլոր այս դեպքերում սխալ գործածությունների պատճառը իմաստաբանական է և ոչ թե բառակազմական: Նույն կերպ, *զեկուցում* նշանակում է «ինչ-որ թեմայով և մասնագիտության շրջանակներում գրավոր կամ բանավոր ելույթ», իսկ *զեկույց* բառը նշանակում է «հակիրճ տեղեկություն, հաղորդում»: Ուստի սխալ է «Գիտաժողովում ընթերցած բալոր *զեկույցները* (փխ. *զեկուցումները*)

տպավորիչ էին» նախադասությունը: Այդպես նաև *ծրագրել* նշանակում է «ինչ-որ անելիք որոշել՝ կանխատեսել», իսկ *ծրագրավորել* բառը՝ «համակարգչային ծրագրի կազմում»: Ուրեմն սխալ է՝ «Նա արդեն *ծրագրավորել էր* (փխ.՝ *ծրագրել էր*) ամառվա անելիքները» կազմությունը:

Հայերենում *կերպար* բառը «գրականության մեջ կամ արվեստի այլ ճյուղերում ստեղծած հերոսն» է, իսկ *կերպարանք*-ը պարզապես «տեսքն» է, ինչպես որ *հաղթել*-ը «հաղթանակ տանելն» է, իսկ *հաղթահարել*-ը՝ «դժվարություններից դուրս գալը»: *Հրավեր* բառը «մեկին կանչելը, հրավիրելն է՝ մասնակցելու միջոցառմանը», իսկ *հրավերք* բառը՝ «կազմակերպված միջոցառումն» է: Այդպես նաև՝ *հրատարակել* «տպագրել» և *հրապարակել* «ի ցույց հանել, հայտնի դարձնել», *վերաբերյալ* «ինչ-որ մեկի կամ բանի մասին» և *վերորբերյալը* (կամ վերոհիշյալ) «վերևում բերված», *տնօրինություն* «հսկելու, ղեկավարելու իրավունք ու պարտականություն» և *տնօրենություն* «ղեկավարություն՝ զեկավար լինելը» (և ճիշտ չէ ասել՝ «*Տնօրենությունը* խիստ հսկողություն է սահմանել»): ցուցմունք «վկայություն» և *ցուցումը* «հրահանգ, առաջադրանք. «Տնօրենի ցուցումները (ոչ թե ցուցմունքները) բոլորը պետք է հաշվի առնեն»:

Բառիմաստի հետ կապված շեղումներն առնչվում են կա՛մ հոմանիշությանը, կա՛մ բառաձևային նմանությանը: Առաջին դեպքում իմաստով մոտ բառերը երբեմն անհարկի կամ սխալ փոխատեղման են ենթարկվում, երբ ուշադրություն չի դարձվում իմաստային նրբերանգների պատմական փոփոխության, զարգացման վրա: Այսպես, *պատճառով* և *շնորհիվ* բառերը իմաստով մոտ են, բայց եթե առաջինը չեզոք, երբեմն նաև բացասական վերաբերմունք է ակնարկում («Չնչին միջադեպի *պատճառով* մեծ ընդհարում եղավ»), ապա երկրորդը նաև *շնորհ* («նպաստ, միջոց») արմատի պահանջով, դրական շեշտադրում ունի: «Ուժեղ կամքի *շնորհիվ* հասավ իր նպատակին» նախադասության մեջ, եթե օգտագործենք *պատճառով* բառը (կամքի *պատճառով*), գուցե չզգացվի սխալը, բայց ակնհայտ է իմաստային նրբերանգի խախտումը: Իսկ *համար* և *հանուն* կապերի հոմա-

նիշությունը թույլ է տալիս գործածել մեկը մյուսի փոխարեն, որպես հետադրություն և նախադրություն: Բայց հանդիպում են նաև երկուսը միասին գործածելու կոպիտ սխալները. «Տղամարդը պատրաստ էր ամեն ինչի հանուն սեփական տան պաշտպանության համար»:

Հանդիպում են նաև հակառակ օրինակներ. *մեղանչել* բայի գործածությունը սխալ՝ «մեղա գալ, ապաշխարել» իմաստով. «Բոլոր հանցանքներից հետո նա շարունակում էր *մեղանչել*», չի նշանակում «մեղա գալ», այլ ընդհակառակը՝ «... շարունակում էր մեղք գործել»: *Տեղի տալ* նշանակում է «հրաժարվել, ետ կանգնել», իսկ տեղիք տալը, ընդհակառակը, «պատճառ կամ առիթ դառնալն է. «Վեճի մեջ կինը տեղի տվեց, որպեսզի նոր ընդհարման տեղիք չտա»:

Այս ամենից հետևում է, որ բառիմաստի հետ կապված շեղումներից խուսափելու համար, կանոնների որոշ իմացությունից բացի, պետք է ուշադիր լինել բառերի ձևային նմանության, նույնահունչ լինելու մեջ զգացվող իմաստային նրբերանգների նկատմամբ, երբ սխալի տեղիք են տալիս ոչ միայն հոմանիշությունը, այլև նույնիսկ իմաստային հակադրությունը, որտեղ կարող են դեր խաղալ նաև բառակազմական ինչ-ինչ հիմունքներ: Շեղումը անհարկի է, երբ բանավոր խոսքից տարածվում է գրավորի վրա, կամ հակառակը:

Ключевые слова: смысл слова, отклонения, схожее произношение, синонимизм, расширения лексического значения слова, словообразование, противоположное значение смысла, смысловые оттенки, использование слов.

С. В. Сафарян - Смысловые отклонения в восприятии слов в современном армянском языке. - Отклонения в большинстве случаев, появляются из-за сходство произношения, синонимии или неправильного написания слова. ср.: *կտրիճ* [ktrič] “храбрый” и *կտրիչ* [ktrič^c] “резец”. *բնագրավել* [bɪnagravel] “конфисковать” и *բնագանձել* [bɪnaganjel] “взыскать”

սյգարաց [aygabac^c] “рассвет” и *սյգերաց* [aygebac^c] “раскопка”, которые в плане содержания они совершенно разные, являются лишь следствием сходства формы слова. Отклонения могут появляться вследствие расширения лексического значения слова: *ժառանգել* [žarangel] означает не только “получить наследство”, но и “оставить наследство”. В смысловых отклонениях иногда может сыграть роль также словообразование. ср.: *ավանդույթ* [avanduyt^c] “традиция” и *ավանդություն* [avandut^cyun] “предание”, *գործառնություն* [gorcaɹut^cyun] “функция” и *գործառնություն* [gorcaɹnut^cyun] “операция”, *բարդույթ* [barduyt^c] “комплекс” и *բարդություն* [bardut^cyun] “сложность”. Если отклонения, связанные со смысловыми оттенками, понятны (напр., замещение друг другом слов *պատճառով* [patčarov] “ввиду” и *շնորհիվ* [šnorhiv] “благодаря”), то совершенно неприемлемо использование слов с противоположным значением, как в случае слова *մեղանշել* [meɹanš^cel] в смысле “восприятия, как прийти с повинной или раскаяться”. Даже если язык, как живой организм, может некоторые ошибки утвердить как закономерность, так или иначе, следует по возможности избегать отклонений.

Keywords: Word meaning, deviations, similar sound, synonym, extension of the meaning, word formation, meaning contradiction, semantic nuances, word usage.

S. V. Safaryan - Deviations of Word Roots in Contemporary Armenian. –

The deviations of word root are mostly result of similar pronunciation, synonym and wrong spelling (e.g. կտրիճ [ktrič] “and կտրիչ [ktrič^c”). If in the words [bĭnagravel] ‘confiscate’ and բնագանձել [bĭnaganjel] ‘levy’ the deviation is caused by similar meaning, then in the case of սյգարաց [aygabacc] ‘dawn’ and սյգերաց [aygebacc] ‘digging’ the deviation is caused by a similar spelling. Deviations can arise also in the case of the extension of the meaning of the word: e.g. ժառանգել [žarangel] (to inherit) means not only to get heritage but also to give a heritage and in this case it is crucial to pay attention to the stylistic nuances of the context. Sometimes the deviation is caused by word formation: e.g. *ավանդույթ* [avanduyt^c] ‘tradition’ and *ավանդություն* [avanduyt^c] ‘tradition’ which is more noticeable in professional vocabulary (e.g. *գործառնություն* [gorcaɹut^cyun] ‘function’ and *գործառնություն*

[gorcaɾnut˘yun] 'operation', բարդություն barduyt˘ [˘] 'complex' and [բարդություն b̄ardut˘yun] 'complexity').

If the deviation of the semantic nuances is understandable (e.g. պատճառով [patčarov] 'in view of' and շնորհիվ [šnorhiv] 'in view of'), it is entirely unacceptable the usage of the word in its opposite meaning which for example can be see in understanding the word մեղանչել [mełančel] as 'repenting'. No matter how much the language would accept some mistakes as a pattern, it is always important to escape deviations.

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն . Б И Б Л И О Г Р А Ф И Я .
B I B L I O G R A P H Y .

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ 2002-2020
ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
(ամփոփ նկարագրություն)

Միջնադարի մեծանուն հեղինակ է Գրիգոր Տաթևացին, որից մեզ է հասել մատենագրական հարուստ ժառանգություն: 2002 թ. սկսած հրատարակված են հեղինակի մի շարք աշխատություններ և հատկապես նրա նշանավոր «Գիրք հարցմանց»-ի աշխարհաբար թարգմանությունը, այլև տարբեր բնույթի և ծավալի աշխատանքներ՝ նվիրված միջնադարյան քերականին, առակախոսին, բժշկագետին, մատենագետին, բազմաթիվ նոր բառերի հեղինակին, հանրագիտակ գիտնականին են Հայոց եկեղեցու մեծ սպասավորին:

Այդ աշխատություններից յուրաքանչյուրը նրա գրական ժառանգության այս կամ այն ոլորտի ուսումնասիրություն է. «Պատմական քերականության հարցեր. Գրիգոր Տաթևացի», «Միջնադարյան առակներ և զրույցներ», «Միջնադարյան հայ վարդապետներ, Գրիգոր Տաթևացի, Ներբողյան Հովհան Որոտնեցուն», «Գրիգոր Տաթևացի, Թևավոր խոսքեր և ասույթներ», «Նորահայտ բառեր 14-15-րդ դարերի մատենագրության մեջ, (Գրիգոր Տաթևացի)», «Գրիգոր Տաթևացու բժշկագիտական հայացքները», «Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի նորակազմ բառերի քննություն», «Գրիգոր Տաթևացի, «Գիրք հարցմանց», Համաբարբառ»: «Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց» (աշխարհաբար թարգմանություն):

Ստորև ներկայացնում ենք այդ աշխատությունների մատենագիտական նկարագրությունը:

1. Պատմական քերականության հարցեր. Գրիգոր Տաթևացի (Ե., 2002):

Տիտղոսաթերթ – Ս. Ս. Գրիգորյան, Պատմական քերականության հարցեր, Գրիգոր Տաթևացի (14-15-րդ դդ.), ՀՀ ԳԱԱ «Գիտություն», հրատ., Ե., 2002, 192 էջ:

Բովանդակություն. Գրքում ներկայացվում են Տաթևացու կյանքը և գործունեությունը, գրական ժառանգությունը, քերականական հայացքները՝ համեմատությամբ միջնադարյան մյուս քերականների աշխատությունների, ըստ առանձին գլուխների: Գլ. 1. Գրիգոր Տաթևացու կյանքը և գործունեությունը. Գրիգոր Տաթևացին իբրև քերական. ա. Գրիգոր Տաթևացին և նրա ժամանակը. բ. Գրիգոր Տաթևացու գրական ժառանգությունը: Գլ. 2. Լեզվագիտական հարցադրումները Գրիգոր Տաթևացու աշխատություններում. ա. Արիստակեսի և Գևորգ Սկևռացու աշխատությունների մեկնությունները, բ. Ընդհանուր տեսական հարցադրումներ, գ. Գրանշաններին. շարժանշաններին և հնչյունաբանությանը վերաբերող դիտողություններ, դ. Ձևաբանությանը վերաբերող դիտողություններ, ե. Շարահյուսությանը վերաբերող դիտողություններ, գ. Դիտողություններ ոճաբանության վերաբերյալ: Գլ. 3. Բառերի մեկնությունները և ստուգաբանությունները Տաթևացու աշխատություններում. ա. Բառերի մեկնությունները, բ. Տաթևացու ստուգաբանությունները: «Գրիգոր Տաթևացին իբրև մանկավարժ» գլխում ներկայացված են Տաթևացու մանկավարժական գործունեությունը և հայացքները:

«Փոխաբերական խոսքը և առակները Տաթևացու գրական ժառանգության մեջ» և «Բառերի այլաբանական արժեքը միջնադարյան մեկնություններում» գլուխներն անդրադարձ են նրա կողմից փոխաբերական խոսքի և առակների կիրառությանը, նաև դրանց վերլուծություններին: «*Բնի՞կ, թե՞ փոխառյալ բառեր*» գլխում վերլուծվում են տեսական մոտեցումներ՝ լեզուների փոխազդեցության հարցին: «*Բառերի բացատրությունը «Երգ-երգոց»-ի միջնադարյան մեկնություններում և ձեռագիր բառարանները*» գլխում վերլուծված

են հիշյալ բնագրի միջնադարյան մեկնությունները և դրանց կապը ձեռագիր բառարանների հետ:

2. *Вопросы грамматики в трудах Григора Татеваци* (Երևան, 2016):

Տիտղոսաթերթ. ՀՀ ԳԱԱ, Հ, Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Սուսաննա Գրիգորյան, Քերականական հարցերը Գրիգոր Տաթևացու աշխատություններում, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», հրատ., Ե., 2016: НАН РА, Институт Языка им. Р. Ачаряна, Сусанна Григорьян, Вопросы грамматики в трудах Григора Татеваци, Ереван, Изд-во «Гитутюн» НАН РА, 2016.

Բովանդակություն. Գիրքը 2002 թ. հրատարակված «Պատմական քերականության հարցեր, Գրիգոր Տաթևացի (14-15-րդ դդ.)», հրատարակության հիմնական մասի՝ Գրիգոր Տաթևացու քերականական հայացքների ռուսերեն թարգմանության հրատարակությունն է՝ ռուսալեզու լսարանին ներկայացնելու համար:

3. *Միջնադարյան առակներ և զրույցներ* (Ե., 2006):

Տիտղոսաթերթ. Ս. Մ. Գրիգորյան, Միջնադարյան առակներ և զրույցներ, Ե., «Տիգրան Մեծ» հրատ., 2006:

Բովանդակություն. Առակներ ունի նաև Տաթևացին, որոնք յուրովի համալրում են միջնադարյան առակագրության էջերը:

4. *Միջնադարյան հայ վարդապետներ, Գրիգոր Տաթևացի, Ներբողյան Հովհան Որոտնեցուն* (Ե., 2007):

Տիտղոսաթերթ. Միջնադարյան հայ վարդապետներ, Գրիգոր Տաթևացի, Ներբողյան Հովհան Որոտնեցուն, Ե., «Տիգրան Մեծ» հրատ., 2007:

Բովանդակություն. Ներբողյանը ձոն է Հովհան Որոտնեցուն՝ միջնադարյան մեծ վարդապետին և Տաթևացու ուսուցչին: Գրվել է վերջինիս հուղարկավորության օրերին. Որոտնեցու վախճանվել է 1346 (կամ՝ 1388) թ., սա նաև այդ երկը գրելու տարեթիվն է: Այն հրատարակվել է նրա «Գիրք քարգութեան» (Ամարան հատոր) (Կ. Պոլիս, 1741 թ.) երկի հետ: Այն. ըստ էության, նրա միակ գեղար-

վեստական երկն է, որ նորություն է միջնադարյան գեղարվեստական գրականության մեջ:

5. *Թևավոր խոսքեր և ասույթներ* (Ե., 2009):

Տիտղոսաթերթ. Գրիգոր Տաթևացի, Թևավոր խոսքեր և ասույթներ, «Տիգրան Մեծ» հրատ., Ե., 2009:

Բովանդակություն. Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության մեջ մեծ թիվ են կազմում թևավոր խոսքերը և ասույթները՝ հիմնականում ձևավորված հեղինակի կողմից այս կամ այն հարցադրումն ամփոփելուց հետո, որոնք հիմնականում այսօր ևս ընկալելի են («ամենայն ջուր ոչ առնէ զպտուղ», «ոմանք են որպէս մոխիր, որ շուտով առնուն, բայց շուտով կորուսանեն») և այլն):

6. *Նորահայտ բառեր 14-15-րդ դարերի մատենագրության մեջ* (Ե., 2009):

Տիտղոսաթերթ. Ս.Ս.Գրիգորյան, Նորահայտ բառեր 14-15-րդ դարերի մատենագրության մեջ (Գրիգոր Տաթևացի) Ե., «Տիգրան Մեծ» հրատ., 2009:

Բովանդակություն. Առանձնացված նորահայտ բառերը վկայված չեն «Նոր հայկազեան բառարանում», մասամբ նշվում են գրաբարի այլ բառարաններում՝ առանց գործածության առաջին աղբյուրի նշման, ուստի դրանք ևս բերվել են աշխատության մեջ (համապատասխան հղումներով)¹:

7. *Համաբարբառ Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի* (հհ. 1-4, Ե., 2011-2013):

Տիտղոսաթերթ. Գրիգոր Տաթևացի, «Գիրք հարցմանց», համաբարբառ, կազմեց՝ բ. գ. թ. Ս. Գրիգորյան, հհ. Ա-Դ, «Տիգրան Մեծ» հրատ., Ե., 2011-2013:

Բովանդակություն. Բառերը բերվում են բնագրային վկայություններով, և այն փաստորեն կարող է փոխարինել բնագրին, ուստի օրինակները ավելի ընդարձակ են, գրեթե առանց կրճատումների:

¹ Տաթևացու տպագիր երկերի բառապաշարի նորաբանություններին անդրադարձել է նաև Տիգրան սրկ. Գափոյանը՝ «Գրիգոր Տաթևացու նորակազմությունները» աշխատության մեջ: Տե՛ս «Տաթև» ուսանողական տարեգիրք Էջմիածնի հոգևոր ձեմարանի. Ա տարի (1996-1997), Ս. Էջմիածին, 1998, էջ 77-114 (ծանոթ. խմբ.):

Համաբարբառի կազմումից պարզվեց, որ այդ գրքի բառապաշարից 400 բառ վկայված չէ «Նոր հայկազյան բառարանում», որն էլ առանձին քննված է կազմողի «Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի նորակազմ բառերի քննություն» աշխատության մեջ (Ե., 2014 թ.):

8. *Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի նորակազմ բառերի քննություն* (Ե., 2014):

Տիտղոսաթերթ. Ս. Գրիգորյան, Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի նորակազմ բառերի քննություն, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014:

Բովանդակություն. «Գիրք հարցմանց»-ի բառապաշարի այն միավորները, որոնք տեղ չեն գտել «Նոր հայկազյան բառարանում», պայմանականորեն անվանվել են նորակազմ բառեր, որոնք էլ բերվել են երկու մասով՝ նախկինում վկայված և բառարաններից դուրս մնացած:

9. *Գրիգոր Տաթևացու բժշկագիտական հայացքները* (Ե., 2015):

Տիտղոսաթերթ. Ս. Գրիգորյան, Գրիգոր Տաթևացու բժշկագիտական հայացքները, Ե., «Տիգրան Մեծ» հրատ., 2015:

Բովանդակություն. Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի բժշկագիտական նյութը՝ հարցադրումները և վերլուծությունները, մի քանի տասնյակ էջերից անցնում են, և այդ նյութը միջնադարյան հեղինակների տվյալների հետ համեմատելու դեպքում կարելի է խոսել Տաթևացու բժշկագիտական հայացքների մասին:

10. *Գիրք հարցմանց, աշխարհաբար թարգմանություն* (Ե., 2020):

Տիտղոսաթերթ. ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, թարգմ. Ս. Գրիգորյանի, Ե., «Տիգրան Մեծ» հրատ., 2020:

Բովանդակություն. «Գիրք հարցմանց»-ը Ս. Գրքի համակողմանի մեկնությունն է, որ 1729 թ. տպագրվեց Կ. Պոլսում, ավելի ուշ՝ լույս է տեսնում աշխարհաբար թարգմանությամբ: Ընդգրկում է Աստվածաշնչի հայտնի մեկնությունները, վերլուծում դավանաբա-

նական վեճերը, նրանց դրդապատճառները, հիմնավորում Հայոց եկեղեցու ճշմարիտ ընթացքը:

Կ. Պոլսի հրատարակության մեջ բերվում է նրա աշխատությունների ցանկը (մեկուկես տասնյակից ավելի. տե՛ս իր տեղում):

Մինչ «Գիրք հարցմանց»-ի այս թարգմանությունը գործածվում էր գրաբարը, որ ոչ բոլորին էր մատչելի, այլև հանված էր մեկ ամբողջական գլուխ Կ. Պոլսի հրատարակությունից: Այս թարգմանության մեջ վերականգնվել է «Ընդդեմ տաճկաց» գլուխը:

Կազմեց՝ Բ. Գ. Թ. Ս. Ս. Գրիգորյան

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Ժողովածուն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հայոց լեզվի պատմության բաժնի չորս գիտաշխատողների ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են հայերենի պատմական զարգացման ընթացքում դրսևորված լեզվաոճական տարբեր իրողությունների քննությանը²:

Ս. Գրիգորյանը «Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի հատուկ անունների իմաստային քննություն» աշխատանքը վեր է հանում նշված երկում տեղ գտած նման միավորների ամբողջական ցանկը՝ վկայված պատմական նույնպիսի միջավայրում, ունեն աղբյուրագիտական արժեք՝ համալրելու համապատասխան բառարանները:

Վաղ միջնադարյան հայ քերականները, ավանդույթի ուժով, համոզմունք են հայտնել, որ ի սկզբանե անունները դրվել են ըստ իրերի բնույթի: Սրանով կարելի է բացատրել հասարակ և հատուկ անունների տարբերությունը, որի քննության մեջ հաճախ նույնանուն են փիլիսոփայական և քերականական մոտեցումները: Այսպիսի համադրում կա նաև Տաթևացու վերլուծություններում, որտեղ «բան», «անուն», «ստորասութիւն» հասկացությունները և՛ գոյական են՝ անուն ու ենթակա, և՛ դատողություն՝ ստորոգյալ ու բայ:

«Միջին հայերենին բնորոշ բառիմաստային նոր դրսևորումները «Գիրք վաստակոց» երկում» աշխատանքում Հ. Թադևոսյանը բերում է հինգ տասնյակից ավելի (ստույգ՝ 56) բառի և վեց տասնյակից ավելի (ստույգ՝ 62) բառի նոր իմաստով կիրառություն: Ըստ հողվածի հեղինակի՝ կիլիկյան շրջանի հայկական մշակույթի, այլև գյուղատնտեսության վերելքն արձանագրող հիշյալ գիրքը, որ

² «Հայոց լեզվի պատմության հարցեր», IV, ԳԱԱ ԼԻ հրատ., Ե., 2021, 293 էջ:

թարգմանություն է «Գեոպոնիկա» գրքի արաբերեն տարբերակից, ոչ միայն արժեքավոր է իբրև միջնադարյան մատենագրության նմուշ, այլև անգնահատելի սկզբնաղբյուր է միջին հայերենի ուսումնասիրության համար:

Նոր իմաստով բառերը ներկայացվում են երեք խմբով, պայմանավորված՝ ա) խոսքիմասային տեղաշարժերով (10 բառ)՝ հատկանիշ-առարկա առնչության մեջ, բ) իմաստի ընդլայնմամբ (47 բառ), գ) նեղացմամբ (հիմնականում տերմիններ՝ 5 բառ): Դրանցից մեկուկես տասնյակը, գործուն լինելով միջին հայերենում, նաև բարբառներում, կենսունակ են նաև ժամանակակից հայերենի բառապաշարում:

Աշխատանքի վերջում տրվում է բառացանկ, որից 18 նոր իմաստով (իմաստի ընդլայնմամբ) բառեր վկայված չեն «Միջին հայերենի բառարան»-ում, թեև դրանցից 7-ը կա Աճառյանի «Արմատական բառարան»-ում, ավելին՝ 2-ը՝ նաև «Նոր հայկագնեան բառարան»-ում. «Հայերեն բացատրական բառարան»-ում, *սիրտ* բառի «մրգի միջուկ, կորիզ», *միջավայր*-ի «բարեխառն», *որձ*-ի «պտուղ չտվող բույս» իմաստերն ունեն վերջին երկու բառարանները, այլ իմաստներ՝ *ասլասցու* «մառան», *բուրդ*. 1. «մրգի արտաքին թավշանման խավ», 2. «մրգի կեղևի և միջուկի միջև գտնվող սպիտակ խավ» և այլն, վկայված չեն բառարաններից և ոչ մեկում: «Միջին հայերենի բառարան»-ում չվկայված իմաստները հետագա կիրառությամբ աչքի չեն ընկել. միայն *մկրատ* «խաղողի որթի ծիլ» և *քշտել* «քսել» բառերը նշված իմաստներով այսօր էլ կիրառելի են հայերենի որոշ բարբառներում:

«Հայերեն ձեռագրերի՝ 13-րդ դարի հիշատակարանների բառապաշարը» աշխատանքում Վ. Խաչատրյանը նկատում է, որ ի տարբերություն այլ բնագրերի, հիշատակարանները, ներառում են մարդկային զգացումների, ապրումների, կենցաղային-ընտանեկան հարաբերությունների մանրամասներ, ուստի բնական է կենդանի խոսքին հատուկ անմիջականությունը, նման բառաշերտի առկայությունը: Ըստ այդմ՝ լայնորեն կիրառվել են հետևյալ բառերը՝

սրբասէր, սրբասնեայ, պատուական և այլն: Հակառակ դրան՝ հեղինակներն իրենց անձի մասին խոսել են պարսավանքի, մեղադրանքի արտահայտություններով՝ մեծ մասամբ ելնելով ընդօրինակված ձեռագրերում թույլ տրված վրիպումներից, գրի խոշորության և գանազան այլ հանգամանքներից, հայցելով Աստծու ողորմությունն ու օրհնությունը, խնդրելով, որ ընթերցողները աղոթքներում հիշեն նաև իրենց. օր.՝ *տրուպ, անարժան, անպիտան, նուաստ, ախմար, մեղապարտ, սուտանուն, փանաք, փցուն* և այլն. *աղոթք* բառն ունի հետևյալ որոշիչները՝ *մաքրափայլ, սրբափայլ, սրբամատոյց, սրբամաքուր, երկնաթռիչ, երկնաբացիկ* և այլն:

Առանձնացվել են նաև բարբառային բառեր, որոնք ըստ ծագման երեք խմբի են՝ բնիկ հայերենյան, անհայտ ծագման և օտարամուտ:

Բացի բուն բարբառային բառերից՝ կիրառվել են գրաբարյան հնչյունական և բառակազմական կանոններից շեղվող բառեր, որոնք գործածված են նաև միջին հայերենով գրված այլ երկերում:

Ըստ հեղինակի ուսումնասիրության արդյունքների՝ 13-րդ դ. հիշատակարաններում գործածված շուրջ 600 բառ և բառատարբերակ վկայված չէ «Նոր հայկազյան բառարան»-ում, թեև դրանց մի մասը կա գրաբարի այլ բառարաններում շուրջ 400 բառ (բառային տարբերակ) չի արձանագրվել որևէ բառարանում. ենթադրվում է, որ դրանք մեծ մասամբ կազմվել են հիշատակարանի գրության ընթացքում. օր.՝ *երկնամուտ, երկնահլու, կուրաբաց, համակալոյս, տիրապատում, լուսահռչակ, սրբերամ, մաքրաբնակ, յոզնապարտ, սնապարտ, փցնամիտ, պիտակագործ* և այլն:

Առանձին քննվել և ըստ իմաստիդասակարգվել են օտար ծագման այն բառերը, որոնք այդպիսին են հայերենի պատմական զարգացման բոլոր փուլերում. մի շարք բառերի դեպքում կատարվել է բառի ստուգաբանման և կազմության վերլուծություն: Հիշատակարանների բառապաշարում նման բառեն անդրադառնալը կարևոր է հայ պատմական բառագիտության և բառարանագրության համար:

Տ. Սիրունյանը «Քոնայի միարարական կենտրոնում գրված երկերի բառապաշարը. նորաբանություններ և օտարաբանություններ» աշխատանքում քննել Պետրոս Արագոնացու, Ջիլպերտոս Պոռետացու, Բարդուղիմեոս Մարաղացու, Հովհաննես Քոնեցու Թովմա Աքվինացու տարբեր ծավալի և բնույթի երկերի լեզուն. Թովմա Աքվինացու «Summa Theologiae» աշխատությունը, օրինակ, ընդգրկում է մի քանի տասնյակից ավելի «խնդիրներ» (հարցադրումներ՝ «quaestiones»), որոնց մի մասն է միայն Մ. Ուդենրիյնի կողմից ամփոփված, այդպես նաև Ալբերտ Մեծի «Համառոտ հաւաքումն ճշմարտութեան», (= «Compendium theologiae veritatis») աշխատությունը, Ջիլբերտոս Պոռետացու «Գիրք վեցից սկզբանց» երկը:

Հեղինակն առանձնացնում է գրաբարի բառարաններում չվկայված բառերը, որոշում նորաբանությունների բնագրային կադապարները, բառակազմության գործուն միջոցները, շեղումները լատիներենի կադապարներից, դրանց առանձնահատկությունները: Բառարանի սկզբունքով կազմել է նորաբանությունների և օտարաբանությունների բառացանկ՝ բաղկացած մոտ 500 բառահոդվածից (յուրաքանչյուր բառի դիմաց տրված է նրա բացատրությունը, ապա բերվում են մատենագրական տվյալներ, թարգմանական երկ լինելու դեպքում, զուգահեռ նշվում են նախօրինակ բնագրի (լատիներեն) օրինակները):

Գրախոսվող ժողովածուում տեղ գտած աշխատանքները հեղինակների տարիների գիտական գործունեության մի արդյունք են, ընդհանուր առմամբ կարևոր են հայոց լեզվի արդի վիճակի և պատմության ուսումնասիրության բնագավառում:

Բանասիր. գիտ. թեկնածու Վ. Մ. Խաչատրյան

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տեղեկագիրք. 2020. ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., Ե., 2021, 228 էջ:

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը այս գրքով գիտական հասարակայնությանը ներկայանում է մի նոր նախաձեռնությամբ՝ հրապարակել իր գիտահետազոտական գործունեության և գիտական աշխատակազմի մեկ տարվա հրապարակումների մասին ամփոփ տեղեկություններ, և այդ գործը, ինչպես ցույց է տալիս հիշյալ հրապարակումը, կատարված է բավականին հաջողությամբ, որ հավանաբար լավ սկիզբ է հետագայի համար:

«Տեղեկագիրքը» բացվում է, ինչպես ընդունված է, «Երկու խոսք»-ով, որում սեղմ նշվում են նման գիրք հրապարակելու կարևորության մասին. նախ՝ «Իր գոյության շուրջ ութ տասնամյակների ընթացքում լեզվի ինստիտուտը գիտական արժեքավոր բազում հետազոտություններով համալրել է հայերենագիտությունը, կիրառել լեզվաբանական հետազոտության նորագույն մեթոդներ, էական դեր ունեցել հայերենագիտության և ընդհանուր լեզվաբանության գիտակարգերի ուսումնասիրության մեջ, եղել հայերենագետներին և հայերենագիտական կենտրոնները համախմբող, լեզվի ուսումնասիրության խնդիրները համակարգող հաստատություն» (էջ 5): Այնուհետև՝ այն հետայսու լույս է տեսնելու պարբերաբար, հատորներով, և գտնում են, որ այդ «հատորների բովանդակային և մատենագիտական տեղեկությունները կարևոր աղբյուր կձառայեն ապագայում ինստիտուտի աշխատանքներին անդրադարձողների համար» (էջ 5-6): Երկրորդ մեջբերման իմաստն այն է, որ ապագայում թե՛ ինստիտուտի և թե՛ նրա գիտական գործունեությունն ծավալված մասնագետների հետազոտական ներդրումների պատմության վերաբերյալ կարևոր աղբյուր են լինելու այդ և հետագայում ևս երևան եկող նմանատիպ գրքերը:

Գիրքն ընդգրկում է երկու մաս, որոնք վերնագրված են՝ ինստիտուտի «գիտական գործունեության հիմնական արդյունքները» (էջ 7-23), այդ «արդյունքները՝ ըստ ուղղությունների» (էջ 24-161): Առաջինում («2020 թ. գիտական գործունեության հիմնական արդյունքները») ամփոփված են նրանք, որոնք համարվում են կարևոր, ստացվել են բազային (հիմքային) և թեմատիկ ֆինանսավորմամբ, այնուհետև արձանագրվել են արդյունքներ կիրառական աշխատանքների մեջ (էջ 7-13):

Նույն մասում ներկայացվում է ինստիտուտի «հրապարակումների ցանկը», դրանք մենագրություններ են, առանձին ժողովածուներ, բառարաններ, թվով՝ 7, ժողովածուներ և էլեկտրոնային հրապարակումներ՝ 2, այլ հրապարակում՝ 1, գիտական հոդվածներ՝ 87, ընդամենը՝ 97 միավոր: Պատկերավոր ասած՝ պակաս կամ վատ հունձք չես համարի, այլ կարելի է հավաստել, որ դա բավարար աշխատանքի վկայություն է, այն էլ նման պայմաններում:

Երկրորդ մասում մատենագիտական-տեղեկատվական մանրամասն նյութ է բերվում արդի հայերենագիտության բնագավառում. կատարվում են աշխատանքներ արդի հայերենի արևելահայ և արևմտահայ տարբերակների ուսումնասիրման և կանոնարկման, ընդհանուր և համեմատական լեզվաբանության առանձին խնդիրների, կիրառական լեզվաբանության, հայերենի բարբառների, հայոց լեզվի պատմության տարբեր հարցերի վերաբերյալ:

Հետաքրքիր է հրապարակումների հեղինակների ընդգրկվածության վերաբերյալ վիճակագրությունը. կան հոդվածներ, որոնք մեկական են՝ հեղինակի հաշվով, կան նաև 2-3 հոդվածով ներկայացողներ, քիչ չեն 5 և ավելի հոդված լույս ընծայած հեղինակները. հաշվարկը ճիշտ պատկերացում է տալիս ինստիտուտի գիտական աշխատանքի տեմպերի առանձնակիության մասին, մանավանդ վերը նշված բնագավառների առումով, էլ չենք խոսում հեղինակների գիտական-ստեղծագործական ընդգրկվածության մասին:

Մեկ ուրիշ կարևոր առանձնահատկություն ևս՝ գիտական թեմաների նույնությունը կամ տարբերությունը (կոորդինացիան). որը

հիմնականում բացատրվում է մասնագիտության ընդգրկման («դիսպլոմ») հանգամանքով. խրախուսելի է, թե հակառակը, սակայն նկատելի է, որ շատ դեպքերում տվյալ հեղինակի այս կամ այն հոդվածը նույն բնագավառին, նույնիսկ միևնույն նյութին, այսինքն՝ նեղ մասնագիտացմանն է վերաբերում:

Դա եթե տվյալ թեմայի խորացման (ծավալի) առումով թեկուզև արդարանալի է, սակայն մասնագիտական զբաղվածության տեսանկյունից այնքան էլ, խրախուսելի չէ, որովհետև արդի գիտության պայմաններում հայերենի շատ խնդիրներ այդպես էլ դուրս են մնում հետազոտական (գիտական) շրջանակներից, օր.՝ լեզվաբանական բնագրագիտություն (տեքստաբանություն) և աղբյուրագիտություն, նախագրային հայերենի համեմատական ուսումնասիրություն, հայ բարբառների՝ հին գրավոր աղբյուրներում տեղ գտած տվյալների նոր հետազոտություն, այնուհետև հայերենին առնչված լեզուների և հայերենի ունեցած հնագույն շփումների նորովի քննություն և այլն. նույնիսկ կարիք կա այդ բնագավառներում երիտասարդ մասնագետների պատրաստման՝ մեզանում և արտերկրում, որովհետև այդ բնագավառները, մեր համոզմամբ, հայերենի հին և հետագա պատմության անկապտելի մասն են:

Այլ է ինստիտուտի բաժինների մասնագիտական ուղղվածությունը, բոլորովին այլ՝ տվյալ մասնագիտացման մեջ թեմատիկ նույնականությունը:

Հայերենի նման ժամանակային, տարածքային և գործառական լայն ընդգրկում ունեցող ամեն մի լեզու պիտի ուսումնասիրության առարկա լինի ըստ ամենայնի. այդպես եղել է ոչ վաղ անցյալում, ինչ-որ չափով նաև հետագայում, իսկ ներկայումս այդ ընդգրկումը, մի տեսակ, ավելի է կոնկրետանում:

«Տեղեկագրքի» երկրորդ մասում («2020 թ. գիտական գործունեության հիմնական սրդյունքները՝ ըստ ուղղությունների») բերվում են հրապարակումների ամփոփագրերը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն, ընդ սմին՝ համակարգված, ըստ ինստիտուտի առանձին բաժինների: Նման դրվածքը խիստ գնահատելի է, քանի որ ապա-

հովում է գիտական արտադրանքի ավելի լայն շրջանակի ուշադրությանը հավակնելը:

Առավել մեծ տեղեկություն է պարունակում գրքի այս մասը: Այստեղ բերում ենք համառոտ տվյալներ այդ մասի վերաբերյալ (նկատի ունենալ հրապարակումների և բաժնի աշխատակիցների քանակի բալանսը):

1) Արդի արևելահայերենի և արևմտահայերենի, այլև բառագիտության և բառարանագրության բաժիններում գրանցվել են հետևյալ արդյունքները. մենագրություն՝ 1, բառարան՝ 1, հոդվածներ՝ 18, այնուհետև՝ դրվում են այդ աշխատանքների հայերեն ամփոփագրերը: Ընդ որում նկատել ենք, որ վերջիններս ավելին են, քան որ բերվում են արդյունքների (վերոհիշյալ) ցանկում, դրանք ներկայացվում են համառոտ, որ թուլացնում է սակայն բովանդակության ընկալման հնարավորությունը:

2) Ընդհանուր և համեմատական լեզվաբանության, այլև կիրառական լեզվաբանության բաժիններում նշվում են հետևյալ արդյունքները. մենագրություն՝ 1, բառարան՝ 1, հոդվածներ, զեկուցումներ՝ 21, այնուհետև՝ դրվում են այդ աշխատանքների հայերեն ամփոփագրերը: Ընդ որում ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժինն ունի ընդհանուր թվի (24) մեծ մասը՝ 19 հրապարակում:

3) Հայ բարբառների ուսումնասիրության բաժնում նշվում են հետևյալ արդյունքները. մենագրություն՝ 1, հոդվածներ՝ 27, այնուհետև՝ դրվում են այդ աշխատանքների հայերեն ամփոփագրերը:

4) Հայոց լեզվի պատմության բաժնում նշվում են հետևյալ արդյունքները. գրաբար երկի լեզվի փոխադրություն՝ 1, հոդվածներ՝ 12, այնուհետև՝ դրվում են այդ աշխատանքների հայերեն ամփոփագրերը:

«Տեղեկագրքի» հետագա էջերում տեղ է գտել վերը նշված հրապարակումների հայերեն ամփոփումների ճիշտ հակադարձը՝ անգլերեն (էջ 162-193) և ռուսերեն (էջ 194-226):

Նման գիրք դնել հրապարակում նշանակում է գիտական միջավայրին ներկայացնել ակադեմիական մի յուրօրինակ հաստատության ամենօրյա անդուլ աշխատանքի մասին. կարծում ենք՝ սույն գրքի կազմողները իրավացի են, երբ նշում են այդ մասին:

Այս ամենով հանդերձ, հարկ եմ համարում նշել մի կարևոր նկատառում, որ վերաբերում է ներկայացվող աշխատանքների (մենագրություն, ժողովածու, հոդված և այլն) ամփոփումներին՝ դրանց դարձնել ավելի մեծ ուշադրություն, քան որ կա, այն է՝ ծավալը մեծացնել թեկուզ մեկ երրորդով, որովհետև միշտ չէ, որ այդ ծավալով ամփոփումը բավարար տեղեկություն է պարունակում բուն աշխատանքի մասին, ասվածի հետ կապված նաև՝ ավելի բովանդակային դարձնել ամփոփումները, այսինքն՝ դրանք վերաբերեն աշխատանքի նորությանը, խնդրի լուծմանը:

Նոր բառեր, Ջ պրակ, Ե, ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, 220 էջ:

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բառագիտության և բառարանագրության բաժինը, որն ունի ընդամենը մի քանի գիտաշխատակից, ինստիտուտի մյուս՝ ավելի մեծ թվակազմ ունեցող բաժինների համեմատությամբ արձանագրում է ավելի մեծ արդյունք, մանավանդ նորի և նորակազմի ի հայտ բերման, ճշգրտման և ներկայացման առումով: Իմ այս վերջին որակումները վերաբերում են հայերենի բառապաշարի նոր բառերին: Այդ բաժինը պիտի համալրվի նոր մասնագետներով, այդ բաժնին պիտի դարձվի մյուսներից ոչ պակաս, եթե ոչ ավելի մեծ ուշադրություն, այնտեղ օրինակելի, ինքնուրույն գործ ու աշխատանք է կատարվում. ասածս նախաբան չէ, այլ «ադանկ» է:

Բառարանի «օգտագործված աղբյուրներ» են վերջին երկու տասնամյակում լույս տեսած ինքնուրույն և թարգմանական երկերը (բացառությամբ մեկի՝ Իրվինգ Սթոունի «Կյանքի ծարավը» երկի, որ տպագրվել է 1970 թ., ժամանակին տեղ չի գտել բացատրական բառարաններում)՝ վեցուկես տասնյակ գրքեր, ամսագրերի, հանդեսների, լրագրերի նյութեր և այլն:

Բառարանագրությունը «համբերատար» աշխատանքի ոլորտ է, և դա նկատում ենք նաև հիշյալ վերտառությամբ բառարանի այս պրակի հեղինակների (պրոֆ. Ս. Ա. Գալստյանի, բ. գ. թ. Ա. Ս. Գալստյանի, բ. գ. թ. Ֆ. Ա. Հակոբյանի, վաստակաշատ գիտաշխատող Գ. Կ. Հովսեփյանի, երիտասարդ գիտաշխատող Ն. Մ. Սարգսյանի) արածի մեջ:

Ամբողջ գործի գլուխ է կանգնած բաժնի վարիչ Ա. Ս. Գալստյանը, որ այս դեպքում ունի ներդրում՝ թե՛ կազմակերպման (կոորդինացիա, խորհրդատվություն, խմբագրում և այլն) և թե՛ իր բաժին նյութերի հայթայթման ու կազմման առումով, որ վեր է ամեն մի գիտական դրվատանքից:

Ժամանակակից հայերենի բառապաշարի բառարանային այս արձանագրումը ոչ միայն մեր օրերի, այլև հետագա ժամանակների համար է, գրավոր մշակույթի վավերացում՝ ամբարումով:

Գրքի անոտացիայում մի հստակ ձևակերպում կա՝ «բառեր, որոնք վկայված չեն արդի հայերենի բացատրական և նորաբանությունների բառարաններում» (շուրջ երկու տասնյակ), սա վստահություն է բերում, եթե արդի հայերենի բառապաշարի ուսումնասիրմանը ձեռնամուխ եղողն ուզենա անդրադառնալ մեր լեզվի բառային ֆոնդի պատմությանը, լեզվի բառապաշարի ոճական և այլ կարգի շերտագրական քննությանը:

Գրքի «Երկու խոսք»-ում գրում են, որ այն «պարունակում է 2000 բառամիավոր, որոնք գրանցված չեն պրակի վերջին էջում թվարկված բառարաններում: Գլխաբառից հետո նշվում են խոսքիմասային պատկանելությունը, բառի բացատրությունը, բնագրային օրինակը, աղբյուրը: Տրվում են բառագիտական և ոճական նշումներ: Բառի բացատրությունը տրվում է ըստ տվյալ տեքստում ունեցած նշանակության»: Մենք բարձր ենք գնահատում նման աշխատանքը, որովհետև այն նպաստ է մեր բազմադարյան բառարանագրության պատմությանը, հայոց լեզվի, կոնկրետ՝ նրա բառապաշարի ուսումնասիրմանը: Այդ գիրքը և նրա հեղինակների անունը ժամանակի ընթացքի մեջ են:

Այս ամենով հանդերձ՝ ունենք մի քանի նկատառում, որ հարկ ենք համարում նշել՝ թեկուզ իբրև ընդհանուր մտածություն:

Բառահոդվածների բացատրությունները հակիրճ են. մտածում են, որ կարելի էր չսահմանափակվել բառի («բառամիավորի») սեղմ բացատրությամբ, այլ ըստ հնարավորին ընդարձակել և իրադրորեն մեծացնել բացատրությունը: Այնուհետև, բացատրությունների մեջ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել բառի անհատական, նաև գործառական-ոճական կողմին, որովհետև բառերի, թերևս, հիմնական մասը գրավոր աղբյուրներում հանդես է եկել ամենից առաջ խոսքային նման հիմքերի բերումով, և դա կարևոր է առհասարակ ամեն մի բառի իմաստաբանության համար:

Մնում է անպայման նշել, որ գրքի տեխնիկական կազմակերպումը անթերի է, նույնիսկ՝ օրինակելի. չենք գտնում սխալներ, վրիպումներ, բացթողումներ և այլն: Հրատարակի վրա է մի շնորհակալ գործ՝ հայ լեզվաբանության անդաստանում:

«Ջահուկյանական ընթերցումներ», 1 (16), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, 142 էջ:

Լույս է տեսել անվանի լեզվաբան, ակադ. Գ. Բ. Ջահուկյանի հիշատակին նվիրված հերթական ժողովածուն, որում տեղ են գտել շուրջ մեկուկես տասնյակ աշխատանքներ՝ հոդվածներ, հաղորդումներ և քննարկում բաժինների մեջ:

Բովանդակությամբ դրանք տարբեր բնույթի են, հեղինակներ են հիմնականում լեզվի ինստիտուտի, մասամբ այլ հաստատությունների լեզվաբաններ, հետազոտողներ: Մասնագիտական առումով սույն ժողովածուն նույնպես թողնում է լավ տպավորություն:

Ընդգրկման առումով մեծ է «Հոդվածներ» բաժինը, որում զետեղված են հայերենի (ընդ սմին՝ միջին շրջանի, նաև բարբառների) բառապաշարի (մեկ դեպքում՝ տեղանվան) նորմավորման, ստուգաբանության, քերականական կառուցվածքի, այլև հարակից տարբեր հարցերի վերաբերող զեկուցումներ՝ իբրև հոդվածներ: Դրանք այստեղ ներկայացնում ենք հետևյալ պայմանական խմբավորմամբ:

1) Բարբառային քննության առարկա են եղել Ղարաբաղի (Արցախի) բարբառի բայական հնաբանություններին (հեղ.՝ Լ. Շ. Հովհաննիսյան), Համշենի բարբառի իմաստափոխությանը (հեղ.՝ Ն. Խաչատրյան), բարբառային հատկանիշների խմբավորմանը (հեղ.՝ Վ. Կատվայան), Ճահուկ-Վայք միջբարբառում միջին հայերենի իրողություններին (հեղ.՝ Ա. Վարդանյան) վերաբերող հարցերը: Այս հոդվածներում բավականին նոր նյութ կա, որ վերլուծության է առնված գիտական պատշաճ մակարդակով:

2) Լեզվի պատմության տարբեր հարցերի են անդրադառնում Բագայառիճ տեղանվան (հեղ.՝ Լ. Շ. Հովհաննիսյան), միջին հայերենի միակազմ նախադասության մեջ մտնող մի կապակցության (*անուն+միադիմի բայածն- անորոշ դերբայ*) քննությանը (հեղ.՝ Գ. Խաչատրյան) վերաբերյալ աշխատանքներում: Այստեղ հարցադրումների կոնկրետությունը ավելի հասկանալի է դարձնում ասվածը:

3) Ստուգաբանական են հայ. *հարկ*- արմատի (հեղ.՝ Վ. Գ. Համբարձումյան), հայ. *կարպերտ* (< *կարպետ*) բառի (հեղ.՝ Ն. Հմայակյան) վերաբերյալ հոդվածները: *Կարպետ* բառի ծագման վերաբերյալ ասվածը, ինչպես ունեցել ենք հնարավորություն այդ մասին արտահայտվելու, ավելի շատ ենթադրական է, ուստի միայն որպես այդպիսին ընդունելի:

4) Առանձին են արդի գրական լեզվում *տնօրենություն* // *տնօրինություն* բառերի գործածությանը վերաբերող հոդվածը (հեղ.՝ Վ. Ներսիսյան) և *շուն* բաղադրիչով դարձվածային միավորների քննությանը նվիրված հոդվածը (հեղ.՝ Ն. Թորոսյան): Ի դեպ՝ նկատենք, որ ներկայումս բացատրական նոր բառարաններից եկող (իմաստային կոնտամինացիայի արդյունքում) շփոթի տեղիք է տալիս դրանց գործածությունը. *տնօրեն* և *տնօրինել* բառակազմական (նախագաղափար) հիմքերով պատմականորեն առաջ եկած տարբեր *տնօրենություն* և *տնօրինություն* կազմությունները շարունակում են շփոթել, որը տարակուսելի է:

Գրքի «Հաղորդումներ» և «Քննարկում» բաժիններում ներառված է ընդամենը երեք աշխատանք: Առաջինում քննության են առնվում հայերենի ձևային նկարագրության խնդիրները (հեղ.՝ Ֆ. Հակոբյան) և Վրաստանի Մառնեուլի շրջանի հայաբնակ գյուղերի լեզվական վիճակը (հեղ.՝ Տ. Միքայելյան), իսկ երկրորդում փորձ է արվում տալ հայերենում «շառափ», «ցողել», «ծորել» իմաստներով բառերի ստուգաբանությունը (հեղ.՝ Հ. Ջաքարյան):

Ժողովածուի մեջ, ինչպես նկատում ենք, զետեղված հոդվածները, դատելով նույնիսկ դրանց հեղինակների գիտական վաստակից, նյութի վերաբերյալ հարցադրումներից, դրանց տրված լուծումներից, մասնավորապես գիտական ներդրման տեսանկյունից, տարբեր են: Այս առումով մենք առաջարկում ենք, այսպես ասած, գիտական բարձր նշաձող չունեցողների (ասպիրանտներ, գիտական աստիճանի հայցողներ) աշխատանքները տպագրել այլ ձևաչափով, քան ընդգրկել մի այնպիսի հեղինակավոր ժողովածուի մեջ, որ է «Ջահուկյանական ընթերցումներ» ժողովածուն. սա գիտական բարձր վարկանիշի հարց է, որին պետք է դարձնել ուշադրություն:

Մեր այս ամփոփ գրախոսության մեջ, անշուշտ, հնարավոր չէ անդրադառնալ (մանավանդ՝ առանձին-առանձին) հիշյալ հոդվածների գիտական գնահատությանը, սակայն հնարավոր է հատուկ նշել, որ դրանց մեծ մասում տեղ են գտել կարևոր հարցերի քննարկումներ և, մեր կարծիքով, ճիշտ լուծումներ, որոնք հանդիսանում են ներդրում իրենց բնագավառների առաջընթացի մեջ:

Այնուամենայնիվ, հիշենք, որ ամեն մի հոդված (և ոչ միայն) ուշագրավ է ամենից առաջ իր գիտական դրական, նպաստաբեր նորությամբ (իմպուլսով), իսկ հայտնի, տարբեր առիթներով գրվածին վերստին անդրադառնալը միշտ չէ, որ գրավիչ է, և անպայման հիշենք, որ մասնագիտական առումով ընթերցողը տվյալ հոդվածի մեջ կնկատի նորության չափը, եթե այն կա:

Անհատական աշխատանքներից բացի՝ մենք կարևոր ենք համարում նաև գիտահետազոտական աշխատանքի կոլեկտիվ ձևը, ընդ որում ոչ միայն այս կամ այն հաստատության ներսում

(տվյալ դեպքում՝ լեզվի ինստիտուտում), այլն տարբեր հաստատությունների միջև, որն այս դեպքում, ինչպես երևում է տպագրվածներից, բացակայում է:

Միանգամայն գնահատելի է նաև այն, որ լույս տեսնող հոդվածներն ունեն ամփոփումներ՝ օտար լեզուներով, որ պարտադիր պայման է տվյալ լեզվով գրված հոդվածին, անշուշտ, լայն ճանաչում հաղորդելու համար:

Հերթական այս ժողովածուի հրատարակման տեխնիկական կողմը տարբերվում է նախորդ պրակներից՝ միանգամայն դրական, սակայն խմբագրական կազմի ուշադրությունը հրավիրում ենք խմբագրվող նյութի գիտական ապարատի միօրինակության պահպանման վրա (մեջբերումների, հղումների ճշտություն, օգտագործվող գրականության տվյալների անսխալ նշանակում և այլն):

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում լավ ավանդույթ է «Ջահուկյանական ընթերցումներ» վերտառությամբ գիտաժողովի անցկացումը, այնուհետև զեկուցումների տպագիր հրապարակումը, և դա գիտական լայն միջավայրի, առանձին մասնագետների բուն գործունեության վերաբերյալ մի հայտ է, ծառայություն՝ հայրենի գիտությանը:

Վ. Գ. Հ.

29/07/2021

«Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր» ծրագրի շրջանակում ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի հետազոտողների խումբը (Վ. Կատվայան, Հ. Խաչատրյան, Ժ. Միքայելյան և Գ. Մկրտչյան) ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ 2013-2015 թթ. բարբառագիտական հետազոտություններ է իրականացրել Գեղարքունիքի մարզում: Արդյունքները Վ. Կատվայանի կողմից մշակվել, համակարգվել և 2018 թ. հրատարակվել են «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր» շարքի 1-ին Գեղարքունիքի մարզին նվիրված գրքում (տե՛ս Վ. Կատվայան, Ե., 2018, էջ 402): Բարբառագետները հանդես են եկել այդ թեմային առնչվող գիտական հոդվածներով և զեկուցումներով, որոնք ամփոփվել են «Հայաստանի Հանրապե-

տության բարբառային համապատկեր. Նյութեր. պրակ Ա. Գեղարքունիք» գրքում:

Պրակը ամբողջացնում են Գեղարքունիքի մարզի լեզվավիճակի նկարագրությանը և ուսումնասիրությանը նվիրված նյութերը:

Վ. Կատվայանի, Հ. Խաչատրյանի և Գ. Մկրտչյանի՝ տարբեր հանդեսներում և ժողովածուներում ավելի վաղ հրատարակված հոդվածներից բացի այն պարունակում է նաև Գեղարքունիքի մարզի բնակավայրերի ցանկը՝ յուրաքանչյուրում գործածվող լեզվատարբերակի նշումով:

Գիրքը կարող է օգտակար լինել բարբառագիտության, լեզվի պատմության, բանահյուսության, ազգագրության մասնագետներին, ժողովրդագրության հարցերով զբաղվողներին:

*
* *

08/10/2021

Օրերս ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն Վ.Կատվալյանը և Իտալիայի Հանրապետության Միլանի պետական համալսարանի ռեկտոր Էլիո Ֆրանձինը կնքեցին համագործակցության հուշագիր՝ նպատակ ունենալով երկու հաստատությունների միջև հաստատել և զարգացնել գիտական կապեր, աջակցել կողմերի համար ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հիմնարար գիտական հետազոտությունների անցկացմանը:

Ըստ կնքված հուշագրի՝ կողմերը նախատեսում են ընդհանուր լեզվաբանության, լեզվի պատմության, բարբառագիտության, հայերենագիտության և այլ ոլորտներում համատեղ գիտահետազոտական նախագծերի մշակում և իրականացում, հայ-իտալական լեզվամշակութային կապերին առնչվող ծրագրերի, համատեղ գիտական թեմա-

ների, դրամաշնորհային ծրագրերի իրականացում:

Նախատեսվում է նաև հայ-իտալական գիտական և կրթական համատեղ միջոցառումների (սեմինարներ, գիտաժողովներ, քննարկումներ, ամառային դպրոցներ և այլն) կազմակերպում, նաև՝ տեսակապի միջոցով: Նշվել են նաև գործակցության այլ հնարավորություններ:

*
* *

21/10/2021

Լույս է տեսել «ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի Տեղեկագիրք. 2020» (Ե., 2021, ԼԻ հրատ., 228 էջ) գիրքը:

Ինչպես հավաստում են կազմողները, լեզվի ինստիտուտը գիտական հանրությանը, կրթական ոլորտի աշխատողներին և սովորողներին, առհասարակ՝ հաստատության գիտահետազոտական արդյունքներով հետաքրքրվողներին իր հրապարակած գիտական աշխատանքների վերաբերյալ ամբողջական տեղեկություններ

տրամադրելու նպատակով սկսում է «Տեղեկագրքի» ամենամյա հրապարակում:

Շարքի 1-ին հատորը ընդհանուր տեղեկություններ է պարունակում 2020 թ. ինստիտուտի ձեռք բերած կարևորագույն, բազային և թեմատիկ ֆինանսավորմամբ ստացված, այլև կիրառական աշխատանքների արդյունքների վերաբերյալ:

Ներկայացվում է 2020 թ. հրապարակումների ցանկը: Ըստ գիտահետազոտական աշխատանքների ուղղությունների՝ տրվում են տարվա ընթացքում հրապարակված գրքերի և հոդվածների համառոտ ամփոփագրերը նախ հայերեն, ապա անգլերեն և ռուսերեն:

*

* *

25/10/2021

Երևանից դեպի Ապարան ընթացող ավտոճանապարհին հարակից վայրում, ինչպես հայտնի է, վերջին տարիներին ստեղծվել է մի յուրահատուկ գեղատեսիլ հուշակոթող՝ Մեսրոպյան գրերի պուրակ,

այլև կանգնեցվել է քրիստոնեական հավատքի նշան՝ Սուրբ խաչ:

Եվ բոլորովին վերջերս հիշյալ յուրօրինակ տեղերի հարևանությամբ գտնվող Հավերժության պուրակում կազմակերպվել էր ծառատունկ: Ծառատունկին մասնակցում էին ՀՀ գիտության, կրթության, սպորտի և մշակույթի ոլորտի ճանաչված բազում ներկայացուցիչներ:

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի մի խումբ աշխատակիցներ ևս ունեցան իրենց մասնակցությունը այդ միջոցառմանը: Նրանք Հավերժության պուրակում ծառեր տնկեցին՝ ի հիշատակ հայ լեզվաբանության անվանի ներկայացուցչի՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հ. Աճառյանի:

Ինչպես նշեց ինստիտուտի տնօրեն Վ. Կատվայանը, երեվոյթը խորհրդանշական է և կարևոր է նախ՝ այն առումով, որ հարգանքի տուրք ենք մատուցում մեր մեծերին, ցանկանում ենք, որ ծառն ամուր արմատներ ձգի հայրենի հո-

ղում և հավերժ լինի, ինչպես հավերժ է Հ. Աճառյանի գիտական ժառանգությունը: Մյուս կողմից՝ ծառատունկը Հավերժության պուրակում բնապահպանական և գեղագիտական նշանակություն ունի. տարածքը ընտրված և ձևավորված է ճաշակով, և այգու հատակագիծն ունի հավերժության նշանի տեսք:

Լեզվի ինստիտուտն իր շնորհակալությունն է հայտնում նախագիծն իրականացնողներին և միջոցառման կազմակերպիչներին:

*

* *

27/10/2021

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը սկսեց առցանց հանդիպումների շարքը՝ մանկավարժներին, լրագրողներին և ընդհանրապես լեզվի, մասնավորապես հայերենի հարցերով հետաքրքրվողներին մասնագիտական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Առաջին հանդիպումը տեղի ունեցավ ս. թ. հոկտեմբերի 26-ին: Մասնակցում էին լեզվի

ինստիտուտի առաջատար մասնագետներ, որոնք սիրով պատասխանեցին ընթացքում հնչած հարցերին:

Իրենց հուզող լեզվական հարցերի պատասխանները ստացան հանդիպման մասնակից ուսանողները և հայոց լեզվի և հայ գրականության մանկավարժները:

Քննարկվեցին լեզվի տարբեր մակարդակներին առնչվող հարցեր, ինչպես նաև այս կամ այն չափով իրենց լուծումն ստացան լեզվական մշակույթին, հայոց լեզվի բանավոր խոսքին վերաբերող տարբեր բնույթի խնդիրներ:

*

* *

08/11/2021

2006 թ. ի վեր ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը սկսել է կազմակերպել «Ջահուկյանական ընթերցումներ» խորագրով ամենամյա գիտաժողովներ, որոնց նյութերը հրապարակվել են տարբեր տարիներին լույս տեսած մեկուկես տասնյակ ժողովածուներում:

Ավանդական դարձած գիտաժողովի նյութերը այսուհետև հրապարակվելու են համանուն պարբերականում, որի առաջին համարը՝ 1 (16) վերտառությամբ լույս է տեսել օրերս: Այն ընդգրկում է 2021թ. գիտաժողովում իբրև զեկուցում ներկայացված նյութեր: Հանդեսի հողվածներում քրննության են առնվել ընդհանուր և համեմատական լեզվաբանության, լեզվի պատմության, բարբառագիտության, ժամանակակից հայերենի արդիական խնդիրներ, ներկայացվել են ստուգաբանական պրպտումներ (ավելի մանրամասն տե՛ս մեր այս հանդեսի «Գրքերի տեսություն» բաժնում):

*

* *

03/12/2021

Ս. թ. նոյեմբերի 29-ին ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Լեզուների ուսուցման խնդիրները համաշխարհայնացման արդի դարաշրջանում» խորագրով միջազգային

համաժողովը, որը կազմակերպվել էր ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ Ֆինանսավորմամբ ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում իրականացվող 20TTSH-063 «Հայերենի դերը և ուսուցման խնդիրները բազմալեզու միջավայրում» գիտական նախագծի շրջանակում (թեմայի ղեկավար՝ Բ. Գ. Թ., դոց. Մ. Սարգսյան):

Նկատի ունենալով օբյեկտիվ պատճառը՝ COVID-19 համավարակի տարածման հանգամանքը, համաժողովը կազմակերպվել էր առցանց ձևաչափով:

Համաժողովի մասնակիցների շրջանակը բավականին լայն էր. զեկուցողների խմբում ներգրավված էին ոչ միայն գիտական-ակադեմիական տարբեր հաստատությունների ներկայացուցիչներ, այլև հանրապետության ուսումնասիրող ուսուցիչներ և հանրակրթության կազմակերպիչներ՝ ՀՀ Երևան քաղաքի և մարզերի մի շարք դպրոցներից: Մասնակիցների «աշխարհագրությունը» ընդգրկում էր և բազմազան:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի տնօրեն, բ.գ.դ. Վ.Կատվայանը, որը, ողջունելով մասնակիցներին, մաղթեց հետաքրքիր և արդյունավետ քննարկումներ, կարևորեց նման միջոցառումների դերը հայոց լեզվի և առհասարակ լեզուների մաքրության, ինչպես նաև լեզվաքաղաքականության արդի մարտահրավերներին դիմակայելու հարցում:

Ողջույնի խոսքով հանդես եկավ համաժողովի կազմակերպիչ, բ.գ.թ., դոց. Մ.Սարգսյանը, նշեց, որ համաժողովի նպատակն է մի հարկի ներքո համախմբել ոլորտի տարբեր մասնագետներին՝ գիտակրթական հանրույթի տարբեր օղակներից, վերհանել լեզուների ուսուցման արդիական խնդիրները, համաշխարհայնացման (գլոբալացման) մարտահրավերներին դիմակայելու ուղիները և ներկայացնել հնարավոր լուծումներ:

Համաժողովի հանդիսավոր նիստի ընթացքում ելույթ

ունեցավ 20TTSH-063 նախագծի արտասահմանյան գործընկեր, Լեհաստանի Շլոնսկի համալսարանի ադյունկտ, բ.գ.թ. Գրաիր Մագակիանը, որը ներկայացրեց երկլեզվության արդիական խնդիրները, լեհական բուհերի փորձը փոխանցեց հայ գործընկերներին: Հանդիսավոր նիստը եզրափակեց բ.գ.դ., պրոֆ. Գ.Հովհաննիսյանը, որը խոսեց հայագիտության արդիական խնդիրներից մեկի՝ հայերենի՝ որպես գիտության լեզվի ուսուցման մասին:

Համաժողովը տեղի էր ունենում միաժամանակ երեք նիստով. նիստերը վարում էին հարգարժան գիտնականներ, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի վարիչ բ.գ.դ., պրոֆ. Վ.Գ. Համբարձումյանը, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.դ. Ա. Վ. Գալստյանը, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի առաջա-

տար գիտաշխատող Բ.Գ.Դ.,
դոց. Ն. Ն. Մեսրոպյանը:

Համաժողովին մասնակցում էին շուրջ չորս տասնյակ գիտաշխատողներ՝ բուհերի հայերենագիտական, լեզվաբանական, մանկավարժական ամբիոնների վարիչներ և աշխատակիցներ, հայագիտական կենտրոնների ներկայացուցիչներ, ասպիրանտներ, երիտասարդ հետազոտողներ և վաստակաշատ ուսուցիչներ՝ Հայաստանի, Արցախի, Լեհաստանի գիտակրթական տարբեր հաստատություններից (ՀՀ ԳԱԱ, ԵՊՀ, ՀՊՄՀ, Մաշտոցի անվան Մատենադարան, ԵՊՀ ԻՄ, ԵՀՀ, ՎՊՀ, ՀՌՀ, ԵԲՊՀ, ՀՀ ՊԿԱ, ՇՏՀ, «Տաթև» գիտակրթական կենտրոն, Ավ. Իսահակյանի անվան տուն-թանգարան, Ա. Ֆրանսի անվան ֆրանսիական կրթահամալիր, Երևանի, Լոռու, Տավուշի, Արարատի, Արմավիրի մարզերի դպրոցներ):

Զեկուցումներում արծարծվեցին համաշխարհայնացման արդի դարաշրջանում լեզվի ուսուցմանն առնչվող զանա-

զան հարցեր, մասնավորապես անդրադարձ եղավ երկլեզվությանը և բազմալեզվությանը, մայրենի, օտար, երկրորդ լեզուների ուսուցմանը, հին լեզուների ուսուցմանն ու իմացությանը, լեզվաքաղաքականությանը, լեզվի ուսուցման տեխնոլոգիական հնարավորություններին, այսպես կոչված՝ հիբրիդ ուսուցմանը, լեզվի ուսուցման նոր մեթոդներին և միջգիտակարգային եղանակներին:

Արդյունավետ էր հատկապես համաժողովի ամփոփիչ նիստը, որում ծավալվեց բուռն քննարկում, եղան հետաքրքիր ելույթներ, դիտարկումներ, արվեցին նաև առաջարկություններ:

Ամփոփելով համաժողովի արդյունքները՝ Մ. Սարգսյանը նշեց. «Ծառայելով հասարակության լայն շրջանակներին՝ համաժողովի արդյունքները կարող են օգտակար լինել Հայաստանում և արտերկրում ապրող մեր հայրենակիցներին, որոնք կարևորում են հայերենի դերը և ուսուցումը օտարախոս միջավայրում՝ հա-

յապահպանության և հայերենապահպանության նպատակներով, օտարերկրացիներին, որոնք այս կամ այն չափով հետաքրքրված են հայերենի ուսուցմամբ և դասավանդումով: Մա մի կարևոր միջոցառում է, որը կարող է նպաստել լեզվի, մշակույթի,

ազգային արժեքների պահպանմանը, մասնագիտական փոխօգնությանը, ինչպես նաև հայրենիք-սփյուռք կապի ամրապնդմանը»:

Որոշվեց լույս ընծայել այս կարևոր գիտաժողովի նյութերը՝ առանձին ժողովածուի ձևով:

**Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Հ Ո Դ Վ Ա Ծ Ն Ե Ր**

Գալստյան Ա.Ս., Նորակազմ բառերի իմաստաբանական քննության հարցեր.....	3
Գալստյան Ա.Վ., Ակսել Բակունցի «Խաչատուր Աբովյան» վեպի լեզվաոճական մի քանի հարցեր.....	12
Սանթրյան Ա.Ս., Լրացումներ հայերենի երկհնչյունների և վանկի լիակաղապարներում.....	19
Համբարձումյան Վ. Գ., Ստուգաբանական դիտարկումներ...	27

Բ Ա Ն Ա Վ Ե Ճ Ե Վ Ք Ն Ն Ա Ր Կ Ո Ւ Մ

Խաչատրյան Ա.Ս., Արևմտահայերենի նորակազմությունների բառակազմական որոշ առանձնահատկությունների մասին.....	44
Տիոյան Ս.Կ., Նորամուտ օտար բառերի սխալ գործածությունների մասին (ինտեգրացիա, ասոցացիա, մոտիվացիա)	54
Ֆիշենկճեան Ա. Ա., <i>Թեք</i> վերջնաբաղադրիչով բառեր հայերենի մեջ.....	63
Համբարձումյան Վ.Գ., Բաղրամյան Ս.Ե., Խաչիբաբյան Ն.Պ., Սեռանիշ ածանցների արտահայտությունը հայերենում.....	68

Հ Ա Ղ Ո Ր Դ Ո Ւ Մ Ն Ե Ր

Գրիգորյան Գ. Գ., Խոսակցական լեզվում <i>գալ, տալ, լալ</i> բայերի ձևերի ս-ի անկման պատճառների մասին.....	77
Ղամոյան Լ. Հ., Բազմիմաստությունը «Հագուստ» իմաստային-թեմատիկ խմբում.....	85
Սաֆարյան Տ.Վ., Բառիմաստի հետ կապված շեղումները արդի հայերենում.....	93

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության 2002-2020 թվականներին հրատարակված ուսումնասիրությունների մատենագիտական վերլուծություն (ամփոփ նկարագրություն) (կազմ. Գ. Մ. Գրիգորյան)	102
--	-----

Գ Ր Ա Ն Ո Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Խաչատրյան Վ. Մ., Հայոց լեզվի պատմության հարցեր.....	108
Գ Ր Ք Ե Ր Ի Տ Ե Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն	112
Գ Ի Տ Ա Կ Ա Ն Կ Յ Ա Ն Ք	122

СОДЕРЖАНИЕ

С т а т ь и: А. С. Галстян. Вопросы семантического исследования новых слов. -3. А.В. Галстян. Некоторые лингвистические и стилистические вопросы романа А. Бакунца “Хачатур Абовян”- 12. А. М. Сантоян. Дополнения в полных моделях дифтонгов и слога армянского языка- 19. В.Г. Амбарцумян, Этимологические заметки: арм. հերկ- [herk-]< и.-е. *p^(h)erk^(h)o-27. **Д и с к у с с и и о б с у ж д е н и я:** А. С. Хачатрян. О некоторых словообразовательных особенностях неологизмов западноармянского языка - 44. С. К. Тиюян. О неправильном употреблении варваризмов («интеграция», «ассоциация», «мотивация»)- 54. А. А. Фишенкчян. Сложные слова, оканчивающиеся на թէք [t^hek^h] ‘наклонный’ в речи. – 63. В. Г. Амбарцумян, С. Е. Баграмян, Н. П. Хачибабян. Выражение гендерных суффиксов в армянском языке.- 68. **С о о б щ е н и я:** Г.Г. Григорян. О падении суффикса u [s] в глагольных формах գալ [gal], տալ [tal], լալ [lal] в разговорном армянском языке.-77. Л. Г. Гамоян. Полисемия в семантической группе “одежда” в современном армянском языке.- 85. С. В. Сафарян. Смысловые отклонения в восприятии слов в современном армянском языке- 93. **Б и б л о г р а ф и я:** Библиографический анализ исследований, опубликованных в литературном наследии Григора Татеваци в 2002-2020 годах (краткое описание)(Составлено Г. М. Григоряном). –102. **Р е ц е н з и я:** В. Хачатрян. Вопросы истории армянского языка- 108 : **К н и ж н о е о б о з р е н и е** - 112 : **Н а у ч н а я ж и з н ь** - 122.

C O N T E N T S

Articles. A. S. Galstyan. *Issues of Semasiological Study of New Words.*– 3. A.V. Galstyan. Some Linguistic and Stylistic Issues of A. Bakunts “Novel Khachatur Abovian” - 12. A. M. Santoyan. Additions to the Paradigms of Armenian Diphthongs and Syllables - 19. V. G. Hambardzumyan, Etymological Notes: Armenian հերկ- [herk-]< i.e. *p^(h)erk^(h)o-.– 27. **D i s c u s s i o n.** A. S. Khachatryan. On Some Word-Forming Peculiarities of Neologisms in the Western Armenian Language. - 44. S. K. Tioyan. On the Misuse of Barbarisms («integration», «association», «motivation. –54. A. A. Fishenkyan. Compound Words Ending in թէք[t^hek^h] 'inclined' in Speech.-63: V. G. Hambardzumyan, S. E. Baghramyanyan, N.P. Khachibabyan. The expression of gender suffixes in Armenian. –68. **R e p o r t s.** G. G. Grigoryane. On the fall of suffix u[s] in the verb-forms in spoken Armenian. – 77. L. H. Ghamoyan. Polysemy in Semantic Group “Clothes” in Modern Armenian.- 85. S. V. Safaryan. Deviations of word roots in contemporary Armenian. -93. **B i b l i o g r a p h y:** Bibliographic analysis of studies published in the literary heritage of Grigor Tatevatsi in 2002-2020 (brief description)(Compiled by G.M. Grigoryan). - 102. **R e v i e w-** V. Khachatryan. Issues of the history of the Armenian language.-108. **Book reviews**-112. **Science News**-122 .

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը հրատարակում է «Լեզու և լեզվաբանություն» հանդեսը, որի առաջին համարը լույս է տեսել 2003թ.:

Հոդվածները պետք է ուղարկել տպված և համակարգչային տեսքով, 8-10 էջի սահմաններում, տողերի միջակայքը՝ 1,5, տառաչափը՝ 12 և Sylfaen տառատեսակով (ամփոփումները ռուսերեն և անգլերեն՝ Times New Roman): Վերևում նշվում է հեղինակի անունը, ազգանունը, հաստատության անվանումը, հոդվածի վերնագիրը:

Հղումները և գրականության ցանկը պետք է համապատասխանեն:

Խնդրում ենք գրախոսական հոդվածներն ուղարկել գրախոսվող գրքի հետ:

Մեր հասցեն՝ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

ՀՀ, 3750015, Երևան, Լուսավորչի 15

Հեռ.՝ (+374 10) 565 337

Կայքէջ՝ www.language.sci.am

Էլ.փոստ՝ inslang@sci.am

Հանդեսի պատասխանատու քարտուղար՝ meri-sargsyan@mail.ru

К С В Е Д Е Н И Ю

НАН РА институт языка имени Р. Ачаряна издает журнал “Языкязыкознание”, первый номер которого был издан в 2003г.

Статьи следует присылать в виде распечатки и компьютерного набора, объем- в пределах 8-10 машинописных страниц, интервал- 1,5, размер шрифта - 12, шрифт- Sylfaen (резюме на русском и английском- Times New Roman). В начале указываются имя, фамилия, наименование учреждения, заглавие статьи.

Ссылки и список литературы должны соответствовать друг другу.

Просим статьи с отзывом или рецензией прислать с рецензируемой книгой.

Наш адрес: НАН институт языка имени Р. Ачаряна

РА, Ереван, Лусаворича 15

Тел.: (+374 10) 565 337

Веб. сайт: www.language.sci.am

Эл.-почта: inslang@sci.am

Ответственный секретарь: meri-sargsyan@mail.ru

A C K N O W L E D G E M E N T

NAS RA language institute named after H. Acharyan is publishing afresh «Language and linguistics» magazine, the first number of which was published in 2003.

Please, send articles in hard and soft copies, within 8-10 pages, line spacing- 1,5, font size- 12, fonts- Sylfaen (the summary in Russian and English - Times New Roman). Author's name, institution and contact data should be placed in the upper right corner of the title page.

References or footnotes should be adequate to the list of bibliography.

Please, send reviews with the corresponding book.

Our address: NAS language institute named after H. Acharyan

RA, Yerevan, Lusavorich 15

Phone: (+374 10) 565 337

Web page: www.language.sci.am

E-mail: inslang@sci.am

Editorial secretary: meri-sargsyan@mail.ru